• www.prosecutor.am

2024

ՀԱՂՈՐԴՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
ПРАВИТЕЛЬСТВО РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ



2024

ՆԱԽԱԲԱՆ



Հայաստանի Հանրապետության հարգելի՛ քաղաքացիներ,

Հարգելի՛ գործընկերներ,

Երրորդ տարին է, որ պատիվ ունեմ Ձեզ ներկայացնելու Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության տարեկան հաղորդումը:

Հաղորդման մեջ շարադրված են Դատախազության՝ որպես միասնական համակարգի, 2024 թվականի գործունեության դինամիկան և արդյունքները:

Հաղորդումը ներառում է՝

- պետական (համայնքային) շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում կատարված հետևողական աշխատանքը, պրոֆեսիոնալ ուսումնասիրություններն ու դատարան ներկայացված հայցերը, պետությանն ու համայնքներին վերադարձված գույքերն ու դրամական միջոցները,
- հանցավորության ու կոռուպցիայի դեմ պայքարը՝ քրեական վարույթի նախաձեռնումից ու դատարանում մեղադրանքի պաշտպանությունից մինչև պատիժների ու հարկադրանքի միջոցների կատարման նկատմամբ հսկողություն,
- զինվորական ծառայության ու պաշտպանության ոլորտներում հանցագործությունների կանխումը, բացահայտումն ու պատժումը, ինչպես նաև զինված ուժերի նյութական ապահովության նկատմամբ ոտնձգությունները բացահայտելուն ուղղված՝ պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ուսումնասիրությունները, պատճառված վնասի վերականգնումը:

Դատախազությունն ականջալուր է իրեն հասցեագրված յուրաքանչյուր բողոքի, պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ բառապաշարով շարադրված յուրաքանչյուր դիմումի, հաղորդման, խնդրանքի ու պահանջի: Դրանք ուսումնասիրվում են, անհրաժեշտության դեպքում՝ քննարկվում քաղաքացիների հետ ընդունելությունների ընթացքում և, իրավական լուծման հնարավորության դեպքում, Դատախազության լիազորությունների շրջանակներում՝ ստանում լուծում:

Լուծման ելակետը տուժողի իրավունքների պաշտպանությունն է, իսկ հանրության վստահությունը՝ Դատախազության գործունեության արդյունավետության գնահատման առաջնային ցուցիչներից:

Դատախազությունը համառ է ու անզիջում, եթե իրավական հարցադրումը կապված է հափշտակված հանրային բարիքի, պետության ու համայնքի սեփականությունից ապօրինաբար դուրս բերված գույքի վերադարձին:

Դատախազությունը կարևորում է միջազգային հարթակներում և օտարերկրյա գործընկերների հետ պրոֆեսիոնալ շփումներում փոխադարձ վստահության վրա հիմնված և շարունակաբար կատարելագործվող փոխգործակցությունը:

Դատախազությունը, ապահովելով Հայաստանի Հանրապետության լավագույն շահը, իրավական օգնության շրջանակներում հետևողական է Հայաստանից դուրս բերված ակտիվների սառեցման ու վերադարձի աշխատանքներում:

Լիահույս եմ, որ Դատախազության 2024 թվականի գործունեության մասին հաղորդումը բոլոր գործընկերների՝ հատկապես տեսաբան ու պրակտիկ իրավաբանների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և լրագրողների համար կդառնա ուսումնասիրության վստահելի աղբյուր:

Եզրափակելով խոսքս՝ շնորհակալություն եմ հայտնում դատախազներին, Դատախազության աշխատակիցներին և իրավապահ ու դատական համակարգերի բոլոր այն գործընկերներին, ում սրտացավ և նվիրված աշխատանքով նախորդ տարում գրանցել ենք շոշափելի արդյունքներ՝

- Պետության և համայնքների սեփականության իրավունքն է վերականգնվել մի քանի միլիարդ դրամը գերազանցող գույքերի նկատմամբ:
- Ստեղծվել է Վերականգնված միջոցների միասնական հաշիվ, որտեղ վերադարձվում են պետությունից և համայնքներից հափշտակված դրամական միջոցները:
- Մեղադրական եզրակացությամբ դատարան է հանձնվել 40.6%-ով ավելի վարույթ (այդ թվում՝ 8 ամսից ավելի քննվող), քան 2023 թվականին:
- Դատարանում քննվել և ավարտվել է 93.5%-ով ավելի գործ, քան 2023 թվականին, իսկ արդարացման դատավճիռներ են կայացվել դատարանում ավարտված գործերի ընդամենը 1.8%-ով:

Դատախազությունը՝ որպես միասնական համակարգ, ձգտում է կարգապահության, բարեվարքության ու պրոֆեսիոնալիզմի բարձր նշաձողի: Այդ նշաձողին հասնելու համար անհրաժեշտ որակներից է անձնազոհությունը: Անձնազոհությունը հասու է նվիրյալներին: Դատախազությունում աշխատում են և աշխատելու են նվիրյալներ՝ հանուն Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բարօրության:

Հայաստանի Հանրապետության

գլխավոր դատախազ **Աննա Վարդապետյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Բովանդակություն 4

1.Հանցավորության կառուցվածք, շարժընթաց. 5

հանցագործությունների դեմ պայքար, հանցավորության հակազդում

2.Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն 26

3.Մեղադրանքի պաշտպանություն և դատական ակտերի բողոքարկում 62

4.Ցինվորական դատախազության գործունեություն 82

5.Կոռուպցիայի դեմ պայքար 93

6.Պետական և համայնքային շահերի պաշտպանություն 113

7.Սպօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում 136

8.Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն 144

9.Միջազգային - իրավական համագործակցություն և իրավական ապահովում 158

10.Քաղաքացիների ընդունելություն, դիմումների ընթացք և հանրային կապեր 184

1

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԾԱՐԺԸՆԹԱՑ.

հանցագործությունների դեմ պայքար, հանցավորության հակազդում

2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է[1] հանցագործության 40.232 դեպք (2023 թվականին՝ 40.666 դեպք), որոնցից 18.397-ը (2023 թվականին՝ 20.231 դեպք)՝ Երևան քաղաքում: Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերը նվազել են 434-ով կամ 1.1%-ով:

2024 թվականին արձանագրվել է ոչ մեծ ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունների աճ: Միաժամանակ, նվազել են միջին ծանրության և ծանր հանցագործությունների դեպքերը:

2023 թվականի համեմատությամբ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքերն աճել են 337-ով կամ 1.7%-ով (2023 թվականին՝ 20.024 դեպք, 2024 թվականին՝ 20.361 դեպք), միջին ծանրության հանցագործությունների դեպքերը նվազել են 595-ով կամ 4.6%-ով (2023 թվականին՝ 12.848 դեպք, 2024 թվականին՝ 12.253 դեպք), ծանր հանցագործությունների դեպքերը նվազել են 598-ով կամ 9.8%-ով (2023 թվականին՝ 6116 դեպք, 2024 թվականին՝ 5518 դեպք), իսկ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերն աճել են 422-ով կամ 25.1%-ով (2023 թվականին՝ 1678, 2024 թվականին՝ 2100 դեպք):

ՏԱՐԵԹԻՎԸ	ՈՉ ՄԵԾ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ	ՄԻՋԻՆ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ	ԾԱՆՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ	ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԾԱՆՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ
2023	20.024	12.848	6116	1678
2024	20.361	12.253	5518	2100
աճ/ նվազում	+337	-595	-598	+422
	+1.7%	-4.6%	-9.8%	+25.1%

Առանձնապես ծանր հանցագործությունների 2100 դեպքերից 1502-ը հանկարծամահությունների դեպքերն են (2023 թվականին գրանցված առանձնապես ծանր՝ 1678 հանցագործություններից հանկարծամահությունների դեպքերը կազմել են 1132): Այլ խոսքով, եթե առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը ներկայացվեն առանց հանկարծամահությունների թվերի, ապա կարող ենք փաստել, որ 2024 թվականին գրանցվել է առանձնապես ծանր հանցագործությունների 598 դեպք՝ նախորդ տարվա 546-ի դիմաց (աճը՝ 52 դեպք կամ 9.5%):

Հանցագործության 40.232 դեպքի բացարձակ մեծամասնությունը՝ 81.1%-ը, ոչ մեծ (20.361 դեպք կամ դեպքերի 50.6%) և միջին ծանրության (12.253 դեպք կամ դեպքերի 30.5%-ը) հանցագործություններն են, այսինքն՝ նվազ հասարակական վտանգավորություն ներկայացնող հանցագործությունները:

Առանձնապես ծանր հանցագործություններն ընդհանուր հանցագործությունների զանգվածում կազմում են 5.2% (2023 թվականին՝ 4.1%), իսկ ծանր հանցագործությունները՝ 13.7% (2023 թվականին՝ 15.0%):

1. Հանցագործությունների դեպքերին վերաբերող թվային ցուցանիշները ներկայացված են ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տրամադրած տվյալների հիման վրա՝ հիմք ընդունելով «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ ոստիկանությունը պարտավոր է կառավարության սահմանած կարգով ընդունել, գրանցել և հաշվառել հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումները ու հաղորդումները, դրանց տալ համապատասխան ընթացք: Նշված կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի 1495-Ն որոշմամբ:

2014-2024 թվականների հանցավորության կառուցվածքը վկայում է, որ ընդհանուր հանցագործությունների կազմում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշիռն արտահայտող միջին տարեկան տոկոսային ցուցանիշը կազմել է 17.5%:

Մինչդեռ, 2024 թվականին ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցագործությունների 19%-ը: Վերջին 10 տարվա ընթացքում նշված ցուցանիշից ավելի բարձր ցուցանիշ արձանագրվել է 2014 թվականին՝ 19.9%, 2015 թվականին՝ 20.0% և 2023 թվականին՝ 19.1%:

Ստորև ներկայացվում է 2014-2024 թվականների հանցավորության կառուցվածքը՝ ըստ հանցագործությունների վտանգավորության աստիճանի.

Տարեթիվը	Հանցագործությունների ընդհանուր թիվը	Ոչ մեծ ծանրության հանցագործություններ		Միջին ծանրության հանցագործություններ		Ծանր հանցագործություններ		Առանձնապես ծանր հանցագործություններ		Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ	
2014	17.546	9.981	56.9%	4.073	23.2%	3.319	18.9%	173	1.0%	3.492	19.9%
2015	17.043	9.185	53.9%	4.455	26.1%	3.238	19.0%	165	1.0%	3.403	20.0%
2016	18.764	10.757	57.3%	4.728	25.2%	3.081	16.4%	198	1.1%	3.279	17.5%
2017	20.285	12.380	61.0%	5.012	24.7%	2.729	13.4%	164	0.8%	2.893	14.3%
2018	22.551	11.989	53.2%	6.700	29.7%	3.638	16.1%	224	1.0%	3.862	17.1%
2019	26.850	14.613	54.4%	7.463	27.8%	4.490	16.7%	284	1.1%	4.774	17.8%
2020	26.468	14.629	55.3%	7.466	28.2%	4.077	15.4%	296	1.1%	4.373	16.5%
2021	30.245	17.460	57.7%	7.988	26.4%	4.447	14.7%	350	1.2%	4.797	15.9%
2022	37.612	21.281	56.6%	10.371	29.8%	5.080	14.2%	880	2.3%	5.960	15.8%
2023	40.666	20.024	49.3%	12848	31.6%	6.116	15.0%	1.678	4.1%	7.794	19.1%
2024	**40.232**	**20.361**	**50.6%**	**12.253**	**30.5%**	**5.518**	**13.7%**	**2.100**	**5.2%**	**7.618**	**18.9%**

2024 թվականին 3%-ով աճել են մարդու դեմ ուղղված հանցագործությունները (2023 թվականին՝ 7138 դեպք, 2024 թվականին՝ 7353 դեպք): 2.2%-ով նվազել են հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները (2023 թվականին՝ 15.847 դեպք, 2024 թվականին՝ 15.502 դեպք), 1.3%-ով՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները (2023 թվականին՝ 11.420 դեպք, 2024 թվականին՝ 11.271 դեպք), 3.6%-ով՝ պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները (2023 թվականին՝ 4704 դեպք, 2024 թվականին՝ 4536 դեպք):



Հաշվետու ժամանակահատվածում 7.6%-ով աճել են դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու (2023 թվականին՝ 1062 դեպք, 2024 թվականին՝ 1143 դեպք), 89.5%-ով՝ մարդկանց թրաֆիքինգի հանցագործությունները (2023 թվականին՝ 19 դեպք, 2024 թվականին՝ 36 դեպք), 11.9%-ով՝ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները (2023 թվականին՝ 176 դեպք, 2024 թվականին՝ 197 դեպք), 111.4%-ով՝ թմրամիջոցների մաքսանենգության հանցագործությունները (2023 թվականին՝ 210 դեպք, 2024 թվականին՝ 444 դեպք), 9.9%-ով՝ խարդախության հանցագործությունները (2023 թվականին՝ 2472 դեպք, 2024 թվականին՝ 2716 դեպք), 25.1%-ով՝ համակարգչային տեխնիկայի միջոցով հափշտակությունները (2023 թվականին՝ 630 դեպք, 2024 թվականին՝ 788 դեպք):



Հաշվետու ժամանակահատվածում 22.9%-ով **նվազել են** հրազեն, ռազմամթերք պատրաստելու և դրանց ապօրինի շրջանառության դեպքերով (2023 թվականին՝ 1179 դեպք, 2024 թվականին՝ 909 դեպք), 11.4%-ով՝ ՃԵԿ կանոնները խախտելու հանցագործությունները (2023 թվականին՝ 2185 դեպք, 2024 թվականին՝ 1936 դեպք), 33.2%-ով՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը (2023 թվականին՝ 4564 դեպք, 2024 թվականին՝ 3047 դեպք), 14.9%-ով կողոպուտի դեպքերը (2023 թվականին՝ 148 դեպք, 2024 թվականին՝ 126 դեպք), 7%-ով՝ գողության դեպքերը (2023 թվականին՝ 6868 դեպք, 2024 թվականին՝ 6390 դեպք), 14.9%-ով՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերը (2023 թվականին՝ 556 դեպք, 2024 թվականին՝ 473 դեպք):

15 դեպքով կամ 16%-ով ավելացել են հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերը:

2014-2024 թվականների ընթացքում հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի թիվը ներկայացվում է ստորև.

Հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքեր



Ինչպես նշվեց, 2024 թվականին հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 40.232 դեպք, այսինքն՝ 100.000 բնակչին «բաժին է ընկնում» 1308 դեպք (2023 թվականին՝ 1360 դեպք):

Հանցագործությունների դեպքերի նվազմանը զուգընթաց՝ 2024 թվականին արձանագրվել է հանցագործությունների բացահայտման ցուցանիշի աճ:

Այսպես, համաձայն ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2023 թվականին[2] հանրապետությունում գրանցված և բացահայտման տոկոսում հաշվվող հանցագործությունների 40.227 դեպքից (2023 թվականին՝ 40.598 դեպք) բացահայտվել է 8881-ը (2023 թվականին՝ 7591-ը), չի բացահայտվել 31.346-ը (2023 թվականին՝ 33.007-ը):

Այսինքն՝ 2024 թվականին բացահայտման ցուցանիշը կազմել է 22.1%՝ 2023 թվականի 18.7%-ի դիմաց: Այսպիսով, 2023 թվականի համեմատ, 2024 թվականին բացահայտման ցուցանիշն աճել է 3.4%-ով:[3]

2023 թվականին նվազել է ինչպես միջին ծանրության, այնպես էլ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը:

Այսպես.

Միջին ծանրության հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 16.2%, 2023 թվականի՝ 18%-ի դիմաց, ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 11%, 2023 թվականի՝

2. Հարկ է նշել, որ 2023 թվականից սկսած՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում վիճակագրությունը վարվում է միայն հաշվետու ժամանակահատվածում գրանցված հանցագործությունների վերաբերյալ, ի տարբերություն նախորդ տարիների, երբ բացահայտումների վիճակագրությունը վարվում էր ըստ քրեական հետապնդման մարմինների վարույթում եղած քրեական գործերի և նյութերի:
3. Հարկ է նշել, որ բացահայտման ցուցանիշները ներկայացված են ըստ նախաքննության արդյունքների մասին տվյալների (որպես մեղադրյալ ներգրավված լինելու մասին տվյալների):

11.9%-ի դիմաց, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 8.3%՝ 2023 թվականի 9.5%-ի դիմաց:

2024 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 7353 դեպք, 2023 թվականի 7138-ի դիմաց. աճը կազմում է 215 դեպք կամ 3%: Մարդու դեմ ուղղված հանցագործությունների 7353 դեպքից 3007-ը կամ 40.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 4346-ը կամ 59.1%-ը՝ ՀՀ մարզերում (2023 թվականի նույն ցուցանիշների հարաբերակցությունը կազմել է 36.6% և 63.4%): 2024 թվականին արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի բացահայտման ցուցանիշի նվազում. 2024 թվականին արձանագրված՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների՝ բացահայտման ցուցիչում հաշվի առնվող 7350 դեպքից բացահայտվել է 1066-ը կամ 14.5%-ը՝ 2023 թվականից 1.3%-ով պակաս, որը ընդհանուր հանցավորության բացահայտման տոկոսային ցուցանիշից ցածր է 7.6%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է սպանության դեպքերի աճ՝ 8-ով կամ 14.5%-ով (2023 թվականին՝ 55 դեպք, 2024 թվականին՝ 63 դեպք). Երևան քաղաքում սպանության դեպքերը նվազել են 7-ով կամ 32%-ով:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակահատվածում և նախորդ 10 տարիներին հանրապետությունում արձանագրված սպանությունների վիճակագրությունը.

2024 թվականի և նախորդ 10 տարիներին հանրապետությունում արձանագրված սպանություններ

2014-2024 թվականներին տարեկան կատարված սպանությունների միջին թիվը կազմել է 53:

Սպանության փորձի դեպքերը, 2023 թվականի համեմատ, նվազել են 4-ով կամ 6.2%-ով (2023 թվականին՝ 65 դեպք, 2024 թվականին՝ 61 դեպք): Սպանության նախապատրաստության դեպքերը նվազել են 2-ով կամ 50%-ով (2023 թվականին՝ 4 դեպք, 2024 թվականին՝ 2 դեպք):

Գլխավոր դատախազությունում սպանության (այդ թվում՝ չավարտված) դեպքերի կապակցությամբ դատախազական լիազորությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները առաջնահերթություն են: 2024 թվականին սպանության, այդ թվում՝ չավարտված սպանությունների և առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթները քննարկվել են Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի, ապա՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի մոտ:

Սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները 2024 թվականին աճել են 21-ով կամ 11.9%-ով՝ կազմելով 197 դեպք՝ 2023 թվականին արձանագրված 176-ի փոխարեն:

Մարդկանց թրաֆիքինգի դեպքերն աճել են 17-ով կամ 89.5%-ով (2023 թվականին՝ 19 դեպք, 2024 թվականին՝ 36 դեպք):

Քանակական առումով աճ է արձանագրվել նաև՝

- առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքերով. աճը կազմել է 38 դեպք կամ 7 % (2023 թվականին՝ 522 դեպք, 2024 թվականին՝ 560 դեպք),
- առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերով. աճը կազմել է 11 դեպք կամ 3.7 % (2023 թվականին՝ 299 դեպք, 2024 թվականին՝ 310 դեպք):
- առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերով. աճը կազմել է 31 դեպք կամ 12.9 % (2023 թվականին՝ 240 դեպք, 2024 թվականին՝ 271 դեպք),

Ֆիզիկական ներգործության դեպքերով 184-ով կամ 6.8%-ով նվազում է արձանագրվել:

Մարդու դեմ ուղղված ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով քննվող քրեական վարույթների քննարկումների և ստուգման ընթացքում պարզվել է, որ դեպքի վայրի զննության ընթացքում հաճախ անմիջապես չեն արձանագրվում կարևոր ապացույցների վերաբերյալ տվյալներ, օրինակ՝ տեսախցիկների առկայությունը, բացի մատնահետքերից, որպես կանոն,

մարդու հետքերի այլ նմուշներ փնտրելուն ուղղված գործողություններ չեն կատարվում, լուսանկարում կամ չի կատարվում կամ կատարվում է առանց կրիմինալիստիկական կանոնների պահպանման: Դեպքի վայրում գտնվող ականատեսներին ժամանակին չեն հրավիրում հարցաքննության, իսկ հետո դժվարանում է նրանց կամ նրանց գտնվելու տեղի պարզումը:

Ընդ որում, հանդիպում են դեպքեր, երբ քննչական գործողության կատարման արդյունքում տեսանկարահանող սարքավորումների հայտնաբերումից հետո, նույն քննչական գործողության կատարման ընթացքում կամ դրանից հետո կատարված հարցաքննությամբ տեսանկարահանող սարքավորումներին տիրապետող անձինք հայտնում են, որ դրանք չեն աշխատում, դրանցով կատարած տեսագրությունները չեն պահպանվել կամ աշխատում են ուղիղ դիտարկման ռեժիմով:

Բացի այդ, առկա են նաև դեպքեր, երբ քննության ընթացքում դատավարության մասնակիցների կողմից վարույթն իրականացնող մարմնին են ներկայացվում դեպքի վայրում տեղադրված տեսախցիկների՝ գործի համար նշանակություն ունեցող տեսանյութեր, իսկ մինչ այդ կատարված դեպքի վայրի զննության ընթացքում տեսանկարահանող սարքերի առկայություն արձանագրված չի լինում, ձեռնարկված չեն լինում միջոցներ՝ դրանցով կատարված տեսագրությունները ժամանակին ստանալու ուղղությամբ, իսկ հետագայում արդեն դրանք լիարժեք պահպանված չեն լինում: Հետևաբար, բոլոր դեպքերում պետք է ապահովվի անհրաժեշտ հետևողականություն մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության արդյունավետությունը բարձրացնելու, համապատասխան գործողությունների ժամանակին, որակյալ և պլանավորված իրականացումն ապահովելու ու նմանատիպ իրավիճակները բացառելու հարցում:

Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ 2023-2024 թվականների տվյալները[4] (ներառյալ՝ սուբյեկտային կազմը)՝ ստորև ներկայացված աղյուսակում.

4. Աղյուսակում հաշվառման մեթոդաբանության փոփոխության պատճառով բռնության ենթարկվածի և բռնարարի սոցիալական կապի մասին տվյալները համեմատելի չեն. սոցիալական կապերն արտահայտող տողերում առկա տվյալների քանակը դեպքերի քանակից ավել է: Պատճառն այն է, որ 2024 թվականին արձանագրված դեպքերով, եթե բռնությունը եղել է երկու սուբյեկտի միջև, այն հաշվարկվել է որպես երկու. սուբյեկտի կողմից կիրառված բռնություն, սակայն արձանագրվել է որպես մեկ դեպք: Այս խնդիրը ընտանեկան և կենցաղային բռնությունների մասով կշտկվի, քանի որ 2025 թվականի հունվարի 24-ից գործարկվել է Հայաստանում ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հաշվառման առաջին թվայնացված միասնական համակարգը:

ՀՀ ՔՕ հոդվածը	Դեպքերի թիվը		Կենակիցը		Ամուսինը կնոջը		Կինը ամուսնուն		Նախկին ամուսինը /կինը		Ծնողը զավակին		Զավակը ծնողին		Այլ	
	2023	2024	2023	2024	2023	2024	2023	2024	2023	2024	2023	2024	2023	2024	2023	2024
155	3	13		1	1	1		2	1	1		1		5	1	5
162	5	6			1	3			1						2	3
166	8	15			3	3			1			1	1	3	3	9
167	10	20			3	10			1	1	2	1	2	1	2	10
170		1		1												
171	47	120		2	26	51		5	3	8	2	10	8	11	8	40
172		1				1										
173		2												1		1
176	1	4		1	1	2						1			10	
188		1														
189		2										2				
191		5				1				1		1				
192	4	10			1	2				1	2		1	1		6
194	46	166		7	14	42		1	12	38	2	6	8	13		65
2003թ. 137.1	4				2					88					2	
195	372	934	2	34	208	415	2	19	25	4	35	75	23	105	77	242
196	1	22		2		7			1							2
198	4	10			3	3					1	1				6
199		5		1		2										3
200		9		1		2										7
204		7				2										
252		1								1						
255	1												1			
260		1														
264		1												1		
300	1	1									1			1		
508	1	3				3									1	
	508	1360	2	50	263	550	2	27	45	143	45	99	44	142	106	399

Ընտանիքում բռնության դեպքերի գերակշիռ մասը ֆիզիկական ներգործության դեպքեր են. 2024 թվականին արձանագրվել է ֆիզիկական ներգործության 934 դեպք՝ 2023 թվականի 372-ի դիմաց. դեպքերն աճել են 562-ով կամ 151%-ով:

Ընտանիքում բռնության դեպքերի մյուս մասը հոգեկան ներգործության դեպքերն են. 2024 թվականին արձանագրվել է հոգեկան ներգործության 166 դեպք՝ 2023 թվականի 46-ի դիմաց. աճը կազմել է 120 դեպք կամ 261%:

2024 թվականին արձանագրված ընտանեկան և կենցաղային բռնության 1360 դեպքից 1100-ը կամ 81%-ը, իսկ 2023 թվականի 508 դեպքից 418-ը կամ 82%-ը ֆիզիկական և հոգեկան ներգործության դեպքերն են:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է ընտանեկան և կենցաղային բռնություն հանդիսացող սպանության (2023 թվականին՝ 3 դեպք, 2024 թվականին՝ 13 դեպք) և առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերի աճ (2023 թվականին՝ 8 դեպք, 2024 թվականին՝ 15 դեպք):

Ընտանիքում բռնության դեպքերի կազմն արտահայտող գրաֆիկը ստորև՝



Դատախազությունը մշտապես կարևորել է ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում այլ իրավասու պետական մարմինների հետ համագործակցությունը: Գլխավոր դատախազության ներկայացուցիչը 2024 թվականին շարունակել է ապահովել ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի վերաբերյալ քննարկումներում Դատախազության ներկայացվածությունը, մշտապես կապ է ապահովել Դատախազության տարածքային ստորաբաժանումների և Ոստիկանության ներկայացուցչի հետ՝ ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ կոնկրետ քրեական վարույթներով իրավիճակներն ու խնդիրները քննարկելու նպատակով:

Բացի այդ, ընտանիքում բռնության դեպքերի կապակցությամբ, ինչպես կոնկրետ իրավիճակներով, այնպես էլ միասնական քրեական քաղաքականության մշակման անհրաժեշտությամբ պայմանավորված, հաճախ են առաջանում խնդիրներ, որոնք պահանջում են օպերատիվ քննարկում՝ Դատախազության, Քննչական կոմիտեի և Ներքին գործերի նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ: Խնդիրներին առավել արդյունավետ և օպերատիվ լուծում տալու նպատակով՝ նշված մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ 2025 թվականի հունվարի 17-ին ձևավորվել է աշխատանքային խումբ:

Դրանից բացի, 2024 թվականին Արդարադատության ակադեմիայում 35 դատախազ մասնակցել է «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարը» (այդ թվում՝ բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու) թեմայով վերապատրաստումներին:

2024 թվականի ընթացքում, 2023 թվականի համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 149 դեպքով կամ 1.3%-ով նվազում (2023 թվականին՝ 11.420 դեպք, 2024 թվականին՝ 11.271 դեպք), իսկ Երևան քաղաքում դեպքերը նվազել են 298-ով կամ 4.3%-ով (2023 թվականին՝ 6982 դեպք, 2024 թվականին՝ 6684 դեպք):

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները, ընդհանուր առմամբ, 2023 թվականին կրկին ունեցել են նվազման միտում: 2024 թվականին արձանագրվել է որոշ հանցատեսակների աճ, իսկ առանձին դեպքերում նաև՝ էական աճ: Մասնավորապես՝ աճ է արձանագրվել սեփականության դեմ ուղղված հանցագործություններից խարդախության՝ 244-ով կամ 9.9%-ով (2023 թվականին՝ 2472 դեպք, 2024 թվականին՝ 2716 դեպք), համակարգչային հափշտակության՝ 158-ով կամ 25.1%-ով (2023 թվականին՝ 630 դեպք, 2024 թվականին՝ 788 դեպք), սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների՝ 15-ով կամ 1.9%-ով (2023 թվականին՝ 807 դեպք, 2024 թվականին՝ 822 դեպք) դեպքերով:

Հաշվետու ժամանակահատվածում նվազում է արձանագրվել ավազակության՝ 7-ով կամ 9.2%-ով (2023 թվականին՝ 76 դեպք, 2024 թվականին՝ 69 դեպք), կողոպուտի՝ 22-ով կամ 14.9%-ով (2023 թվականին՝ 148 դեպք, 2024 թվականին՝ 126 դեպք), գողության՝ 478-ով կամ 7%-ով (2023 թվականին՝ 6868 դեպք, 2024 թվականին՝ 6390 դեպք), բնակարանային գողությունների՝ 9-ով կամ 1%-ով (2023 թվականին՝ 889 դեպք, 2024 թվականին՝ 880 դեպք), վստահված գույքի հափշտակության՝ 58-ով կամ 14.1%-ով (2023 թվականին՝ 410, 2024 թվականին՝ 352) դեպքերով:

Հաշվետու տարում սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կազմել են հանրապետությունում արձանագրված դեպքերի ավելի քան 28%-ը:

Հայաստանի Հանրապետությունում սեփականության դեմ ուղղված հանցագործություններով հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործությունների թվի նվազմանը զուգահեռ, արձանագրվել է դրանց բացահայտման ցուցանիշի նվազում, մասնավորապես՝ 2024 թվականին նշված ցուցանիշը կազմել է 7.5%՝ ի տարբերություն 2023 թվականի 9.7%-ի:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունում հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է 6 հանցատեսակների բացահայտման նվազում, մասնավորապես՝ պետական կամ հանրային գույքի հափշտակության դեպքերից բացահայտվել է 13.1%-ը՝ 2023 թվականի 13.6%-ի համեմատ, անձնական գույքի հափշտակության դեպքերից բացահայտվել է 8.1%-ը՝ 2023 թվականի 10.4%-ի համեմատ, գողության դեպքերից բացահայտվել է 8.2%-ը՝ 2023 թվականի 11%-ի համեմատ, բնակարանային գողության դեպքերից բացահայտվել է 7%-ը՝ 2023 թվականի 11.8%-ի համեմատ, խարդախության դեպքերից բացահայտվել է 5.2%-ը՝ 2023 թվականի 7.4%-ի համեմատ, սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերից բացահայտվել է 4.3%-ը՝ 2023 թվականի 6%-ի համեմատ:

Արձանագրվել է 5 հանցատեսակների բացահայտման աճ, մասնավորապես՝ ավազակության դեպքերից բացահայտվել է 43.5%-ը՝ 2023 թվականի 22.4%-ի համեմատ, կողոպուտի դեպքերից բացահայտվել է 27.8%-ը՝ 2023 թվականի 20.9%-ի համեմատ, վստահված գույքի հափշտակության դեպքերից բացահայտվել է 17.3%-ը՝ 2023 թվականի 14.6%-ի համեմատ, համակարգչային հափշտակությունների դեպքերից՝ 2.5%-ը՝ 2023 թվականի՝ 1.7%-ի համեմատ, ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելու դեպքերից բացահայտվել է 25%-ը՝ 2023 թվականի 22.2%-ի համեմատ:

2024 թվականի ընթացքում էական փոփոխություն է տեղի ունեցել համակարգչային հափշտակությունների դեպքերի շարժընթացում՝ 2023 թվականի համեմատությամբ դեպքերն աճել են 158-ով կամ 25.1%-ով, դեպքերի աճին զուգահեռ՝ աճել է նշված հանցատեսակի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 2.5% նախորդ տարվա 1.7%-ի համեմատ: Հանրապետությունում գրանցվել է համակարգչային հափշտակությունների 788 դեպք՝ 2023 թվականի 630-ի համեմատ:

Նշված դեպքերի կեսից ավելին՝ 428-ը (ընդհանուր համակարգչային հափշտակությունների դեպքերի 54.3%-ը) կատարվել է Երևան քաղաքում, որտեղ դեպքերն աճել են 47-ով կամ 12.3%-ով:

Այս հանցատեսակի աճը պայմանավորված է համակարգչային միջոցների և ծրագրերի զարգացմամբ, ֆինանսական տարատեսակ ծառայություններ մատուցելու ոլորտում համակարգչային նորարարությունների ներդրմամբ, դրան զուգահեռ՝ այդ ծառայությունն ապահովող ծրագրերում թերությունների առկայությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված եղանակով հափշտակությունների շարունակական աճը պայմանավորված է նաև դեպքերի վերաբերյալ տուժողների իրազեկված չլինելու, բանկոմատային քարտերի օգտագործման կանոններին բավարար չափով չտիրապետելու, դրանց վավերապայմանները հանցավորներին վստահելու հանգամանքներով:

Վերոգրյալի համատեքստում, պարբերաբար, տարբեր եղանակներով, այդ թվում՝ լրատվամիջոցներով, Դատախազության կողմից քաղաքացիներն իրազեկվել են այն մասին, որ ոչ մի դեպքում այլ անձանց չտրամադրեն իրենց բանկոմատային քարտերի վավերապայմանները՝ դրանց վրա առկա թվերը:

Դրան զուգահեռ, նշված հանցատեսակի աճը պայմանավորված է նաև նրանով, որ բանկային գործառնությունների կատարման գործընթացներում ներառվել է առցանց եղանակով վարկեր ձևակերպելու, գումարներ փոխանցելու և այլ գործարքներ կատարելու հնարավորություն, ինչին զուգահեռ բավարար չափով չեն կատարելագործվել բանկերի էլեկտրոնային համակարգերի վերահսկողական մեխանիզմները:

Վերոգրյալի համատեքստում պարբերաբար տարբեր եղանակներով (լրատվամիջոցներ և այլն) քաղաքացիներն իրազեկվում են՝ ինչպես նաև բարելավել բանկային վերահսկողական մեխանիզմներն ու վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգերը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տարի նշված հոդվածով քննված գրեթե բոլոր վարույթները բազմադրվագ են: Մասնավորապես, 2024 թվականի ընթացքում մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված մեկ քրեական վարույթ ներառել է համակարգչային տեխնիկայի միջոցով հափշտակության **7882** դրվագ, մեկ այլ քրեական վարույթ՝ **1404** դրվագ, մեկ այլ քրեական վարույթ՝ **712** դրվագ և այլն:

2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների 15.502 դեպք՝ նախորդ տարվա 15.847 դեպքի դիմաց, որից 6227-ը կամ 40.2%-ը՝ Երևան քաղաքում (2023 թվականին՝ 7846, նվազում 20.6%-ով), իսկ 9275-ը կամ 59.8%-ը՝ հանրապետության մարզերում (2023 թվականին՝ 8001, աճ 15.9%-ով):

2023 թվականի համեմատությամբ նշված հանցագործությունների դեպքերը նվազել են 345-ով կամ 2.2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում նշված դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է 38.7%՝ 2023 թվականի 27.5%-ի փոխարեն:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի վիճակագրական տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում զգալիորեն նվազել են ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործությունների դեպքերը: Եթե 2023 թվականին արձանագրվել է 2185 դեպք, ապա 2024 թվականին՝ 1936 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 249-ով կամ 11.4%-ով: Բացահայտումը կազմել է 38.9%՝ նախորդ տարվա 36.4%-ի դիմաց:

Նվազել են նաև մահվան ելքով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերը: Եթե 2023 թվականին արձանագրվել է մահվան ելքով 204 դեպք, ապա 2024 թվականին՝ 174 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 30-ով կամ 14.7%-ով: Բացահայտումը կազմել է 16.7%՝ նախորդ տարվա 14.2% -ի դիմաց:

2024 թվականի ընթացքում հանրապետությունում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործությունների 1936 դեպքից՝ 754-ը կամ շուրջ 39%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 1182-ը կամ շուրջ 61%-ը՝ հանրապետության մարզերում:

Հարկ է նշել նաև, որ Երևան քաղաքի տարածքում 2024 թվականի ընթացքում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործությունների դեպքերը նվազել են 119-ով կամ 13.6%-ով, միևնույն ժամանակ մահվան ելքով դեպքերի թիվն աճել է 1-ով կամ 2.3%-ով:

Մարզերի գերակշիռ մեծամասնության տարածքում 2024 թվականի ընթացքում արձանագրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ կատարված հանցագործության դեպքերը նվազել են, բացառություն են կազմում Արագածոտնի և Լոռու մարզերը, որտեղ դեպքերի թիվն աճել է համապատասխանաբար 14.8% և 33.1%-ով:

Մահվան ելքով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերի թիվը հանրապետության մարզերի տարածքում նվազել է 31-ով կամ 19.25%-ով: Բացառություն է կազմում միայն Արագածոտնի մարզը, որի տարածքում հիշյալ դեպքերի թիվն աճել է 6-ով կամ 60%-ով:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 4314 ճանապարհատրանսպորտային պատահար (2023 թվականին՝ 4614 պատահար), որի հետևանքով մահացել է 333 անձ (2023 թվականին՝ 378),

իսկ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 6116-ը (2023 թվականին՝ 6538-ը): Նշված պատահարների թիվը 2024 թվականին, 2023 թվականի համեմատությամբ նվազել է 300-ով կամ 6.5%-ով, մահացած անձանց թիվը՝ 45-ով կամ 11.9%-ով, իսկ վնասվածքներ ստացած անձանց թիվը՝ 422-ով կամ 7.4%-ով:

Ստորև ներկայացնում ենք 2014-2024 թվականներին Հայաստանի Հանրապետությունում հաշվառված ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ տվյալները՝ աղյուսակով.

Տարեթիվ	Քանակ			Աճ / նվազում		
	ՃՏՊ	Զոհ	Վիրավոր	ՃՏՊ	Զոհ	Վիրավոր
2014	3156	297	4479	+ 332	- 19	+ 485
2015	3399	346	4738	+ 243	+ 49	+ 259
2016	3203	267	4451	- 196	- 79	- 287
2017	3535	279	5179	+ 332	+ 12	+ 728
2018	4111	343	5950	+ 576	+ 64	+ 771
2019	4799	341	6801	+ 688	- 2	+ 851
2020	4016	348	5846	- 783	+ 7	- 955
2021	4604	368	6699	+ 588	+ 20	+ 853
2022	4308	321	6153	-296	-47	-546
2023	4614	378	6538	+306	+57	+385
2024	4314	333	6116	-300	-45	-422

2024 թվականին նվազել են հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության դեպքերը: Եթե 2023 թվականին արձանագրվել է նշված հանցագործության 1179 դեպք, ապա 2024 թվականի ընթացքում՝ 909 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 270-ով կամ 22.9%-ով: Բացահայտումը կազմել է 20.8%՝ նախորդ տարվա 27.3%-ի դիմաց:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս բնույթի հանցագործությունների թիվը սկսել է աճել 2020 թվականի 44-օրյա պատերազմից, ինչպես նաև 2023 թվականի իրադարձություններից հետո, որի ընթացքում մի շարք անձանց կողմից ապօրինի կերպով Հայաստանի Հանրապետություն է տեղափոխվել հրազեն և զինամթերք:

2024 թվականին արձանագրվել է ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենք կրելու 293 դեպք՝ նախորդ տարվա 487 դեպքի դիմաց: Դեպքերի թիվը նվազել է 194-ով կամ 39.8%-ով:

2024 թվականի ընթացքում աճ է արձանագրվել ընդերքի պահպանման և օգտագործման կանոնները (պահանջները) խախտելու դեպքերով: Եթե 2023 թվականին արձանագրվել է նշված հանցագործության 47 դեպք, ապա 2024 թվականին արձանագրվել է 56 դեպք. դեպքերն աճել են 9-ով կամ 19.14%-ով: Քննվող վարույթների ուսումնասիրությունը թույլ է տալիս գալու հետևության, որ աճը պայմանավորված է նշված դեպքերի բացահայտմանն ուղղված միջոցառումների ակտիվացմամբ, քանի որ բազմաթիվ վարույթներով քննության առարկա հանդիսացող հանցագործության դեպքերը կատարվել են ոչ թե 2024 թվականի ընթացքում, այլ նաև՝ նախորդող տարիներին, մինչդեռ բացահայտվել են հաշվետու ժամանակահատվածում:

2024 թվականին արձանագրվել է խուլիգանության դեպքերի աճ 103-ով կամ 17.2%-ով (2023 թվականին՝ 600 դեպք, 2024 թվականին՝ 703 դեպք):

2024 թվականին արձանագրված խուլիգանության 703 դեպքից 304-ը կատարվել է Երևան քաղաքում, իսկ 399-ը՝ մարզերում: 2023 թվականի 600 դեպքից Երևան քաղաքում կատարվել է 315-ը, իսկ մարզերում՝ 285-ը: Երևան քաղաքում խուլիգանության դեպքերը նվազել են 11-ով կամ 3.5%-ով, իսկ մարզերում աճել՝ 114-ով կամ 40%-ով: Ընդ որում, Երևան քաղաքում խուլիգանության դեպքերի նվազմանը զուգահեռ 18-ով կամ 29.5%-ով նվազել են զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով կատարված խուլիգանության դեպքերը:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է պետական սահմանն ապօրինի հատելու դեպքերի աճ: 2024 թվականին արձանագրվել է պետական սահմանն ապօրինի հատելու 160 դեպք՝ 2023 թվականի 78 դեպքի դիմաց. դեպքերի թիվն ավելացել է 82-ով կամ 105.1 %-ով:

2024 թվականի ընթացքում արձանագրվել է անօրինական միգրացիայի կազմակերպման 15 դեպք՝ 2023 թվականի 24 դեպքի դիմաց. դեպքերի թիվը նվազել է 9-ով:

Հաշվետու ժամանակահատվածում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների արձանագրված դեպքերի թիվը կազմել է 3639՝ 2023 թվականին արձանագրված 5070 դեպքի դիմաց:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության արձանագրված դեպքերի թիվը նվազել է 1431-ով կամ 28.2%-ով: Ընդ որում, իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը կազմել են 1910, որը 2023 թվականին արձանագրված 2802 դեպքի համեմատ հանդիսանում է 892-ով կամ 31.8%-ով նվազում:

2024 թվականի ընթացքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է **14.8%**, 2023 թվականի **15.6%-ի** դիմաց: Ընդ որում, իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է **8.3%**, 2023 թվականի **8.8%-ի** դիմաց:

Թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների ընդհանուր թվի 28.2%-ով նվազումը պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ 2023 թվականի ընթացքում ապօրինի պահվող թմրամիջոցների հայտնաբերման բոլոր դեպքերում քրեական վարույթները նախաձեռնվել են ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ և 396-րդ հոդվածների հատկանիշներով, իսկ 2024 թվականի ընթացքում, անձանց մոտ ապօրինի պահվող մանր չափի բուսական ծագում ունեցող թմրամիջոցների հայտնաբերման դեպքում, երբ բացակայել են նշված թմրամիջոցի ապօրինի իրացման առերևույթ դեպքի մասին փաստական տվյալներ, քրեական վարույթներ չեն նախաձեռնվել, իսկ կազմված փաստաթղթերն ուղարկվել են իրավասու մարմնին՝ մանր չափերով թմրամիջոց ապօրինի պահելու կամ օգտագործելու համար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության տարածքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ տվյալներին, հարկ է նշել, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների 2024 թվականի շարժընթացի վերաբերյալ տվյալների սխեմատիկ պատկերն ըստ տարածքների հետևյալն է.

Տարածք	2024 թվականին ապօրինի շրջանառություն դեպքերի թիվը	Աճ/նվազում	2024 թվականին իրացման նպատակով շրջանառություն	Աճ/նվազում
Ընդ. ՀՀ	3047	-1517 (33,2%)	1910	-892 (31,8%)
Ընդ. ք.Երևան	1414	-1407 (49,9%)	1066	-827 (43,7%)
Երեբունի-Նուբարաշեն	173	-284 (62,1%)	158	- 154 (49,4%)
Քանաքեռ-Զեյթուն	96	-138 (59.0%)	66	+66 (50,0%)
Արաբկիր	219	-256 (53,9%)	177	-110(38,3%)
Մալաթիա-Սեբաստիա	99	-254 (72,0%)	80	-235(74,6%)
Կենտրոն և Նորք-Մարաշ	205	-106 (34.1%)	128	-59 (31,6%)
Ավան և Նոր Նորք	238	-80 (25.2%)	192	-58 (23,2%)
Աջափնյակ և Դավիթաշեն	138	-79 (36,4%)	122	-31 (20,3%)
Շենգավիթ	217	-217 (50,0%)	127	-116 (47,7%)
Ընդ.մարզեր	1633		844	
Շիրակ	385	+56 (17,0%)	248	-15 (5,7%)
Արմավիր	565	-20 (3,4%)	262	-27 (9,3%)
Տավուշ	29	-17 (37,0%)	10	-4 (28,6%)
Արագածոտն	155	-2 (1,3%)	82	-10 (10,9%)
Լոռի	110	-31 (22,0%)	65	+2 (3,2%)
Վայոց ձոր	41	+15 (57,7%)	19	+10 (111,1%)
Կոտայք	114	-43 (27,4%)	56	-12 (17,6%)
Արարատ	111	-56 (33,5%)	51	+3 (6,3%)
Գեղարքունիք	46	-36 (43,9%)	26	-18 (40,9%)
Սյունիք	77	+24 (45,3%)	25	+6 (31,6%)

Իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման տոկոսային ցուցանիշների 2023 և 2024 թվականների համեմատական սխեմատիկ պատկերն ըստ տարածքների հետևյալն է.

Տարածք	Իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշները	
	2023	2024
Ընդ. ՀՀ	10,5%	9,9%
Ընդ. ք.Երևան	9,8%	9,7%
Էրեբունի և Նուբարաշեն	11,2%	11,4%
Քանաքեռ-Զեյթուն	6,8%	9,1%
Արաբկիր	12,9%	9,6%
Մալաթիա-Սեբաստիա	4,4%	16,3%
Կենտրոն և Նորք-Մարաշ	13,4%	16,4%
Ավան և Նոր Նորք	6,8%	5,7%
Աջափնյակ և Դավիթաշեն	17,0%	4,1%
Շենգավիթ	7,8%	7,9%
Շիրակ	5,7%	5,6%
Արմավիր	12,5%	6,9%
Տավուշ	50%	20%
Արագածոտն	7,6%	2,4%
Լոռի	12,7%	18,5%
Վայոց ձոր	22,2%	26,3%
Կոտայք	10,3%	17,9%
Արարատ	22,9%	27,5%
Գեղարքունիք	20,5%	11,5%
Սյունիք	42,1%	28%

Նշված վիճակագրական տվյալները վկայում են, որ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի աճին զուգահեռ այդ հանցատեսակի բացահայտման ցուցանիշի նվազումը դրսևորվել է ՀՀ գրեթե ողջ տարածքում: **Բացառություն են կազմում Լոռու, Վայոց ձորի, Կոտայքի, Արարատի մարզերը և Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանները**:

2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում ապօրինի շրջանառությունից առգրավվել են **426 կգ 563 գրամ տարբեր տեսակի թմրամիջոցներ**, 2023 թվականի 202 կգ 60 գրամի դիմաց: Առգրավվել են նաև՝ 750.17 գրամ հոգեմետ նյութեր, 2023 թվականի 376.034 գրամի դիմաց:

2024 թվականի ընթացքում առգրավվել են 29.8 գրամ պրեկուրսորներ, 2023 թվականի 125.4 գրամի դիմաց:

Ստորև ներկայացվում են 2023 և 2024 թվականների ընթացքում ապօրինի շրջանառությունից հանված թմրամիջոցների՝ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված վիճակագրական համեմատական տվյալները (ներկայացվում են ըստ փորձագիտական հիմնարկներից ստացված եզրակացությունների).

Թմրամիջոցներ տեսակներ	2023 թվական	2024 թվական	+ /-
Մեթամֆետամին	9 կգ 917.657 գր	13 կգ 495.761 գր	+3 կգ 578.104 գր
Հերոին	8 կգ 340.546 գր	17 կգ 442.181 գր	+9 կգ 101.635 գր
α-PVP	115.107 գր	295.006 գր	+ 179.899 գր
Մեֆեդրոն	45.6 գր	4 կգ 115.41 գր	+ 4 կգ 69.81 գր
Սփայս	268.194 գր	2 կգ 82.655 գր	+ 1 կգ 814.461 գր
4-CMC	-	991.67 գր	+ 991.67 գր
ՄԴՄԱ	478.671 գր	113.239 գր	- 365.432 գր
Ացետիլացված ափիոն	990.7015 գր	6.4621 գր	- 984.2394 գր
2C-B	-	4.151 գր	+ 4.151 գր
ԼՍԴ	3.132 գր	0.058 գր	- 3.074 գր
Ամֆետամին	0.583 գր	0.06 գր	- 0.523 գր
Մարիխուանա	52 կգ 278.091 գր	327 կգ 288.734 գր	+ 275 կգ 10.643 գր
Կանեփ	119 կգ 629.245 գր	49 կգ 626.217 գր	- 70 կգ 3.028 գր
Ափիոն	2 կգ 850.748 գր	85.504 գր	-2 կգ 765.244 գր
Կոկաին	1 կգ 868.949 գր	5 կգ 210.426 գր	+ 3 կգ 341.477 գր
Հաշիշ	3 կգ 325.028 գր	227.22 գր	- 3 կգ 97.808 գր
Հաշիշի յուղ	201.66 գր	2 կգ 593.353 գր	+ 2 կգ 391.693 գր
Տետրահիդրոկանաբինոլ	2.596 գր	168.6 գր	+ 166.004 գր
ՏՀԿ պարունա. բուս. խառն.	1 կգ 58.422 գր	2 կգ 634.0175 գր	+ 1 կգ 575.5955 գր
Բուպրենորֆին	7.86634 գր	20.65544 գր	+ 12.7891 գր
Կոդեին	20.821 գր	9.06 գր	- 11.761 գր
Մեթադոն	38.96901 գր	130.21382 գր	+ 91.24481 գր
Պսիլոցին	52.327 գր	20.89 գր	- 31.437 գր
Օքսիկոդոն	-	0.02 գր	+ 0.02 գր
Տիլիդին	-	0.712 գր	+ 0.712 գր
Օմնոպոն	-	0.83 գր	+ 0.83 գր
Դեզոմորֆին	-	0.28 գր	+ 0.28 գր
Կանեփի բույս	15543 հատ	10066 հատ	- 5477 հատ
Կակաչի ծղոտ	564.58 գր	-	- 564.58 գր
Մորֆին	0.02 գր	-	- 0.02 գր
Հիդրոկոդոն	0.5 գր	-	- 0.5 գր
Ֆենտանիլ	0.024 գր	-	- 0.024 գր
Կակաչի բույս	159 հատ	-	- 159 հատ
Ընդհանուր	**202 կգ 60 գրամ**	**426 կգ 563 գր**	**+ 224 կգ 503 գր**

Անդրադառնալով առգրավված թմրամիջոցների քանակի աճին՝ հարկ է նշել, որ 2023 թվականի համեմատությամբ աճել է ապօրինի շրջանառությունից հանված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող ինչպես սինթետիկ, այնպես էլ բուսական ծագման թմրամիջոցների քանակը: Մասնավորապես, հաշվետու ժամանակաշրջանում աճել է ապօրինի շրջանառությունից հանված «Մեթամֆետամին» «Հերոին», «Մեֆեդրոն» «Մեթադոն» «Սփայս», «a-PVP» «Կոկաին», «Մարիխուանա», «Տետրահիդրոկաննաբինոլ պարունակող բուսական խառնուրդ» և նոր տեսակի՝ 4-CMC, 2C-B թմրամիջոցի և թմրամիջոցներ կրող զանգվածները, մինչդեռ 2023 թվականի ընթացքում արձանագրվել էր «Կանեփ», «Ափիոն», «Հաշիշ», «ԼՍԴ» և «ՄԴՄԱ» տեսակի թմրամիջոցների աճ: Հատկանշական է, որ 2024 թվականի ընթացքում նվազել է «Ափիոն» (85.504 գր), «Կանեփ» (49 կգ 626.217 գր), «ՄԴՄԱ» (113.239 գր), «ԼՍԴ» (0.058 գր), «Հաշիշ» (227.22 գր) տեսակի թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը:

Միևնույն ժամանակ մտահոգիչ է այնպիսի թմրամիջոցների ապօրինի շրջանառության աճը, ինչպիսիք են «Հերոինը»՝ 17 կգ 442.181 գր, «Մեթամֆետամինը»՝ 13 կգ 495.761 գր, «Մեֆեդրոնը»՝ 4 կգ 115.41գր և «Սփայսը»՝ 2 կգ 82.655 գրամ:

«Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ից ստացված տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ «թմրամոլ» ախտորոշմամբ հաշվառման մեջ է գտնվել 7772 անձ, 2023 թվականին՝ 7612 անձ, 2022 թվականին՝ 7570 անձ, 2021 թվականին՝ 7392, 2020 թվականին՝ 7209, 2019 թվականին՝ 6951, 2018 թվականին՝ 6572:

Հաշվետու ժամանակահատվածում, 2023 թվականի համեմատությամբ, արձանագրվել է պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների 168 դեպքով կամ 3.6%-ով նվազում (2023 թվականին՝ 4704 դեպք, 2024 թվականին՝ 4536 դեպք):

Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազմանը զուգահեռ նվազել է նաև այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 19.5%՝ 2023 թվականի 19.6%-ի դիմաց:

Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազումը արձանագրվել է հիմնականում կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու, իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու և պետական իշխանության, ծառայության և

կառավարման կարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերի նվազման հաշվին:

Այսպես, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերը նվազել են 83-ով կամ 14.9%-ով (2023 թվականին՝ 556 դեպք, 2024 թվականին՝ 473 դեպք), կաշառք ստանալու, տալու, կաշառքի միջնորդության դեպքերը նվազել են 128-ով կամ 22.3%-ով (2023 թվականին՝ 574 դեպք, 2024 թվականին՝ 446 դեպք), իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը նվազել են 30-ով կամ 21.3%-ով (2023 թվականին՝ 141 դեպք, 2024 թվականին՝ 111 դեպք), իսկ պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերը՝ 17-ով կամ 0.8%-ով (2023 թվականին՝ 2161 դեպք, 2024 թվականին՝ 2144 դեպք):

2024 թվականի ընթացքում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գրանցված դեպքերի թիվը նույնն է, ինչ 2023 թվականին՝ 1013 դեպք:

Աճել է այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 6.1%՝ նախորդ տարվա 5%-ի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում տնտեսական գործունեության դեմ ուղղված առանձին հանցագործություններից հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերը նվազել են 12-ով կամ 5.6%-ով (2023 թվականին՝ 215 դեպք, 2024 թվականին՝ 203 դեպք), կեղծ փող, արժեթուղթ պատրաստելու, պահելու կամ իրացնելու դեպքերը 43-ով կամ 12.4%-ով (2023 թվականին՝ 347 դեպք, 2024 թվականին՝ 304 դեպք), 29-ով կամ 17.6%-ով աճել են ապօրինի ձեռնարկատիրական գործունեության դեպքերը (2023 թվականին՝ 165 դեպք, 2024 թվականին՝ 194 դեպք), 7-ով կամ 11.7%-ով՝ փողերի լվացման դեպքերը (2023 թվականին՝ 60 դեպք, 2024 թվականին՝ 67 դեպք), տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերն աճել են 27-ով կամ 12.8%-ով (2023 թվականին՝ 211, 2024 թվականին՝ 238):

2

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ 71.323 հաղորդման (2023 թվականին՝ 61.987) արձանագրման կապակցությամբ օրենսդրության պահանջների կատարումը:

Ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ 71.323 հաղորդումից 58.895-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ 12.428-ով քննիչների կողմից վարույթ չի նախաձեռնվել, որոնցից 10.705-ի օրինականությունը հաստատվել է հսկող դատախազների կողմից, իսկ 1723-ով հանձնարարվել է նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն:

Քրեական վարույթ չնախաձեռնելու դեմ բերվել է 375 բողոք, որոնցից 25-ը վերադաս դատախազների կողմից բավարարվել է, 350-ը՝ մերժվել:

2024 թվականի ընթացքում նախաքննության մարմինների կողմից քննվել է 209.421 քրեական վարույթ (2023 թվականին՝ 187.306):

Նախորդ տարվա համեմատությամբ քննված քրեական վարույթների թիվը աճել է 22.115-ով կամ 11.8%-ով:[5]

2024 թվականին քննված 209.421 քրեական վարույթից 140.835-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2023 թվականին՝ 28.389), որը 112.446-ով կամ 396.1%-ով ավելի է, քան 2023 թվականին, իսկ 68.586-ով նախաքննության կատարումը հանձնարարվել է քննիչին 2024 թվականի ընթացքում (2023 թվականին՝ 158.917), որը 90.331-ով կամ 56.8%-ով պակաս է, քան 2023 թվականին:

2024 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական հետապնդում է հարուցվել 15.074 անձի նկատմամբ (2023 թվականին՝ 10.136), 15.896 անձի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդում չհարուցելու (2023 թվականին՝ 12.331), 2518 անձի նկատմամբ՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում (2023 թվականին՝ 1534), իսկ 2627 անձի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշում (2023 թվականին՝ 2544):

2024 թվականին ավարտվել է 38.058 քրեական վարույթ (2023 թվականին՝ 33.396), այդ թվում՝ 11.801-ը՝ 13.179 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2023 թվականին՝ 8393-ը՝ 10.115 անձի վերաբերյալ), 45-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2023 թվականին՝ 55), 26.212-ը կարճվել է (2023 թվականին՝ 24.948), որոնցից 17.813-ը՝ (2023 թվականին՝ 18.309) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

5. Հաշվետու ժամանակահատվածում քննված քրեական վարույթների թվի աճը 2023 թվականի համեմատությամբ պայմանավորված է առաջին հերթին 2023 թվականից անավարտ մնացած շուրջ 140.835 քրեական վարույթները 2024 թվական փոխանցվելու, ինչպես նաև նախաձեռնված քրեական վարույթների թվի աճով: Նախաձեռնված քրեական վարույթների թվի աճն, իր հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածում ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ ներկայացված հաղորդումների թիվն աճել է ավելի քան 9.300-ով, ինչը, հաշվի առնելով քրեական վարույթ նախաձեռնելու շեմի իջեցումը, հանգեցրել է նախաձեռնված քրեական վարույթների թվի աճի:

Այսպիսով, 2024 թվականին ավարտվել է 4662-ով կամ 14%-ով ավելի քրեական վարույթ քան 2023 թվականին, այդ թվում՝ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 3408-ով կամ 40.6%-ով ավելի քրեական վարույթ, կարճվել է 1264-ով կամ 5.1%-ով ավել քրեական վարույթ:

2024 թվականի ընթացքում ավարտված քրեական վարույթների 42.1%-ը (2023 թվականին՝ 39.9%) քննվել է մինչև 2 ամիս, 21.5%-ը (2023 թվականին՝ 20.7%)՝ մինչև 4 ամիս, 15%-ը (2023 թվականին՝ 15.9%)՝ մինչև 6 ամիս, 11.9%-ը (2023 թվականին՝ 16%)՝ մինչև 1 տարի, 9.5 %-ը (2023 թվականին՝ 7.5%)՝ 1 տարուց ավելի ժամկետում:

2024



2023



2024 թվականին 6 ամսից ավելի ժամկետով է քննվել քրեական վարույթների 21.4%-ը. 2023 թվականի համապատասխան ցուցանիշի համեմատ առկա է նվազում՝ 2.1%-ով: Նշված հանգամանքը վկայում է նախաքննության ժամկետների անհարկի ձգձգման դեպքերը բացառելու ուղղությամբ իրավասու մարմինների, այդ թվում՝ Գլխավոր դատախազության կողմից ձեռնարկված միջոցների արդյունավետության մասին:

2024 թվականին 7035 քրեական վարույթ միացվել է (2023 թվականին՝ 7956):

2024 թվականին 29 քրեական վարույթով (2023 թվականին՝ 34) նախաքննությունն իրականացվել է մեղադրյալի բացակայությամբ (հեռակա վարույթ)՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված կարգով:

2024 թվականի վերջին անավարտ է մնացել 158.236 քրեական վարույթ (2023 թվականի վերջին՝ 140.523), ինչը 17.713-ով կամ 12.6%-ով գերազանցում է 2023 թվականի ցուցանիշը: Անավարտ մնացած 158.236 քրեական վարույթից 135.553-ով կատարվել են վարութային և ապացուցողական բոլոր գործողությունները, սակայն ի հայտ չի եկել քրեական հետապնդման ենթակա անձ:

2024 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է (վերստուգվել է) վարույթը կարճելու մասին 42.770 որոշման օրինականություն: 2024 թվականին վերացվել է՝

- քրեական վարույթը կարճելու մասին 661 որոշում կամ ստուգված որոշումների 1.55%-ը, որոնցից 17-ը կամ 2.6%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդում չհարուցելու մասին 59 որոշում, որոնցից 1-ը կամ 1,7% -ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 30 որոշում, որոնցից 1-ը կամ 3.33%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Համեմատության համար նշենք, որ 2023 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է (վերստուգվել է) վարույթը կարճելու մասին 36.451 որոշման օրինականություն: 2023 թվականին վերացվել է՝

- քրեական վարույթը կարճելու մասին 527 որոշում կամ ստուգված որոշումների 1.44%-ը, որոնցից 20-ը կամ 3.8%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդում չհարուցելու մասին 131 որոշում,
- քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 26 որոշում, որոնցից 1-ը կամ 3.84%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 136 բողոք (2023 թվականին՝ 97), որոնցից բավարարվել է 16-ը (2023 թվականին՝ 9) կամ 11.8%-ը (2023 թվականին՝ 9.2%):

Նույն ժամանակահատվածում քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումների դեմ բերվել է 90 բողոք (2023 թվականին՝ 54): Նշված բողոքներից բավարարվել է 3-ը (2023 թվականին՝ 2):

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ նույն ժամանակահատվածում բերվել է 47 բողոք (2023 թվականին՝ 48), որոնցից 6-ը բավարարվել է (2023 թվականին՝ 4):

Քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու որոշումների դեմ հաշվետու ժամանակահատվածում բերվել է 4 բողոք, որոնք մերժվել են:

Քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդում չհարուցելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2024 թվականին ավելացել է 74-ով կամ 37.2%-ով՝ կազմելով 273 բողոք՝ նախորդ տարվա 199-ի դիմաց: Բերված բողոքներից բավարարվել է 25-ը կամ 9.1%-ը (2023 թվականին՝ 15-ը կամ 7.5%-ը):

Այսպիսով, 2024 թվականին ստուգվել է վարույթը կարճելու մասին 6319 որոշումով ավելի, քան 2023 թվականին, իսկ վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ կայացված որոշումների թիվը ավելացել է 134-ով կամ 25.4%-ով:

2024 թվականի ընթացքում դատարան ուղարկված 790 քրեական գործով պետությանը, համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 29.186.330.600 ՀՀ դրամի գույքային վնաս (2023 թվականին՝ 83.867.331.548), որից պետությանը՝ 9.537.184.200 ՀՀ դրամի (2023 թվականին՝ 66.232.338.153), համայնքներին՝ 1.425.725.400 ՀՀ դրամ (2023 թվականին՝ 210.198.000), իրավաբանական անձանց՝ 5.629.446.000 ՀՀ դրամի (2023 թվականին՝ 10.315.255.000), ֆիզիկական անձանց՝ 12.593.975.000 ՀՀ դրամի (2023 թվականին՝ 7.084.558.395):

Հաշվետու ժամանակահատվածում ինչպես ընթացիկ, այնպես էլ ավարտված քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը և համայնքին պատճառված շուրջ 42 միլիարդ ՀՀ դրամի վնաս, որից 37 միլիարդ 600 միլիոն դրամը վերականգնվել է Գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների հսկողության ներքո քննվող քրեական վարույթներով:

Համեմատության համար նշենք, որ 2023 թվականի ընթացքում քրեական վարույթներով վերականգնվել էր պետությանը և համայնքին պատճառված շուրջ 34 միլիարդ 300 միլիոն ՀՀ դրամի վնաս: Այսինքն, հաշվետու ժամանակահատվածում վերականգնվել է ավելի քան 7 միլիարդ 500 միլիոն դրամով ավելի գումար, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում:



Կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի 1922-Ն որոշմամբ սահմանվել են քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցների վճարման միասնական կարգավորումներ:

Հիշյալ որոշմամբ, ի թիվս այլնի, կարգավորվել է նաև քրեական վարույթներով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերականգնման կարգը, ինչպես նաև վերականգնված դրամական միջոցների և արգելադրված դրամական միջոցների վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը: Մասնավորապես.

- Քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցները վճարվելու են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կառավարվող՝ **Վերականգնված միջոցների միասնական հաշվին:**
- ՀՀ գլխավոր դատախազությունը եռամսյա պարբերականությամբ ֆինանսների նախարարություն տեղեկատվություն է ներկայացնելու այն քրեական վարույթների վերաբերյալ, որոնցով կատարվել է վնասի վերականգնում և առկա է օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական որոշում, ինչը հնարավորություն կտա ֆինանսների նախարարությանը **արդեն որպես եկամուտ** տնօրինել նշված գումարները:
- Անձի ռեաբիլիտացիայի դեպքում ՀՀ գլխավոր դատախազությունը համապատասխան տեղեկատվությունը փոխանցելու է ֆինանսների նախարարություն, որպեսզի վնասի վերականգնման նպատակով վճարված գումարները հետ վերադարձվեն վճարում կատարած անձին:
- Ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերականգնման նպատակով գումարները վճարվելու են ՀՀ դատախազության դեպոզիտ հաշվին և փոխանցվելու են տուժողին եզրափակիչ դատավարական ակտից հետո:
- Համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցները եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կրկին դատախազության գրության հիման վրա ֆինանսների նախարարության կողմից կհաշվանցվեն համապատասխան համայնքի,

պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպությունների կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվին:

- Առաջարկվող կարգավորումներից բացառություններ են սահմանված հարկային որոշ հանցագործությունների համար, որոնց դեպքում նախատեսվում է դրանք վճարել հարկ վճարողի միասնական հաշվին՝ տնտեսվարողների համար հնարավոր անբարենպաստ հետևանքները (տուգանքներ և այլն) բացառելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության նախաքննական մարմինների վարույթում քննված քրեական վարույթներով 2024 թվականի ընթացքում արգելանք է դրվել 2.658.771.800 ՀՀ դրամ արժողությամբ գույքի և դրամական միջոցների վրա:

2024 թվականի ընթացքում քննված քրեական վարույթներով դատարան է ներկայացվել 9107 խուզարկության միջնորդություն (2023 թվականին՝ 10.072), որոնցից բավարարվել է 8273-ը կամ 90.8%-ը (2023 թվականին՝ 9119-ը կամ 90.5%-ը), մերժվել է 834-ը կամ 9.2%-ը (2023 թվականին՝ 953-ը կամ 9.5%-ը):

2024 թվականի ընթացքում դատախազների կողմից լրացուցիչ քննության է վերադարձվել 431 քրեական վարույթ՝ նախորդ տարվա 332-ի դիմաց, այսինքն՝ լրացուցիչ քննության վերադարձված քրեական վարույթների թիվն աճել է 99-ով կամ 29.8%-ով:

2024 թվականի ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 196 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 37 անձ ենթարկվել է կարգապահական տույժի:

2024 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 201 անձ՝ նախորդ տարվա 253-ի դիմաց, այսինքն՝ վարույթից հեռացված անձանց թիվը նվազել է 52-ով կամ 20.6%-ով:

2024 թվականի ընթացքում ձերբակալվել է 7721 անձ՝ նախորդ տարվա 8645-ի դիմաց, այսինքն՝ ձերբակալված անձանց թիվը նվազել է 924-ով կամ 10.7%-ով: Ձերբակալումից ազատվել է 5461 անձ՝ նախորդ տարվա 7160-ի դիմաց:

2024 թվականին Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 2282 միջնորդություն[6], որոնցից բավարարվել է[7] 2013-ը կամ 88.2%-ը, մերժվել՝ 269-ը կամ 11.8%-ը:

6. Նշված թիվը վերաբերում է միայն առաջնային կալանքին, ինչպես նաև չի ներառում ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ և 462-րդ հոդվածներով մեղադրվող անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների թիվը:
7. Նշված թիվը ներառում է նաև ներկայացված միջնորդությունները դատարանի կողմից մասնակի բավարարելու դեպքերը:

Համեմատության համար նշենք, որ 2023 թվականին Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 2040 միջնորդություն, որոնցից բավարարվել է 1559-ը կամ 76.4%-ը, մերժվել՝ 481-ը կամ 23.6%-ը:

2023 թվականի համեմատ, 2024 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը աճել է 242-ով կամ 11.9%-ով: 11.8%-ով աճել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունները դատարանների կողմից բավարարման տոկոսային ցուցանիշը, ինչը վկայում է ներկայացված միջնորդությունների հիմնավորվածության և պատճառաբանվածության մասին:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին 210 միջնորդություն (2023 թվականին՝ 114), որոնցից բավարարվել է 185-ը կամ 88.1%-ը (2023 թվականին՝ 87-ը կամ 76.3%-ը), մերժվել՝ 25-ը կամ 11.9%-ը (2023 թվականին՝ 27-ը կամ 23.7%-ը):

Հաշվետու ժամանակահատվածում, գրավը որպես խափանման միջոց կիրառվել է 317 անձի նկատմամբ (2023 թվականին՝ 224), իսկ պաշտոնավարման կասեցումը՝ 96 անձի (2023 թվականին՝ 67) նկատմամբ, որից 71-ը (2023 թվականին՝ 38) կոռուպցիոն վարույթներով:

2024 թվականի ընթացքում հետախուզվել է 16.007 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 2196-ը կամ 13.7%-ը: Համեմատության համար նշենք, որ 2023 թվականի ընթացքում հետախուզվել է 14.909 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1877-ը կամ 12.6%-ը:

2023 թվականի համեմատությամբ, 2024 թվականին հետախուզվողների թիվը ավելացել է 1098-ով կամ 7.4%-ով: Ավելացել են հետախուզվողների հայտնաբերման քանակական և տոկոսային ցուցանիշները: Մասնավորապես, հայտնաբերված հետախուզվող մեղադրյալների թիվն ավելացել է 319-ով կամ 17%-ով:

Ընդհանուր հանցատեսակների մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվողների գերակշիռ թիվը հաշվի առնելով՝ նույն տվյալները ներկայացվում են առանց նշված հոդվածով հետախուզվողների տվյալների: Այսպես.

- 2024 թվականին հետախուզվել է 5097 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1635-ը կամ 32.1%-ը:
- 2023 թվականին հետախուզվել է 4581 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1479-ը կամ 32.3%-ը:
- 2023 թվականի համեմատությամբ, 2024 թվականին հետախուզվողների թիվն ավելացել է 516-ով կամ 11.3%-ով:

- 2024 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվել է 10.910 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 561-ը կամ 5.1%-ը:
- 2023 թվականի համեմատությամբ, 2024 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվողների թիվն աճել է 582-ով, հայտնաբերման քանակական ցուցանիշը՝ 163-ով, իսկ տոկոսային ցուցանիշը՝ 41%-ով:
- 2023 թվականի համեմատությամբ, 2024 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով հետախուզվողների թիվը նվազել է 582-ով, սակայն աճել է հայտնաբերման քանակական ցուցանիշը՝ 163-ով, իսկ տոկոսային ցուցանիշը՝ 41%-ով:

2024 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական վարույթներով տրվել է 5468 հանձնարարություն՝ 2023 թվականի 5147-ի դիմաց, այսինքն՝ հանձնարարությունների թիվն ավելացել է 321-ով կամ 6.2%-ով:

2024 թվականի ընթացքում դատախազների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 360 միջնորդագիր՝ նախորդ տարվա 212 միջնորդագրի դիմաց:

Դատախազների կողմից ներկայացված միջնորդագրերի և գրությունների քննարկման արդյունքում հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ ձեռնարկվել են գործուն միջոցներ:

Մասնավորապես՝

- 2024 թվականի օգոստոսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդագիր է ներկայացվել ՀՀ փոխվարչապետին այն մասին, որ Պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված հաղորդման հիման վրա նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ պարզվել են «Սևանի Իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության» հիմնադրամի, «Սևանի Իշխան» ՓԲ ընկերության, «Սևան Ակվա» ՓԲ ընկերության աշխատակիցների կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու, պաշտոնական անփութություն կատարելու, ինչպես նաև «Սևան Ակվա» ՓԲ ընկերության կանխամտածված սնանկության առերևույթ դեպքեր: Ընդ որում, վերը թվարկված ենթադրյալ հանցանքների կատարման համար պատճառ է հանդիսացել նշված ընկերությունների ոչ պատշաճ կառավարումը: Ներկայացված միջնորդագրով արձանագրվել է նաև, որ հիշյալ երկու ընկերությունների առկայությամբ պայմանավորված՝ ընկերությունների միջև տեղի են ունենում ձևական փաստաթղթաշրջանառություն, դրամական միջոցների և ապրանքների փոխանցումներ:

Այլ խոսքով, նման կառուցվածքը և երկու ընկերությունների կողմից փաստացի մեկ գործառույթ իրականացնելը նպաստավոր պայմաններ է ստեղծում պետական միջոցների յուրացման և վատնման համար: Վերոգրյալի հիման վրա՝ ՀՀ գլխավոր դատախազը միջնորդել է միջոցներ ձեռնարկել հանցավոր արարքների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ, մասնավորապես՝ քննարկել «Սևանի Իշխան» և «Սևան Ակվա» ՓԲ ընկերությունները մեկ ընկերության ներքո վերակազմակերպելու նպատակահարմարության հարցը: ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված գրության համաձայն՝ ՀՀ փոխվարչապետի կողմից Շրջակա միջավայրի նախարարությանը հանձնարարվել է ուսումնասիրել ներկայացված միջնորդագիրը և կազմակերպությունների վերակազմակերպման գործընթացը նախաձեռնելիս հաշվի առնել ներկայացված առաջարկները:

- Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ ՀՀ ներքին գործերի նախարարությանն ուղղված գրության և Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման հիման վրա՝ ՀՀ ներքին գործերի նախարարի որոշմամբ, Ոստիկանության նախկին պետի դստերը շնորհված «փոխգնդապետի» կոչումն անվավեր է ճանաչվել:
- 2024 թվականի փետրվարի 28-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից միջնորդագիր է ներկայացվել Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալին, համաձայն որի՝ մաքսանենգության դեպքերի առթիվ նախաձեռնված մի շարք քրեական վարույթների նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի որոշակի տեսակները (օրինակ՝ «հաշիշի յուղ», «դիազեպամ», «լորազեպամ», «կլոնիդին» և այլն) մաքսային սահմանով տեղափոխող անձին նշանակված են եղել կամ դրանց օգտագործման վերաբերյալ խորհուրդ է տրվել օտարերկրյա պետության (ԱՄՆ, եվրոպական մի շարք երկրներ, ԻԻՀ) տարածքում գործունեություն ծավալող բժիշկների կողմից՝ տվյալ պետության տարածքում դրա շրջանառությունն արգելված չլինելու պայմաններում: Նմանատիպ դեպքերում հիշյալ նյութերի առերևույթ մաքսանենգության մեջ մեղադրվող անձինք պարզաբանում են ներկայացրել, որ տեղեկացված չեն եղել դրանք Հայաստանի Հանրապետությունում արգելված լինելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխելիս հայտարարագրման պարտադիր լինելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը միջնորդել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ մաքսային հսկողության գոտիներում գտնվող սրահներն անհրաժեշտ տեղեկատվական նյութերով կահավորելու, դրանք Հայաստանի Հանրապետություն մուտք գործող օտարերկրյա քաղաքացիների համար տեսանելի և հասանելի դարձնելու՝ այդպիսով նշված խնդիրները լուծելու և մաքսանենգության դեմ տարվող պայքարի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության սահմանով թմրամիջոցների տեղափոխումը վերահսկող մի շարք հարցերի մասով պարզաբանում ստանալու նպատակով Պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան գրություն է ուղարկվել Առողջապահության նախարարություն, որտեղից ստացվել են անհրաժեշտ պարզաբանումներ: Մաքսային սահմանը հատող ֆիզիկական անձանց իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով եռալեզու տարբերակով մշակվել է նաև «ՀՀ սահմանը հատող ֆիզիկական անձանց համար» վերնագրով ուղեցույց, որը 1000 օրինակով տպագրվել և տեղադրվել է սահմանային անցակետերում: Ուղեցույցը եռալեզու տարբերակով հասանելի է նաև ՀՀ ՊԵԿ կայքում:

- 2024 թվականի մարտի 27-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ներկայացվել է միջնորդագիր, ապա 2024 թվականի հունիսի 18-ին, ի լրումն ներկայացված միջնորդագրի, գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարություն՝ միջնորդելով քննարկել իրացման նպատակով հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունը դեղատնային գործունեությամբ քողարկած անհատ ձեռնարկատիրոջ դեղատնային գործունեության լիցենզիան դադարեցնելու և(կամ) կասեցնելու հարցը: Ներկայացված միջնորդագրի պատասխանի համաձայն՝ Առողջապահության նախարարության կողմից տրված դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ (ներառյալ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացում և բացթողում)) իրականացնելու N լիցենզիայով նախատեսված հոգեմետ նյութեր պարունակող դեղերի իրացման և բացթողնման գործառույթը կասեցվել է:
- 2024 թվականի հուլիսի 31-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից միջնորդագիր է ներկայացվել Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետին, համաձայն որի՝ քրեական վարույթի նախաքննությամբ հաստատվել է, որ Մ.Ս.-ն օրինական կարգով ստացել է հոգեմետ նյութեր պարունակող դեղորայք, սակայն դրանք օգտագործելու պատրվակով պահել է իր մոտ, որը հայտնաբերվել է

Քրեակատարողական հիմնարկի անվտանգության աշխատակիցների միջամտության արդյունքում: Քրեական վարույթով հաստատվել է նաև, որ Մ.Ս.-ն ներգրավված է եղել քրեակատարողական հիմնարկում սնունդ մատակարարելու աշխատանքների կատարմանը, որպիսի հանգամանքը գործող իրավակարգավորումների և քրեական վարույթով հաստատված փաստական հանգամանքների համատեքստում կարող է ողջամտորեն առաջ բերել ՔԿՀ-ում բուժում ստացող այլ անձանց կյանքի և առողջության պահպանման, ինչպես նաև հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության վտանգ: Ներկայացված միջնորդագրով արձանագրվել է, որ մարդու կյանքի դեմ ուղղված առանձնապես ծանր հանցանքի համար դատապարտված, հոգեկան խնդիրներ ունեցող և, ավելին, այդ խնդիրների կապակցությամբ հոգեմետ դեղորայք ստացող դատապարտյալը ներգրավված է եղել քրեակատարողական հիմնարկում գտնվող անձանց սնունդ բաժանելու աշխատանքների կատարմանը, մինչդեռ հոգեկան խնդիրներ ունեցող անձի կողմից նշված աշխատանքների իրականացումը իրական վտանգ է ստեղծում այլ դատապարտյալների առողջության համար՝ հաշվի առնելով նաև վերջինիս մոտ հոգեմետ դեղերի հայտնաբերման փաստը: Արձանագրվել է նաև, որ ՔԿՀ-ներում դատապարտյալների կողմից բարեկարգման և տեխնիկատնտեսական աշխատանքների պատշաճ և անվտանգ իրականացումն ապահովելու առումով առկա է այնպիսի չափանիշների և կառուցակարգերի սահմանման անհրաժեշտություն, որն ի սպառ կչեզոքացնի նշված վտանգների առաջացումը: Ավելին, ՔԿՀ-ներում անձանց աշխատանքների կատարմանը ներգրավելու բավարար չափանիշների բացակայությունը կարող է հանցավոր գործունեություն իրականացնելու համար բարենպաստ միջավայր ձևավորել և նպաստել տարատեսակ հանցածին երևույթների առաջացմանը, ինչն անթույլատրելի է: Ներկայացված միջնորդագրի արդյունքում՝ Քրեակատարողական ծառայության պետի կողմից հանձնարարվել է քրեակատարողական հիմնարկներում տեխնիկատնտեսական աշխատանքներում ներգրավվելու ցանկություն ունեցող դատապարտյալների դիմումները բավարարելուց առաջ մանրակրկիտ ուսումնասիրել ոչ միայն վերջիններիս անձնական գործերում առկա տվյալները, այլև անձնային հատկանիշների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը, որից հետո միայն որոշում կայացնել դիմումները բավարարելու կամ մերժելու վերաբերյալ: Բացի այդ, համապատասխան աշխատակիցներին տրվել է հանձնարարություն՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում և «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության

անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 194-Ն հրամանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենսդրական փաթեթի շրջանակներում անդրադառնալ նաև միջնորդագրում նշված կառուցակարգերը հստակեցնելու հարցին՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը:

- Գլխավոր դատախազությունում 2022 թվականին, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ին պատկանող զբոսայգու տարածքից հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու, շենք շինությունների նկատմամբ կառուցապատողի օգտագործման և տիրապետման իրավունքը գրանցելու կադաստրային գործը: Ուսումնասիրության համար հիմք է հանդիսացել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի՝ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված գրությունը: Գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրության արդյունքներով՝ Պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի կողմից հանցանքի մասին հաղորդում է ներկայացվել Քննչական կոմիտե. 2022 թվականի հունիսի 17-ին նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական վարույթով պարզվել է, որ 2011 թվականի մայիսի 13-ին «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի նախկին տնօրենի և վերջինիս ազգական Լ.Հ.-ի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր՝ նոտարական վավերացմամբ, որով Լ.Հ.-ին վարձակալության է տրամադրվել «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ին պատկանող զբոսայգու հարավարևմտյան մասում գտնվող՝ 500 քմ ընդհանուր մակերեսով տարածքը՝ մանկական սրճարան կառուցելու նպատակով:

2011 թվականի մայիսի 19-ին Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում գրանցվել է Լ.Հ.-ի վարձակալության իրավունքը՝ 750 քմ մակերեսով տարածքի նկատմամբ: 2015 թվականի հուլիսի 7-ին վարձակալության պայմանագրով՝ վարձակալության իրավունքով, նույն անձին է տրամադրվել 700 քմ մակերեսով տարածքը: 2020 թվականի օգոստոսի 11-ին գրանցվել է Լ.Հ.-ի կողմից կառուցապատման իրավունքը հողամասի՝ 0.0575 հա մակերեսով տարածքի նկատմամբ, իսկ շենք շինությունների նկատմամբ գրանցվել է կառուցապատողի օգտագործման և տիրապետման իրավունքը:

Քրեական վարույթով պարզվել է, որ վարձակալած անձը գույքն օգտագործել է պայմանագրի պայմաններին անհամապատասխան. չի օգտագործել որպես մանկական սրճարան (տարածքի զննությամբ հայտնաբերվել են գարեջրի գովազդային պաստառներ, սեղաններին՝ մոխրամաններ):

Գեղարքունիքի մարզի դատախազությունից միջնորդագիր է ուղարկվել «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել հողամասերի նկատմամբ Լ.Հ.-ի իրավունքների պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելու, իսկ շենք շինությունների նկատմամբ՝ ՀՀ սեփականության իրավունքը գրանցելու վերաբերյալ:

Միջնորդագրի արդյունքում՝ հողամասի կառուցապատման իրավունքը դադարեցվել է, իսկ շենք շինությունների նկատմամբ 2024 թվականի ապրիլի 1-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը:

- Տավուշի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, ուսումնասիրելով Տավուշի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթով ձեռք բերված տվյալները, հարցումներ է կատարել Կադաստրի կոմիտե և պարզել, որ «Տավուշ» միջազգային հայրենակցական միության ՀԿ-ին Տավուշի մարզում անհատույց տրամադրվել են 5 հողատարածքներ, որոնք չեն օգտագործվում ըստ նպատակային նշանակության: Դատախազի կողմից գրություն է հասցեագրվել Իջևանի համայնքապետարան՝ վերոնշյալ հողամասերը համայնքի օգտագործմանը վերադարձնելու նպատակով: Իջևան համայնքի իրավասու մարմինների կողմից դատախազի գրության հիման վրա ձեռնարկված գործողությունների արդյունքում՝ Իջևան համայնքին են վերադարձվել ընդհանուր 3.1845 հա մակերեսով 5 հողամասերը:
- Արարատի մարզի դատախազությունից ուղարկված միջնորդագրի հիման վրա՝ Ավշար համայնքի նախկին ղեկավարի կողմից իշխանական և ծառայողական լիազորությունների օգտագործմամբ հափշտակված հետևյալ երեք անշարժ գույքերը վերադարձվել են համայնքին:

  - Հ. Շիրազի փողոցում գտնվող՝ շուրջ 55.5 միլիոն դրամ արժեքով և ամսական 115 հազար դրամ վարձավճարով վարձակալությամբ հանձնված՝ 0.37602 հա մակերեսով հողատարածքը և 1211.74 քմ մակերեսով պահեստները:
  - Հ. Շիրազի փողոցում գտնվող՝ 759 հազար դրամ արժեքով 0.0622 հա մակերեսով հողատարածքը:
  - Հ. Շիրազի փողոցում գտնվող՝ շուրջ 22 միլիոն դրամ արժեքով և ամսական 445 հազար դրամ վարձավճարով վարձակալությամբ հանձնված 0.966 հա մակերեսով հողատարածքը և 416.6 քմ մակերեսով նախկին կոլտնտեսության շենքը:

2024 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել և ամփոփվել են ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով (խոշտանգում) նախատեսված հանցագործության հատկանիշներով իրականացված քրեական վարույթներով նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության վիճակը:

Ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի իմաստով՝ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը պարտադիր պետք է հետապնդի հոդվածի դիսպոզիցիայում թվարկված նպատակներից առնվազն մեկը: Հակառակ պարագայում, երբ հանցագործության սուբյեկտը որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելիս վերը նշված նպատակներից և որևէ մեկը չի հետապնդում, խոսք չի կարող լինել նրա արարքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության մասին: Նման դեպքերում որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառած պաշտոնատար անձի արարքին իրավական գնահատական տալիս հարկ է անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (պաշտոնատար անձի կողմից բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով իշխանական կամ ծառայողական լիազորություններն անցնելը) նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության հարցին:

ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները հարաբերվում են որպես ընդհանուր և հատուկ նորմեր: Այսպես, բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառում է այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, պաշտոնատար անձի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով: Բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք է պատճառում՝ չհետապնդելով թվարկված նպատակները, վերջինիս արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

ՀՀ դատախազության ստորաբաժանումներից ստացված մի շարք դատավարական որոշումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ գործնականում քիչ չեն դեպքերը, երբ պաշտոնատար անձի կողմից ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոց գործադրելու արդյունքում անձին մարմնական վնասվածքներ պատճառելու դեպքերում քննարկվում է համապատասխան պաշտոնատար անձի արարքում ոչ միայն խոշտանգման կամ պաշտոնեական լիազորությունների անցման, այլև առողջությանը ծանր, միջին կամ թեթև վնաս պատճառելու հանցակազմերի հատկանիշների առկայությունը:

Նման դեպքերում հանձնարարվել է առաջնորդվել ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով առ այն, որ եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի կողմից ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոց գործադրելու արդյունքում անձին պատճառվում է ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով (առողջությանը ծանր վնաս պատճառելը), 167-րդ հոդվածով (առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 171-րդ հոդվածով (առողջությանը թեթև վնաս պատճառելը) նախատեսված մարմնական վնասվածք, ապա պաշտոնատար անձի արարքը վկայակոչված հոդվածներով ենթակա չէ լրացուցիչ որակման:

ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող են հանդիսանալ ոչ միայն պաշտոնատար անձինք, այլև այդպիսիք չհանդիսացող ֆիզիկական անձինք: Մասնավորապես՝ օրենսդրի կողմից տրված «պաշտոնատար անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ» ձևակերպման տառացի մեկնաբանությունից հետևում է, որ որպես նշված հանցակազմի սուբյեկտ առանձնացվում են 2 կատեգորիայի ֆիզիկական անձինք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված՝ պաշտոնատար անձինք, ինչպես նաև վերջիններիս դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ գործող՝ ինչպես պաշտոնատար, այնպես էլ այդպիսիք չհանդիսացող անձինք:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կրկին արձանագրվել է, որ խոշտանգման ենթադրյալ հանցագործությունների դեպքերի առթիվ քրեական վարույթներով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս պետք է ապահովել, որպեսզի՝

- քրեական վարույթ նախաձեռնելուց անմիջապես հետո ենթադրյալ խոշտանգման ենթարկված անձինք ճանաչվեն տուժող և մանրակրկիտ հարցաքննվեն վատ վերաբերմունքի մասին իրենց պնդումների առնչությամբ,
- քրեական վարույթ նախաձեռնելուց անմիջապես հետո անհապաղ և մանրակրկիտ հարցաքննվեն ենթադրաբար խոշտանգում իրականացրած անձինք՝ բացառելու համար նրանց կողմից ցուցմունքները համապատասխանեցնելու հնարավորությունը,
- պարզվեն հնարավոր բոլոր վկաները և մանրակրկիտ հարցաքննվեն ենթադրաբար տեղի ունեցած խոշտանգման հանգամանքների շուրջ: Իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ փաստաբանին հայտնի դարձած հանգամանքների շուրջ վերջինիս որպես վկա հարցաքննելու օրենսդրական արգելքի մեկնաբանությունը չտարածել այն դեպքերի վրա, երբ փաստաբանին իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում հայտնի են դառնում խոշտանգման հանգամանքների մասին տեղեկություններ,
- ենթադրաբար խոշտանգում կատարած պաշտոնատար անձանց մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալուց անմիջապես հետո, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածին համապատասխան, ժամանակավորապես կասեցվի նրանց պաշտոնավարումը,
- անհրաժեշտության դեպքում տուժողի, ինչպես նաև դատավարությանը մասնակցող այլ անձանց նկատմամբ կիրառվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցներ,
- անհապաղ նշանակվի տուժողի դատաբժշկական փորձաքննություն և կատարվի դեպքի վայրի զննություն՝ այդպիսի զննությունների կատարմանը, որպես կանոն, ներգրավելով քրեագետ-մասնագետների՝ վերջիններիս կողմից քրեագիտական տեխնիկայի կիրառմամբ ապահովելու համար ենթադրյալ խոշտանգման փաստի մասին վկայող հետքերի ու իրեղեն ապացույցների, այդ թվում՝ արյան, մազերի և մանրաթելերի հայտնաբերումը,
- տուժողի դատաբժշկական փորձաքննությամբ պարտադիր պարզվի վնասվածքի առաջացման մեխանիզմը,
- անհապաղ առգրավվի տեսանկարահանող սարքերի տեսագրությունները (առկայության դեպքում),
- տուժողի և ենթադրյալ խոշտանգում կատարած անձանց ցուցմունքների միջև էական հակասությունների դեպքում պարտադիր և անհապաղ կատարվեն առերեսումներ,
- պատշաճ հավաքվեն, հետազոտվեն և գնահատվեն տուժողի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև հարցաքննվեն այդ փաստաթղթերը կազմած անձինք,

- ենթադրյալ վատ վերաբերմունքի մասին հաղորդումը դեպքից հետո ուշացումով ներկայացված լինելու դեպքերում մանրակրկիտ ստուգվեն ուշացման պատճառները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե արդյո՞ք դա պայմանավորված չի եղել արգելանքի տակ գտնվելու հետևանքով հնարավոր անօգնականության և վախի զգացողություններով,
- խոշտանգման դեպքի առթիվ իրականացված քրեական վարույթով արդարացնող հիմքով հանրային քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու, քրեական վարույթը կարճելու մասին որոշումներում մանրամասն գնահատական տրվի վատ վերաբերմունքի մասին հաղորդած անձանց հայտնած բոլոր հանգամանքներին:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել և ամփոփվել է նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ (հարկերը, տուրքերը և այլ վճարները վճարելը) և 291-րդ (կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգությունը) հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:

ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ և 291-րդ հոդվածներով նախաձեռնված քրեական վարույթների ուսումնասիրությամբ վեր են հանվել մի շարք խնդրահարույց իրավիճակներ, մասնավորապես՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական վարույթների շրջանակներում հաճախ տարբերակված մոտեցում է ցուցաբերվում պետությանը պատճառված վնասի հաշվարկման հարցում: Մասնավորապես, ներմուծման և հետագայում իրացման գործարքներ իրականացրած անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի գործողությունների արդյունքում պետությանը պատճառված վնասի չափը հաշվարկելիս ներառվում է թե՛ վճարման ենթակա ներմուծման ավելացված արժեքի հարկը, թե՛ իրացման ավելացված արժեքի հարկը՝ այն պարագայում, երբ ներմուծման ավելացված արժեքի հարկը վճարված լինելու դեպքում ենթակա է հաշվանցման իրացման ավելացված արժեքի հարկից: Այսինքն, եթե ներմուծում իրականացնող սուբյեկտը գործի օրինական դաշտում, նրա կողմից փաստացի վճարման է ենթակա ոչ թե ներմուծման և իրացման ԱԱՀ-ների հանրագումարը, այլ դրանց դրական տարբերությունը: Հետևաբար՝ ներմուծման գործարքից պետության «օգուտը» պայմանավորված է ոչ թե ներմուծման և իրացման ավելացված

արժեքի հարկի հանրագումարով, այլ դրանց դրական տարբերությամբ: Նշվածից հետևում է, որ պետությանը փաստացի պատճառված վնասը ոչ թե ներմուծման և իրացման ԱԱՀ-ների հանրագումարն է, այլ գործարքն օրինական դաշտում կատարելու դեպքում պետության փաստացի ստացած «օգուտը» (ներմուծման ԱԱՀ-ի հաշվանցի հաշվառմամբ):

Օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պետությանը պատճառված վնասը հաշվարկվել էր հիշյալ մեխանիզմով (ներմուծման և իրացման ԱԱՀ-ների հանրագումարով կատարված հաշվարկի արդյունքում քննիչի կողմից մեղադրանք էր ներկայացվել չորս անձի՝ 18.04.2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով), սակայն պատշաճ դատախազական հսկողության արդյունքում արձանագրվել էր, որ պետությանը պատճառված վնասը ոչ թե ներմուծման և իրացման ԱԱՀ-ների հանրագումարն է, այլ պետական բյուջե փաստացի վճարման ենթակա գումարը: Արդյունքում՝ դատախազի կողմից սեփական նախաձեռնությամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ անձանց մեղադրանքի ծավալում ներառելով միայն պետությանը փաստացի պատճառված վնասը:

Պետությանը պատճառված վնասի հաշվարկման տարբերակված մոտեցման օրինակ է նաև ապօրինի ձեռնարկատիրական գործունեության փաստն արձանագրելուն զուգահեռ նույն տնտեսվարողի նույն գործունեության նկատմամբ հարկերից խուսափելու հանցակազմով նախնական հաշվարկ կատարելը: Տնտեսվարողի գործունեությունն ապօրինի ձեռնարկատիրություն դիտարկելու պայմաններում վերջինիս կողմից այդ գործունեությունն օրինական դաշտում կատարելու դեպքում հաշվարկման ենթակա հարկի գումարը ևս պետք է դիտարկել որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում պետությանը պատճառված վնաս: Մինչդեռ, գործնականում հանդիպում են դեպքեր, երբ վարույթն իրականացնող մարմինը, արձանագրելով, որ սուբյեկտը զբաղվում է ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ (օրինակ՝ առանց համապատասխան լիցենզիայի զբաղվում է լիցենզավորման ենթակա գործունեությամբ), միաժամանակ կատարում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված հարկեր վճարելուց խուսափելու հանցակազմի նախնական հաշվարկ՝ որպես ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ տնտեսվարողն օրինական դաշտում գործելու դեպքում պետք է վճարեր համապատասխան չափով հարկեր:

Ընդ որում, քրեական վարույթը միաժամանակ նախաձեռնվում է 2 հոդվածով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 281-րդ և 290-րդ հոդվածների համապատասխան մասերով: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, տվյալ պարագայում ենթադրյալ առաջացող հարկի գումարն անհրաժեշտ է հաշվարկել ապօրինի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում պետությանը պատճառված վնասի տիրույթում՝ քրեական վարույթ նախաձեռնելով բացառապես ՀՀ քրեական օրենսգրքի 281-րդ հոդվածով:

Քրեական վարույթների ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ դեպքերում անձի արարքին վերջնական քրեաիրավական գնահատական տալիս վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվում նույն արարքի համար անձի նկատմամբ և՛ ապօրինի ձեռնարկատիրական գործունությամբ, և՛ հարկերից խուսափելու հանցակազմերով քրեական հետապնդում չհարուցելու մասին: Ընդ որում, անձի արարքում ապօրինի ձեռնարկատիրական գործունեության բացակայության վերաբերյալ հետևությունները մեծամասամբ պատճառաբանվում են ապացույցների անբավարարությամբ, իսկ հարկերից խուսափելու հանցակազմը՝ օրենքով նախատեսված խոշոր չափի շեմը չհատելու պատճառաբանությամբ: Մինչդեռ, նման դեպքերում անձի արարքը ենթակա է որակման բացառապես որպես ապօրինի ձեռնարկատիրություն, հետևաբար, անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու վերաբերյալ որոշումը պետք է կայացվի՝ գնահատական տալով բացառապես այդ, այլ ոչ թե նաև հարկերից խուսափելու հանցակազմին:

- Քրեական վարույթների ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում որոշակի տարընթերցումների տեղիք են տալիս նաև այն դեպքերը, երբ հարկային պարտավորություններ առաջացրած համալիր հարկային ստուգման ակտերը, մինչև քրեական վարույթի ընթացքի լուծումը, ՀՀ վարչական դատարանի կողմից ճանաչվում են անվավեր: Որոշ դեպքերում վարույթն իրականացնող մարմինը նշված հանգամանքը դիտարկում է որպես քրեական վարույթը բացառող, մինչդեռ, ոչ բոլոր դեպքերում է ստուգման ակտի անվավերությունը հանգեցնում ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության: Գործնականում հաճախ անտեսվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ԿԴ2/0024/01/17 գործով արձանագրված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ ոչ բոլոր դեպքերում է ստուգման ակտի բացակայությունը վկայում հարկերից խուսափելու հանցակազմի բացակայության մասին: Մասնավորապես, նախադեպային որոշմամբ նշվում է, որ հարկային պարտավորությունները փաստող դատահաշվապահական

փորձաքննության եզրակացությունն ինքնին բավարար է հարկային պարտավորությունների առկայությունը փաստելու համար՝ այն դեպքում, երբ փորձագետն առաջացող հարկային պարտավորությունների վերաբերյալ իր հետևությունները ներկայացնելիս՝ հիմք է ընդունել ոչ թե կամ ոչ միայն ստուգման ակտը, այլ քրեական վարույթի նյութերը կամ այլ ելակետային տվյալներ: Հատկանշական է նաև, որ վարչական ակտերը հաճախ անվավեր են ճանաչվում վարչարարությունն իրականացնող անձի կողմից ընթացակարգային խախտումների հետևանքով: Նման պայմաններում անընդունելի է քրեական վարույթի հետագա ընթացքը վարչական ակտի անվավերությամբ պայմանավորելը:

- Երբեմն հակասող մեկնաբանություններ են տրվում նաև քրեական վարույթի շրջանակներում ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված հարկային վաղեմության հաշվառմանը: Որոշ դեպքերում հարկային վաղեմությունը կիրառվում է քրեորեն պատժելի արարքը գնահատելիս, որոշ դեպքերում՝ ոչ: Մասնավորապես, հարկային վաղեմություն կիրառելու կողմնակիցներն իրենց տեսակետը մեկնաբանում են ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածում մեջբերված «հարկեր, տուրքեր կամ այլ վճարներ» եզրույթների՝ բլանկետային հանդիսանալու հանգամանքով՝ նշելով, որ դրանց հասկացությունները նախատեսված են հարկային օրենսդրությամբ, հետևաբար՝ այդ օրենսդրությամբ նախատեսված բոլոր կարգավորումները, այդ թվում՝ հարկային վաղեմության վերաբերյալ, կիրառելի են նշված հոդվածով իրականացվող նախաքննության ընթացքում: Մինչդեռ, հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգավորումները քրեական օրենսդրության շրջանակներում կիրառելի են այնքանով, որքանով չեն հակասում քրեական օրենսդրության սկզբունքներին և տրամաբանությանը: Պետությանը պատճառված վնասը քրեաիրավական տեսանկյունից սահմանափակված չէ որևէ վաղեմությամբ, այդ թվում՝ հարկային, հետևաբար՝ պրակտիկայում տարածված վերոհիշյալ մեկնաբանումը ենթակա է վերանայման:
- Գործնականում տարբեր մոտեցումներ են առկա նաև անձին մեղսագրվող արարքում բուն հարկային պարտավորություններից զատ (ապառք) չվճարված հարկի նկատմամբ հաշվարկված տույժերի և տուգանքների ներառման մասով: Մասնավորապես, քրեական վարույթների ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշ դեպքերում անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ, խուսափած հարկային պարտավորություններից զատ, անձին մեղսագրվում է նաև ուղղակի դիտավորությամբ նշված հարկային պարտավորությունների համար հաշվարկված տույժերի և տուգանքների խուսափում:

Ընդ որում, նման մոտեցումը մեկնաբանվում է ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված խրախուսական նորմի համատեքստում:

Նման մոտեցումն արդարացված չէ: Մասնավորապես, անձի կողմից հարկերից խուսափելու դիտավորությունը չի կարող ուղղված լինել հաշվարկվող տույժերից կամ տուգանքներից խուսափելուն, քանի որ նշված տույժերը և տուգանքները հաշվարկվում են անձի կողմից արդեն իսկ գոյացած հարկային պարտավորությունը չկատարելու արդյունքում: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված կարգավորմանը, ապա այն ունի խրախուսական բնույթ և պարզապես նախատեսում է նշված հոդվածով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանները՝ դրանց շարքում նշելով նաև հաշվարկված տույժերի վճարման պայմանը: Ընդ որում, խրախուսական նորմով հաշվարկված տույժերի վճարման պայման նախատեսված լինելը պատահական չէ և պայմանավորված է խրախուսական նորմերին բնորոշ առանձնահատկությամբ: Մասնավորապես, խրախուսական նորմով հարկային պարտավորությունից զատ՝ տույժերի վճարման պայմանի նախատեսումն այն բացասական հետևանքն է, որը կրում է անձը նշված հանցանքի կատարման համար:

Հակառակ մոտեցման պարագայում՝ խրախուսական նորմը կարժեզրկվեր, քանի որ հարկերից խուսափող սուբյեկտը կաշկանդված չէր լինի որևէ բացասական հետևանքով: ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված խրախուսական կարգավորումը, նախկին օրենսգրքով նախատեսված համապատասխան խրախուսական նորմի համեմատ, մեղմացվել է, քանի որ եթե նախկինում որպես խրախուսական նորմի կիրառման պայման՝ նախատեսված էր հաշվարկված տույժերի և տուգանքների միաժամանակյա վճարումը, ապա նոր կարգավորմամբ նշված պայմանը վերաբերելի է միայն հաշվարկված տույժերին: ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական վարույթների ուսումնասիրությունը վկայում է, որ հաճախ հանցակազմի առկայությունը փաստելու համար վարույթն իրականացնող մարմինը բավարար է համարում այն հանգամանքը, որ ՀՀ սահմանը հատելիս անձի մոտ առկա են Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրությամբ թույլատրելի, առանց գրավոր հայտարարագրման տեղափոխվող կանխիկ դրամական միջոցներ և (կամ) վճարային գործիքների արժեքի կրկնապատիկը գերազանցող կանխիկ դրամ՝ նշված մոտեցումը մեկնաբանելով «օրենքի չիմացությունը չի ազատում քրեական պատասխանատվությունից» սկզբունքի համատեքստում: Մինչդեռ, քրեական վարույթների ուսումնասիրությունը վկայում է համանման պայմաններում քրեական հետապնդումը բացառող մի շարք հանգամանքների առկայության մասին,

որոնք հաճախ վերոհիշյալ ձևական մոտեցման պայմաններում անտեսվում են: Մասնավորապես, որոշ քրեական վարույթների նախաքննությամբ հաստատված է համարվել, որ մաքսանենգության առարկան գտնվել է մաքսային տեսուչների համար տեսանելի վայրում կամ ի պատասխան մաքսային հսկողությունն իրականացնող անձի հարցադրման՝ ապրանքը տեղափոխող անձը հայտնել է իր մոտ դրա առկայության մասին և այլն: Նշված հանգամանքներն էական են անձի կողմից կանխիկ դրամական միջոցների մաքսանենգություն կատարելու հանցակազմի սուբյեկտիվ կողմը գնահատելու համար: Այս համատեքստում տեղին է փաստել, որ ԼԴ3/0004/01/22 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններին՝ արձանագրելով դրանց հիմնավոր լինելը:Մասնավորապես, նշված քրեական գործով ստորադաս դատարանների կողմից մեղադրյալի մոտ կանխիկ դրամական միջոցների մաքսանենգություն կատարելու սուբյեկտիվ կողմի առկայությունը փաստվել էր այնպիսի հանգամանքների հաշվառմամբ, ինչպիսիք են մաքսանենգության առարկայի գտնվելու ոչ տեսանելի վայրը (մուգ, անթափանց պայուսակում), մաքսային տեսուչի՝ մաքսանենգության առարկայի առկայության վերաբերյալ տրված հարցին բացասական պատասխան տալը, անձի մասնագիտությունը (երկար տարիներ բեռնափոխադրող ընկերության վարորդ աշխատելը):

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել և ամփոփվել է նաև 2022, 2023 թվականների և 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 383-րդ հոդվածով (ընդերքի պահպանման և օգտագործման պահանջները խախտելը) նախատեսված հանցագործությունների հատկանիշներով քննված քրեական վարույթներով նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2022 թվականի ընթացքում 15 քրեական վարույթով պետությանը պատճառված վնասի չափը կազմել է 396.292.786 ՀՀ դրամ, որից 1 վարույթով վերականգնվել է 130.455.130 ՀՀ դրամը:

2023 թվականի ընթացքում 6 քրեական վարույթով պետությանը պատճառված վնասի չափը կազմել է 775.394.290 ՀՀ դրամ, որից 1 վարույթով վերականգնվել է 147.192.448 ՀՀ դրամը:

2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում 15 քրեական վարույթով պետությանը պատճառված վնասի չափը կազմել է 514.409.890 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 92.078.102 ՀՀ դրամ:





Այսպիսով 2022 թվականի համեմատությամբ 2023 թվականի ընթացքում ենթադրյալ հանցագործությունների արդյունքում պետությանը պատճառված պարզված վնասի չափը ավելացել է 379.101.504 ՀՀ դրամով կամ 95.66 %-ով: Համեմատության համար նշենք, որ միայն 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում պարզված՝ պետությանը պատճառված վնասի չափը կազմել է 514.409.890 ՀՀ դրամ:

Աճի դինամիկա է արձանագրվել նաև պատճառված վնասների վերականգնման գործընթացում: Մասնավորապես, 2023 թվականին, 2022 թվականի համեմատությամբ, վերականգնված վնասի չափը կազմել է 16.737.318 ՀՀ դրամով կամ 12.8 %-ով ավելի: Համեմատության համար պետք է նշել, որ միայն 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում վերականգնված վնասի չափը կազմել է 92.078.102 ՀՀ դրամ, ինչը վկայում է գործընթացում դրական դինամիկայի կայունության մասին:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ հիմնականում Արարատի և Արմավիրի մարզերում արձանագրվել են դեպքեր, երբ որոշ ընկերությունների տնօրեններ, իրականում չունենալով ձկնաբուծարան կառուցելու և ձկնաբուծությամբ զբաղվելու նպատակ, այդ գործունեությամբ զբաղվելու պատրվակով դիմել են տեղական ինքնակառավարման մարմնին, ստացել ձկնաբուծարան կառուցելու շինթույլտվություն և, օգտվելով ոչ վտանգավոր թափոնի իրացմամբ զբաղվելու արգելք նախատեսված չլինելու հանգամանքից, խախտելով «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի պահանջները և չունենալով ընդերքօգտագործման իրավունք՝ փաստացի ապօրինի արդյունահանել են պետական սեփականություն հանդիսացող օգտակար հանածոն:

Մասնավորապես, ապօրինի հանքարդյունահանումն իրականացվել է ջրավազանների համար փոսեր փորելու անվան տակ:

Նման դեպքերում տնտեսվարողները, նախքան համապատասխան թույլտվություններ ստանալը, մասնագետների օգնությամբ և հատուկ տեխնիկաների գործադրմամբ նախապես պարզած են լինում կոնկրետ տեղանքում օգտակար հանածո հանդիսացող ավազի պաշարի առկայությունը, քանակությունը, ապա դիմում են ձկնաբուծարան կառուցելու շինթույլտվություն ստանալու համար:

Նման դեպքերում արարքը հիմնավորելու տեսանկյունից խնդիրներ են առաջանում՝ պայմանավորված ջրավազաններ կառուցելու համար տրված թույլտվությունների ժամկետների երկարատևության հետ՝ 60 ամիս, քանի որ գրեթե բոլոր դեպքերում տնտեսվարողները պատճառաբանում են, թե դեռևս ունեն ժամկետ և կառուցելու են ձկնաբուծական տնտեսություն:

Խնդիր է շինթույլտվություններում ջրավազանների համար նախատեսված խորությունը՝ 5 մետր և ավելի, որը համապատասխանում է ավազի արդյունավետ ապօրինի արդյունահանման խորությանը:

Այլ դեպքերում իրավախախտներն ավազի ապօրինի հանքարդյունահանումն իրականացրել են սեփականությամբ իրենց կամ այլ անձանց պատկանող, հաճախ

գյուղատնտեսական կամ ջրային նշանակության հողատարածքներից:

Անօրինական հանքարդյունաբերության հետ կապված հանցագործությունների թվում զգալի են նաև այն դեպքերը, երբ արդեն հանքարդյունաբերության թույլտվություն ունեցող իրավաբանական անձինք արդյունահանումն իրականացնում են լիցենզիայով, պայմանագրով և լեռնահատկացման ակտով իրենց հատկացված տարածքների սահմաններից դուրս:

Միևնույն ժամանակ, ընկերությունների կողմից օգտակար հանածոյի արդյունահանման գործընթացում արձանագրված ընդերքի պահպանման և օգտագործման կանոնների տևական և կոպիտ խախտումները վկայում են ընդերքի ոլորտում ռիսկերի կառավարման և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման ոչ բավարար լինելու մասին:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 281-րդ հոդվածով նախաձեռնված վարույթների գերակշիռ մասի պարագայում հանցագործության մասին հաղորդումները ներկայացվել են Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցների կողմից: Որոշ դեպքերում հաղորդումները ներկայացվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Թեև շատ դեպքերում առկա են ապօրինի ձեռնարկատիրական գործունեության մասին տվյալներ, սակայն սակավաթիվ են ՊԵԿ ծառայողների կողմից արձանագրված դեպքերը: Մինչդեռ, տրամադրված տարածքից դուրս հանքարդյունահանումը չի կարող չանդրադառնալ տնտեսվարողի եկամուտների աճի վրա, հետևաբար Պետական եկամուտների կոմիտեն պետք է լինի խախտումները հայտնաբերելու և արձանագրելու շահագրգիռ կողմ:

Նշված և այլ խնդիրների մասին Դատախազության կողմից 2024 թվականի ընթացքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ներկայացվել են գրավոր առաջարկություններ, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են՝

- ավազի արդյունահանման հետևանքով գետի հունի փոփոխությունը բացառելու նպատակով ընդերքի օգտագործման գործընթացը կարգավորող ավելի խիստ կանոններ և նորմեր մշակելուն,
- ընդերքօգտագործման իրավունքի չարաշահման դեպքերը բացառելու նպատակով ընդերքի պահպանության և ընդերքօգտագործման նկատմամբ վերահսկողությունը խստացնելուն,
- ընդերքի ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանումն ապահովելու նպատակով՝

- ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին յուրաքանչյուր դեպքում «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքով նախատեսված պարտավորությունները չկատարելու և ընդերքօգտագործման իրավունքի պայմանները խախտելու դեպքում գրավոր նախազգուշացում տալուն, իսկ լիազոր մարմնի սահմանած ժամկետում զգուշացման հիմքերը չվերացվելու դեպքում՝ ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելուն,
- ոչ վտանգավոր թափոն համարվող՝ «հողագրունտ» տեսակի թափոնի համար պարտադիր անձնագրի տիտղոսաթերթ տրամադրելուն և վերամշակման, տեղափոխման ու իրացման վերաբերյալ սահմանափակումներ նախատեսելուն,
- ոչ վտանգավոր թափոնների վերամշակման արդյունքում ստացված ապրանքների վաճառքն ընկերությունների կողմից արգելելուն,
- հնարավոր ռիսկերը բացառելու նպատակով՝ նախքան ջրավազան կառուցելու վերաբերյալ դրական եզրակացություն տալը՝ տնտեսվարողից ջրօգտագործման թույլտվություն պահանջելուն,
- ջրավազանների կառուցման գործընթացում հնարավոր չարաշահումները բացառելու նպատակով դրանց կառուցման գործընթացում եզրակացությամբ նշված պահանջների նկատմամբ հետևողականություն ցուցաբերելուն և խախտումներ հայտնաբերելու դեպքում եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու մասին անհապաղ որոշում կայացնելուն,
- ջրավազաններ կառուցելու համար սահմանվող 60-ամսյա ժամկետը կրճատելուն,
- համայնքային հողերն այլ նպատակներով օգտագործելու հնարավոր դեպքերը բացառելու ուղղությամբ համայնքների ղեկավարների կողմից ամենօրյա հսկողություն իրականացնելուն:

Վերը նշված առաջարկությունները մասամբ ընդունվել են, որի կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից կազմվել և շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2008 թվականի մարտի 1-ի հետընտրական զարգացումների հետ կապված քրեական և դատական գործերի շրջանակներում ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի և մյուսների մեղադրանքի վերաբերյալ.

- 2023 թվականի դեկտեմբերի 27-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ 2003 թվականի

ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով իրականացված հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

- Վճռաբեկ դատարանը 2024 թվականի հունվարի 19-ի որոշմամբ դիմել է Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերի և 366-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:[8]
- Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 22-ի թիվ ՍԴՈ-1741 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-ին հոդվածի 3-րդ մասը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող այն մեկնաբանությամբ, որ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի այն նորմը, որով որակվել է մեղադրյալին մեղսագրվող արարքը, Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելիս մեղադրողը կարող է մինչև դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրյալին առաջադրված մեղադրանքը (նրան մեղսագրվող արարքի իրավական որակումը)՝ մեղադրյալի արարքում քրեական օրենքով նախատեսված այլ արարքի հատկանիշների առկայության պարագայում՝ անկախ դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտումից:
- Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-Ո-54-Կ-6 որոշման հիման վրա դատավոր Աննա Դանիբեկյանի լիազորությունները դադարեցվել են, և քրեական գործը 2024 թվականի սեպտեմբերի 2-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Էդուարդ Մկրտչյանին:
- 2024 թվականի սեպտեմբերի 6-ին դատավոր Էդուարդ Մկրտչյանը կայացրել է «Քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին» որոշում:

8. *ՀՀ Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 26-ի թիվ ՍԴՈ-1586 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր: Պաշտպանների կողմից միջնորդություններ են ներկայացվել Առաջին ատյանի դատարան՝ իրենց պաշտպանյալների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթն այդ մասով կարճելու մասին: Մեղադրողը միջնորդել է քրեական գործի վարույթը կասեցնել և դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ կիրառման ենթակա իրավանորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար: Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի ապրիլի 6-ի որոշման համաձայն Ռ.Ք.-ի, Ս.Օ.-ի, Ց.Խ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասով և Ա.Գ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-ին հոդվածով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով, և այդ մասով քրեական գործի վարույթը կարճվել է: Վերոնշյալ որոշման դեմ մեղադրող Գ.Բ.-ի, տուժող Ա.Կ.-ի, տուժող Ա.Ա.-ի ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի, Ռ.Ք.-ի պաշտպաններ Հ.Խուդոյանի, Հ.Ալուսյանի վերաբերյալ որոշումների դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը՝ խնդրելով բեկանել ստորադաս դատական ատյանների որոշումները և քրեական գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության: 2022 թվականի ապրիլի 18-ին Վճռաբեկ դատարանում ստացվել է Ռ.Ք.-ի պաշտպան Հ.Ալուսյանի վճռաբեկ բողոքի պատասխանը, որով վերջինս խնդրել է ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին: ՀՀ գլխավոր դատախազի միջնորդությունը և վճռաբեկ բողոքը մերժել: Վճռաբեկ դատարանի 2022 թվականի մարտի 18-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ: 2022 թվականի հուլիսի 14-ին գործը բաշխվել (հանձնվել) է ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմին: Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունվարի 17-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:*

- 2024 թվականի սեպտեմբերի 9-ին թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը ստացվել է Հակակոռուպցիոն դատարանում և մակագրվել է դատավոր Սարգիս Պետրոսյանին: Քրեական գործին շնորհվել է ՀԿԴ/0174/01/24 համարը:
- 2024 թվականի սեպտեմբերի 11-ին կայացված որոշմամբ Հակակոռուպցիոն դատարանը, նախագահությամբ դատավոր Սարգիս Պետրոսյանի, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0174/01/24 քրեական գործով վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:
- 2024 թվականի սեպտեմբերի 12-ին Վճռաբեկ դատարանը բեկանել է թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի ապրիլի 16-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ քրեական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 26-ի որոշումը և գործն ուղարկել է Հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2024 թվականի հուլիսի 22-ի թիվ ՍԴՈ-1741 որոշման լույսի ներքո, եթե մեղադրողը գտնում է, որ կատարված արարքը կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի այլ գործող հոդվածով, ապա իրավասու է մեղադրանքի լրացմանը կամ փոփոխմանն ուղղված քայլեր ձեռնարկել:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ հանցակազմ նախատեսող իրավանորմը Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվում, ապա դատարանում մեղադրողի կողմից մեղադրանքի փաստական կողմից անկախ՝ բացառապես մեղադրանքի իրավական կողմի փոփոխությամբ ընթացակարգ է սահմանվում մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը փոխել մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավական որակումն արարքում քրեական օրենքով նախատեսված այլ արարքի հատկանիշների առկայության պարագայում՝ անկախ դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտումից:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «մինչև վերդիկտ կայացնելու համար առաջին ատյանի դատարանի՝ առանձին սենյակ հեռանալը հանրային մեղադրողն իրավասու է փոխելու մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը»:

- 2024 թվականի հոկտեմբերի 15-ին հանրային մեղադրողի կողմից կայացվել են Ռ.Ք.-ին, Ս.Օ.-ին, Յու.Խ.-ին և Ա.Գ.-ին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական

քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասով վերագրված արարքի իրավական գնահատականը փոխելու և նրանց 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով (համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին) նոր մեղադրանք ներկայացնելու մասին որոշումներ:

- 2025 թվականի հունվարի 18-ի դրությամբ դատական քննությունը շարունակվում է:
- Թիվ 62202608 քրեական գործով տուժողներ Ա.Ֆ.-ի, Տ.Խ.-ի, Դ.Պ.-ի, Ս.Հ.-ի և Տ.Ա.-ի մասով նախաքննությունը շարունակվում է:

Հաշվետու ժամանակահատվածում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հետևողական և պատշաճ դատախազական հսկողության, ինչպես նաև շրջադարձային դատախազական ակտեր կայացնելու արդյունքում հաստատված մեղադրական եզրակացություններով դատարան են հանձնվել հետևյալ քրեական վարույթները՝

- ՀՀ պաշտպանության նախկին նախարար Վ.Ս.-ի կողմից փողերի լվացում կատարելու վերաբերյալ քրեական վարույթը:
- ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Գավառի սոցիալական ապահովության տարածքային բաժնի նախկին պետ Վ.Բ.-ի կողմից բազմաթիվ դեպքերով կաշառք ստանալու վերաբերյալ քրեական վարույթը:
- «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ԻԱՄ-ի նախկին նախագահ Ռ.Հ.-ի հետ փոխկապակցված անձանց կողմից կեղծիքներ կատարելու միջոցով խարդախությամբ առանձնապես խոշոր չափերի հափշտակություններ, վստահված գույքի հափշտակություն, ապա փողերի լվացում կատարելու վերաբերյալ քրեական վարույթը:
- Երևան քաղաքի Աբովյան-Արամի-Նալբանդյան փողոցներին հարող տարածքում անշարժ գույք ձեռքբերում և կառուցապատում իրականացրած ընկերության տնօրեն Ա.Կ.-ի կողմից, անշարժ գույքի գնահատում իրականացնող ընկերության տնօրեն Հ.Ա.-ի օժանդակությամբ, մի շարք անձանցից առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 666 միլիոն 765 հազար դրամ հափշտակելու, ինչպես նաև իրավունք վերապահող ակնհայտ կեղծ պաշտոնական փաստաթղթեր օգտագործելու վերաբերյալ վարույթը (նախաքննության ընթացքում Ա.Կ.-ի կողմից ամբողջությամբ վերականգնվել է հանցագործությամբ պատճառված վնասը):

- Երեբունի վարչական շրջանում ապօրինի արդյունահանված օգտակար հանածոյի վերաբերյալ քրեական վարույթը. պետությանը պատճառվել էր 79 մլն դրամի վնաս:
- «Ծիծեռնակաբերդի խճուղի» 4 հասցեում գտնվող անշարժ գույքը կադաստրային արժեքից հինգ անգամ ավել ցածր գնով ձեռք բերելու փորձ կատարելու վերաբերյալ քրեական վարույթը:
- Երևանի համայնքներից մեկի նախկին ղեկավարի կողմից համայնքապատկան մանկապարտեզը հափշտակելու վերաբերյալ քրեական վարույթը:Արարատի մարզի բնակավայրերից մեկի ղեկավարի կողմից կենցաղի տունը շուկայականից էականորեն ցածր գնով իր աներոջը վաճառելու վերաբերյալ քրեական վարույթը:
- Կորոնավիրուսային վարակի ընթացքում բուժառուների հիվանդության 829 կեղծ պատմագրի հիման վրա՝ Առողջապահության նախարարությունից խարդախությամբ 263 մլն 480 հազար դրամ հափշտակելու վերաբերյալ քրեական վարույթը:
- Երեբունի համայնքի նախկին ղեկավարի կողմից «Վարդավառ» զբոսայգին վարձակալությամբ տրամադրելու գործընթացում պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ քրեական վարույթը:
- Թմրամիջոցների ապօրինի իրացման և դրանց արդյունքում ստացված՝ շուրջ 2 մլրդ դրամը գերազանցող փողերի լվացման վերաբերյալ քրեական վարույթը:
- Օրենքի խախտմամբ օտարված «Շողեր» մսուր-մանկապարտեզի վերաբերյալ քրեական վարույթը:
- «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնի նախկին տնօրենի կողմից խոշոր չափի կաշառք պահանջելու և ստանալու վերաբերյալ քրեական վարույթը:
- «Արմավիր» ՔԿՀ-ի մի շարք պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով անազատության մեջ գտնվող անձի սպանություն արձանագրելու վերաբերյալ քրեական վարույթը:
- «Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ նախկին և ներկա նախագահների կողմից առանձնապես խոշոր չափերով գումար հափշտակելու վերաբերյալ քրեական վարույթը:
- Թմրամիջոցների մաքսանենգության, ապօրինի իրացման և դրանց արդյունքում ստացված՝ մոտ 90 մլն դրամը գերազանցող փողերի լվացման վերաբերյալ քրեական վարույթը:
- Առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացման և դրա արդյունքում ստացված՝ շուրջ 7 մլն դրամի չափով փողերի լվացման վերաբերյալ քրեական վարույթը:
- Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ և լիազոր նախկին դեսպանին պատկանած՝ ծխախոտային արտադրանքի ներմուծման և իրացման գործունեությամբ զբաղվող սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերության տնօրենի կողմից հարկերից խուսափելու վերաբերյալ քրեական վարույթը:

- Ժամկետային զինվորական ծառայությունից խուսափած անձի վերաբերյալ քրեական վարույթը:
- Պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի տնօրենի նախկին պաշտոնակատարի կողմից կաշառք ստանալու վերաբերյալ քրեական վարույթը:
- Զորակոչի բաժնի պետի կողմից 23 հազար ԱՄՆ դոլար կաշառք ստանալու վերաբերյալ քրեական վարույթը:

Գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազները 2024 թվականին ձեռնամուխ են եղել առանձնակի բարդություն ներկայացնող՝ շուրջ 100 և ավելի դրվագներ ունեցող քրեական վարույթի (Սուրբ Աթոռում արտակարգ և լիազոր նախկին դեսպան Մ.Մ.-ի կողմից ստեղծված հանցավոր կազմակերպությանը մասնակցելու և այլ ենթադրյալ հանցանքների կատարման մեջ մեղադրվող անձանց վերաբերյալ քրեական վարույթը) ուսումնասիրությանը և քննության առարկա հանդիսացող հանցավոր դրվագներից շատերի ընթացքը լուծելուն: Քրեական վարույթի ուսումնասիրության արդյունքում՝ դատախազի հանձնարարությամբ, 2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի բազմաթիվ հոդվածների հատկանիշներով (այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի) նախաձեռնվել են քրեական վարույթներ: Նշված վարույթի շրջանակներում վերադաս դատախազի կողմից ձևավորվել է դատախազական խումբ, միայն դատախազական խմբի ղեկավարի կողմից սեփական նախաձեռնությամբ հարուցվել է 33 հանրային քրեական հետապնդում: Դատախազական գործիքակազմի կիրառման արդյունքում պարզվել է, որ միայն նշված վարույթով պետությանը և անձանց պատճառված վնասը, այս պահի դրությամբ, կազմում է շուրջ 350 միլիոն ԱՄՆ դոլար:

Դատախազական պատշաճ հսկողության արդյունքում՝ արդեն իսկ որոշ դրվագներով առկա են պետությանը պատճառված վնասի մասով վերականգնումներ (օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունից 2010 թվականին հափշտակված, նույն տարվա ընթացքում իրականացված գնահատման համաձայն՝ 1 միլիարդ 755 միլիոն դրամ արժեքով «Ռադիո» ՓԲ ընկերությունը վերադարձվել է պետությանը. «Ռադիո» ՓԲ ընկերության սեփականատեր «Միջազգային Ռադիոցանց» ՓԲ ընկերության 100 տոկոս բաժնեմասերը 2025 թվականի փետրվարի 12-ին փոխանցվել են Հայաստանի Հանրապետությանը): Նույն վարույթի շրջանակներում հսկող դատախազի կողմից արձանագրվել է, որ քրեական վարույթում առկա են փաստական տվյալներ այն մասին,

որ Մ.Մ.-ն և Ա.Ջ.-ն, 2011 թվականից հանդիսանալով Բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված՝ «JAZZVE HOLDING» ընկերության հիմնադիրը, փաստացի ղեկավարելով ընկերությանը պատկանող՝ «Ջազզվե» ՍՊ ընկերության գործունեությունը, ընկերության գործունեության փաստացի պատասխանատուներ Լ.Ա.-ի և Ա.Պ.-ի հետ միասին, տեղեկացված լինելով, որ 2013 թվականի նոյեմբեր ամսին «Ջազզվե» ՍՊ ընկերության գործունեությանը ներգրավված են 170 վարձու աշխատողներ, նույն ընկերության տնօրեն Ա.Դ.-ին հանձնարարել են՝ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպել

«Ջազզվե» ՍՊ ընկերությունում 78 վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը, հարկման համար հիմք հանդիսացող աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը չներկայացնել հարկային մարմին և խուսափել առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց:

Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով Ա.Դ.-ն, խախտելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները, օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին դիտավորությամբ չի ներկայացրել «Ջազզվե» ՍՊ ընկերության 170 աշխատակիցների աշխատանքի ընդունումը հավաստող՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը, ընկերության չգրանցված 78 վարձու աշխատողներին աշխատավարձի գծով վճարված եկամուտները չեն հայտարարագրվել 2013 թվականի նոյեմբեր ամսվա համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի հաշվարկում, ինչի արդյունքում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դրույթների ուժով (համաձայն որոնց՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող) տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ՝ (..) դ) դ. 600.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը գերազանցում է ինը) չարամտորեն խուսափել է 46.800.000 ՀՀ դրամ եկամտային հարկ (78x600.000) վճարելուց:

Բացի այդ, «Ջազզվե» ՍՊ ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Ա.Դ.-ի, վարձու աշխատողներին վճարված եկամուտները 2013 թվականի նոյեմբեր ամսին թերհայտարարագրել է առնվազն 5.162.898 ՀՀ դրամի չափով, որից նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ չի վճարել 1.259.747 ՀՀ դրամ լրացուցիչ եկամտային հարկ:

Այսպիսով, Մ.Մ.-ի, Ա.Ջ.-ի, Լ.Ա.-ի և Ա.Պ.-ի կազմակերպմամբ «Ջազզվե» ՍՊ ընկերության տնօրեն Ա.Դ.-ն, հարկման համար հիմք հանդիսացող աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը չի ներկայացրել հարկային մարմին, ինչի արդյունքում խուսափել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 48.059.747 ՀՀ դրամ եկամտային հարկ վճարելուց:

Նշված դրվագով դատախազի կողմից հանձնարարվել է նախաձեռնել քրեական վարույթ, որից հետո դատախազը սեփական նախաձեռնությամբ ի թիվս այլ դրվագների նաև այդ դրվագով հանրային քրեական հետապնդում է հարուցել Մ.Մ.-ի նկատմամբ, որից հետո՝ 2024 թվականի սեպտեմբերի 5-ին, ՀՀ գլխավոր դատախազություն է ստացվել Ա.Դ.-ի դիմումը, համաձայն որի՝ տեղեկացել է, որ թիվ 83160718 քրեական վարույթով պարզվել է, որ 2013 թվականին «Ջազզվե» ՍՊ ընկերությունում որպես տնօրեն աշխատած ժամանակահատվածում իր գործունեության արդյունքում պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 48.059.747 ՀՀ դրամի վնաս: Նշված ժամանակահատվածում եկամտային հարկեր չվճարելը եղել է իր գործունեության արդյունքում, աշխատակիցների պայմանագրերը չի ներկայացրել հարկային մարմին, դրանից որևէ մեկը տեղյակ չի եղել, դա եղել է իր նախաձեռնությունը, որի մասին որևէ մեկին չի հայտնել: Պատրաստ է ամբողջությամբ վճարել 48.059.047 ՀՀ դրամ գումարը և խնդրել է իր նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի խրախուսական նորմը և այդ հիմքով ազատել քրեական պատասխանատվությունից: Նշված դիմումին կից ներկայացվել է բանկային փոխանցման անդորրագիր, համաձայն որի՝ 2024 թվականի սեպտեմբերի 5-ին «Ջազզվե» ՍՊ ընկերության կողմից ՀՀ պետական գանձապետարանի հաշվեհամարին է փոխանցվել **48.059.747** ՀՀ դրամ գումար՝ որպես պետությանը պատճառված վնասի հատուցում:

Արդյունքում, հսկող դատախազի կողմից սեփական նախաձեռնությամբ 2024 թվականի սեպտեմբերի 6-ին որոշում է կայացվել «Ջազզվե» ՍՊ ընկերությունում որպես տնօրեն Ա.Դ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին:

Հսկող դատախազի կողմից նույն քրեական վարույթի ուսումնասիրությամբ արձանագրվել է նաև «ԷյԷմՓիՁի Գրուպ» ՓԲ ընկերության՝ ի դեմս տնօրեն Ա. Թ.-ի և «Ալեքս-Գրիգ» ՍՊ ընկերության՝ ի դեմս հիմնադիր և տնօրեն Մ.Ղ.-ի կողմից առանձնապես խոշոր չափերով, համապատասխանաբար՝ շուրջ 512.000.000 և 400.000.000 ՀՀ դրամի չափով հարկեր վճարելուց խուսափելու դեպքեր: Պատշաճ դատախազական հսկողության արդյունքում Ա.Թ.-ն ամբողջությամբ՝ **512.000.000** ՀՀ դրամի չափով, իսկ Մ.Ղ.-ն մասնակիորեն՝ **300.000.000** ՀՀ դրամի չափով կատարել են հաշվարկված լրացուցիչ հարկային պարտավորությունները:

Վերոնշյալ վարույթից բացի, Գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից երկու այլ վարույթներով կայացվել են շրջադարձային որոշումներ:

Մասնավորապես՝

- առաջին վարույթով Դատախազի կողմից հանձնարարվել է ՊԵԿ-ից ստացված հաղորդման կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն: Արդյունքում՝ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ընկերության տնօրենի կողմից ՀՀ պետական բյուջե է վերականգնվել 223 մլն 513 հազար 158 դրամ և 2024 թվականի դեկտեմբերի 27-ին հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել ընկերության տնօրենի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին՝ ոչ արդարացնող հիմքով:
- երկրորդ՝ «Ն և Ս Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության կողմից առանձնապես խոշոր չափերով հարկ չվճարելու դեպքի վերաբերյալ հաղորդման հիման վրա նախաձեռնված քրեական վարույթով դատախազը մերժել է ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հարուցված հանրային քրեական հետապնդումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով դադարեցնելու վերաբերյալ քննիչի միջնորդությունը և մի շարք վարութային գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարարություն է տվել: Դատախազի հանձնարարության հիման վրա կատարված վարութային գործողությունների արդյունքում «Ն և Ս Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության մոտ հաշվարկվել են լրացուցիչ **224.641.300** ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություններ: Նախաքննության ընթացքում մեղադրյալն ամբողջությամբ հատուցել է պետությանը պատճառված վնասը և չի առարկել, որպեսզի իր նկատմամբ հարուցված քրեական

: հետապնդումը դադարեցվի ոչ արդարացնող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով: 2024 թվականի հուլիսի 11-ին հսկող դատախազը որոշում է կայացրել ոչ արդարացնող հիմքով մեղադրյալի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

3

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

2024 թվականին Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարաններ է ուղարկվել 11.846 գործ՝ 13.224 անձի վերաբերյալ[9], որոնցից 11.801-ը 13.179 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 45-ը 45 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար:

Համեմատության համար նշենք, որ 2023 թվականի ընթացքում Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարաններ է ուղարկվել 8448 գործ՝ 10.170 անձի վերաբերյալ: **2024 թվականին դատարան ուղարկված գործերի թիվը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշին 3398-ով կամ 40.2%-ով:**

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարաններ ուղարկված գործեր



Դատարաններում քննվել և ավարտվել է 9830 քրեական գործ՝ 10.691 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 5080 գործ՝ 5485 անձի վերաբերյալ, 2022 թվականին՝ 3208 գործ՝ 3690 անձի վերաբերյալ):

Այսպիսով, 2024 թվականին դատարաններում քննվել և ավարտվել է 4750-ով կամ 93.5%-ով ավելի գործ, քան 2023 թվականին:

Դատարաններում քննված և ավարտված քրեական գործեր



9. Վիճակագրական տվյալները ներկայացված են՝ ըստ «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական տարեկան հաշվետվությունների:

2024 թվականին դատարաններում քննված և ավարտված՝ 10.691 անձի վերաբերյալ 9830 քրեական գործից 7155-ը կամ 72.8%-ը եղել է ոչ մեծ ծանրության, 1612-ը կամ 16.4%-ը՝ միջին ծանրության, 914-ը կամ 9.3%-ը՝ ծանր և 149-ը կամ 1.5%-ը՝ առանձնապես ծանր:

2024 թվականին դատարաններում քննված և ավարտված 9830 քրեական գործերից		
ոչ մեծ ծանրության	7155	72.8%
միջին ծանրության	1612	16.4%
ծանր	914	9.3%
առանձնապես ծանր	149	1.5%

Նշված քրեական գործերից 8660-ով դատապարտվել է 9224 անձ (2023 թվականին՝ 4163 գործով՝ 4419 անձ, 2022 թվականին՝ 2387 գործով՝ 2721 անձ): Նշված անձանցից 6650-ը (2023 թվականին՝ 2858) կամ 72.1%-ը դատապարտվել են ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու համար, 1424-ը (2023 թվականին՝ 877) կամ 15.4%-ը՝ միջին ծանրության հանցագործություն կատարելու համար, 995-ը (2023 թվականին՝ 600) կամ 10.8%-ը՝ ծանր հանցագործություն կատարելու համար, 155-ը (2023 թվականին՝ 84) կամ 1.7%-ը՝ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար: 61 քրեական գործով 62 անձի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի կարգով կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց (2023 թվականին՝ 43 քրեական գործով՝ 44 անձի նկատմամբ, 2022 թվականին՝ 28 քրեական գործով՝ 29 անձի նկատմամբ):

2024 թվականին ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը, 2023 թվականի համեմատ, աճել է 3792-ով կամ 132.7%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածների թիվն աճել է 547-ով կամ 62.4%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվն աճել է 395-ով կամ 65.8%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվն աճել է 71-ով կամ 84.5%-ով:

Դատապարտված անձանցից 19-ը եղել է անչափահաս (2023 թվականին՝ 21, 2022 թվականին՝ 36), 129-ը՝ կին (2023 թվականին՝ 113, 2022 թվականին՝ 109), 438-ը՝ նախկինում դատված (2023 թվականին՝ 247, 2022 թվականին՝ 169), 150-ը՝ օտարերկրացի (2023 թվականին՝ 84, 2022 թվականին՝ 44): 12 գործով 13 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2023 թվականին՝ 8 գործ՝ 8 անչափահաս, 2022 թվականին՝ 2 գործ՝ 2 անչափահաս):



2024 թվականին դատապարտված անչափահասների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 2-ով կամ 9.5%-ով, դատապարտված կանանց թիվն աճել է 16-ով կամ 14.2%-ով, նախկինում դատված անձանց թիվն աճել է 191-ով կամ 77.3%-ով, իսկ դատապարտված օտարերկրացիների թիվն աճել է 66-ով կամ 78.6%-ով:

2024 թվականի ընթացքում 174 գործով Առաջին ատյանի դատարանների կողմից արդարացվել է 218 անձ (2023 թվականին՝ 90 գործով՝ 105 անձ), իսկ Վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ 1 գործով 1 անձ (2023 թվականին՝ 1 գործով՝ 1 անձ):

2024 թվականին Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից մասնակի արդարացվել է 3 անձ (2023 թվականին՝ 5 անձ), իսկ մեկ կամ մի քանի դրվագով՝ 3 անձ (2023 թվականին՝ 3 անձ):

2024 թվականին արդարացման դատավճիռներ են կայացվել դատարանում ավարտված գործերի ընդամենը 1.8%-ով (2023 թվականի ցուցանիշը նույնն է՝ 1.8%):

2024 թվականի ընթացքում արդարացման դատավճիռների դեմ բերվել է 198 վերաքննիչ և վճռաբեկ բողոք:

2024 թվականին 922 քրեական գործով՝ 1172 անձի վերաբերյալ, քրեական հետապնդումը դադարեցվել է (2023 թվականին՝ 776 քրեական գործ՝ 909 անձի վերաբերյալ), որոնցից 53 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 1 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 12 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 37-րդ հոդվածով, 267 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 91 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքով սահմանված այլ հիմքով, 12 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 628 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, որոնցից՝ 234 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված հիմքով, 266 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված հիմքով, 128 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված այլ հիմքերով, ինչպես նաև 108 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ հիմքերով:

2024 թվականին դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված ընդհանուր վնասը կազմել է 6.875.164.159 դրամ (2023 թվականին՝ 663.495.229 ՀՀ դրամ), որից 6.368.378.029 դրամի վնասը պատճառվել է պետությանը (2023 թվականին՝ 329.814.847 դրամ), 31.736.826 դրամի վնասը՝ համայնքներին (2023 թվականին՝ 251.680 դրամ), իսկ 475.049.304 դրամի վնասը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց (2023 թվականին՝ 333.428.702 դրամ):

Դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնաս



Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է 210.481.758 դրամ (2023 թվականին՝ 173.385.290 դրամ), որից 32.226.234 դրամը՝ պետությանը (2023 թվականին՝ 127.461.328 դրամ), 12.381.468 դրամը՝ համայնքներին (2023 թվականին՝ 251.680 դրամ), 165.874.056 դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց (2023 թվականին՝ 45.672.282 դրամ):

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնված գումար



2024 թվականին դատարաններում քննված քրեական գործերից 2598-ով 2816 անձի նկատմամբ կիրառվել է համաձայնեցման կամ արագացված վարույթ:

2024 թվականին 29 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել է մեղադրյալի բացակայությամբ (հեռակա վարույթ)՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված դրույթների: Այս գործերի թվում են ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Ա.Գ.-ի և Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ և լիազոր նախկին դեսպան Մ.Մ.-ի վերաբերյալ քրեական գործերը:

Այսպես.

- Դատախազը 2023 թվականի օգոստոսի 4-ին հաստատել էր ՀՀ Ազգային ժողովի «Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցության նախկին պատգամավոր Ա.Գ.-ի նկատմամբ հեռակա վարույթի մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերի հետ հանձնել իրավասու դատարան՝ հեռակա դատաքննության: Միաժամանակ, դատախազի կողմից դատարան էր ներկայացվել մեղադրյալ Ա.Գ.-ի նկատմամբ հեռակա դատաքննություն իրականացնելու մասին միջնորդություն: 2024 թվականի դեկտեմբերի 2-ին դատարանը բավարարել է դատախազի միջնորդությունը: Հիշյալ գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի՝ 2023 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ՝ նախկին պատգամավոր Ա.Գ.-ի նկատմամբ հարուցվել էր հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածով, 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով (երեք դրվագ), 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով պարզվել էր, որ Ա.Գ.-ն, ի թիվս այլնի, ապօրինի հարստացման արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերի դրամական միջոցների և գույքի հանցավոր ծագումը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակն ու տեղաշարժը թաքցնելու, դրանց օրինական տեսք հաղորդելու նպատակով, դրանք մտցրել է օրինական շրջանառության մեջ և 2012-2018 թվականներին ձեռք է բերել մի շարք տրանսպորտային միջոցներ ու անշարժ գույք:

Մասնավորապես՝

- 2011 թվականի ապրիլի 6-ին 490 հազար ԱՄՆ դոլարով ձեռք է բերել Ամերիկայի Միացյալ Նահանգների Լոս Անջելես վարչաշրջանի Վուդլենդ Հիլսում գտնվող բնակարանը.
- 2015 թվականին 28 միլիոն դրամով ձեռք է բերել Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Աղաբաբյան փողոցում գտնվող հողատարածքը.
- 2015 թվականի օգոստոսի 10-ին 520 հազար ԱՄՆ դոլարով ձեռք է բերել Գլենդեյլի Քեմփբլ փողոցում գտնվող բնակարանը.
- 2016 թվականի հունիսի 2-ին 475 հազար ԱՄՆ դոլարով ձեռք է բերել Վելլի Վիլիջ թաղամասի Ուիթսեթ Ավենյուի բնակարանը.
- 2019 թվականի մարտի 6-ին 1 միլիոն 525 հազար ԱՄՆ դոլարով ձեռք է բերել Լոս Անջելես վարչաշրջանի Մերրիմանում գտնվող առանձնատունը:

- Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ և լիազոր նախկին դեսպան Մ.Մ.-ի նկատմամբ 2023 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման հիմքերը ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովին ներկայացված Դատախազության 2023 թվականի գործունեության հաշվետվության մեջ: Մ.Մ.-ի նկատմամբ հեռակա դատաքննություն իրականացնելու՝ դատախազի միջնորդությունը բավարարվել է դատարանի 2024 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ:

2024 թվականին դատապարտված 9224 անձից 905-ի նկատմամբ նշանակվել է ազատազրկում պատժատեսակ, որը կազմում է դատապարտվածների 9.8%-ը (2023 թվականին 4419 անձից ազատազրկման է դատապարտվել 653-ը կամ 14.8%-ը): 2024 թվականին, ինչպես 2023 թվականին, որևէ անձ ցմահ ազատազրկման չի դատապարտվել:



Կարճաժամկետ ազատազրկման է դատապարտվել 81 անձ (2023 թվականին՝ 34 անձ):

Տուգանքի է դատապարտվել 5659 անձ (2023 թվականին՝ 2683 անձ): Տուգանքի դատապարտված անձանց քանակը կազմում է դատապարտված անձանց 61.4%-ը:

2024 թվականին 1690 անձի նկատմամբ, որը կազմում է դատապարտված անձանց 18.3%-ը, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ) հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2023 թվականին՝ 778 անձի կամ 17.6%-ի նկատմամբ): Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 475-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 612-ը՝ միջին ծանրության, 576-ը՝ ծանր, 27-ը՝ առանձնապես ծանր հանցագործության համար:

2024 թվականին դատապարտված 11 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 64-րդ) հոդվածը (2023 թվականին՝ 18 անձի, 2022 թվականին՝ 16 անձի նկատմամբ) և նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

2024 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 1258 վերաքննիչ բողոք, իսկ հաշվետու ժամանակաշրջանի սկզբին դատարանների վարույթում մնացորդ բողոքներն եղել են 267, որոնցից 41-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բողոքներից 165-ը կամ 10.8%-ը եղել է արդարացման, 115-ը կամ 7.5%-ը՝ կարճման, 761-ը կամ 49.9%-ը՝ պատժի մեղմության, 19-ը կամ 1.2%-ը՝ արարքի վերաորակման դեմ, իսկ մնացածը՝ այլ հիմքերով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 121-ը կամ 7.9%-ը բավարարվել է, 36-ը կամ 2.4%-ը բավարարվել է մասնակի, 848-ը կամ 55.6%-ը մերժվել է, 14-ով կամ 0.9%-ով կայացվել է այլ որոշում, 443-ով կամ 29.1%-ով բողոքի քննարկումն

ընթացքի մեջ է, 21-ը վարույթ չեն ընդունվել, 1 բողոք դատախազի կողմից հետ է վերցվել, իսկ 41-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերված և նախորդ տարվանից փոխանցված վերաքննիչ բողոքները 625-ն են, որոնցից 1-ը վարույթ չի ընդունվել, իսկ 4-ով ամփոփման ժամանակահատվածում որոշված չի եղել վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 3-ը կամ 0.5%-ը եղել է արդարացման, 5-ը կամ 0.8%-ը՝ կարճման, 18-ը կամ 2.9%-ը՝ պատժի մեղմության դեմ, 494-ը կամ 79%-ը՝ պատժի խստության դեմ, 105-ը կամ 16.8%-ը՝ այլ հիմքով:

Վարույթ ընդունված 620 բողոքներից բավարարվել է 53-ը կամ 8.5%-ը, 27-ը կամ 4.4%-ը բավարարվել է մասնակի, 330-ը կամ 53.2%-ը մերժվել է, 8-ով կամ 1.3%-ով կայացվել է այլ որոշում, 202-ով կամ 32.6%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2024 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կողմից դատական ակտերի դեմ բերված 285 (2023 թվականին՝ 151) և նախորդ տարվանից փոխանցված 35 (2023 թվականին՝ 20) վճռաբեկ բողոքից 85-ով (2023 թվականին՝ 53) լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 144-ով (2023 թվականին՝ 90) որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ներկայացված բողոքներից 91-ը (2023 թվականին՝ 26) ընդունվել է վարույթ, որոնցից 36-ը (2023 թվականին՝ 9) բավարարվել է, 2-ը (2023 թվականին՝ 2) մասնակի է բավարարվել, 1-ը մերժվել է, 52-ի (2023 թվականին՝ 15) քննությունն ընթացքի մեջ է:

ՀՀ գլխավոր դատախազի և տեղակալների կողմից ներկայացված վճռաբեկ բողոքներից հաշվետու ժամանակահատվածում բավարարվել է 11.3%-ը՝ 2023 թվականի 5.3 %-ի դիմաց: Հաշվետու ժամանակահատվածում դատական ակտերի բողոքարկման սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներում, ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների բողոքների հիման վրա, Վճռաբեկ դատարանն ընդունել է ուղենիշային նշանակություն ունեցող մի շարք որոշումներ, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումները միասնական իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից ունեն շրջադարձային նշանակություն:

Այսպես.

1. Վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՔԴ/0196/01/17 գործով 2024 թվականի մայիսի 31-ին կայացված որոշմամբ իրավական դիրքորոշումներ է արտահայտել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նորմերը հետադարձությամբ կիրառելու հնարավորության, մասնավորապես՝ նոր քրեական օրենսդրությամբ հանցանքի դասակարգման խմբի փոփոխության դեպքում վաղեմության ժամկետների կիրառման կապակցությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հետադարձության սկզբունքը մարմնավորված է այն կանոնի մեջ, որ, եթե արարքի կատարման պահին գործող քրեական օրենքի և դրանից հետո ընդունված քրեական օրենքի միջև առկա են տարբերություններ, դատարանը պետք է կիրառի այն օրենքը, որի դրույթներն ավելի բարենպաստ են անձի համար՝ հաշվի առնելով, բնականաբար, քրեական օրենքը հետադարձ ուժով կիրառելու գործող քրեական օրենսդրության առանձնահատկությունները: Ուստի, նպատակ ունենալով իրավակիրառ պրակտիկայում բացառել հետադարձությամբ քրեական օրենքի անհիմն տարածելու կամ անհիմն չտարածելու դեպքերը, Վճռաբեկ դատարանը սահմանել է այն չափորոշիչները, որոնց օգնությամբ իրավակիրառողը պետք է առաջնորդվի քրեաիրավական կոնկրետ իրավահարաբերությունների նկատմամբ նոր քրեական օրենքի կիրառելիության հարցում:

Վճռաբեկ դատարանը, քննարկելով վերագրվող արարքի ծանրության տեսակի փոփոխման իրավական հետևանքները և վերլուծության ենթարկելով անձին մեղսագրվող արարքի՝ նոր ընդունված օրենքի կիրառման արդյունքում ծանրության տեսակը փոփոխվելու դեպքում վաղեմության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ժամկետների կիրառելիության հարցը, արձանագրել է, որ վերագրվող արարքի ծանրության տեսակի փոփոխությունը դեռևս չի նշանակում, որ հանցանքը կատարած անձի համար վաղեմության ժամկետի տեսանկյունից տեղի է ունեցել բարելավում: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի հաշվարկման տեսանկյունից քրեական նոր օրենքով անձին մեղսագրված հանցանքի տեսակի փոփոխությունն ինքնին չի կարող հետադարձ ներգործություն ունենալ:

Վճռաբեկ դատարանը հիշյալ որոշմամբ քննարկել է օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանցանքի տեսակի և վաղեմության ժամկետների փոփոխության հետևյալ իրավիճակները.

ա) արարքի (հանցանքի) թե՛ ծանրության աստիճանը, թե՛ այդ արարքի համար սահմանված վաղեմության ժամկետները խստանում են: Այս դեպքում, անձի վիճակը վատթարացնող օրենքին հետադարձ ուժ տալու արգելքի ուժով կիրառելի են և՛ հանցանքի տեսակի, և՛ վաղեմության ժամկետի վերաբերյալ հանցանքի կատարման պահին գործող կարգավորումները:

բ) արարքի (հանցանքի) ծանրության աստիճանը խստանում է, իսկ այդ արարքի համար սահմանված վաղեմության ժամկետները չեն փոփոխվում: Այս դեպքում ևս կիրառելի են և՛ հանցանքի տեսակի, և՛ վաղեմության ժամկետի վերաբերյալ հանցանքի կատարման պահին գործող կարգավորումները:

գ) արարքի (հանցանքի) ծանրության աստիճանը նվազում է, իսկ այդ արարքի համար սահմանված վաղեմության ժամկետը՝ կրճատվում: Այս դեպքում, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու կանոնի համաձայն՝ կիրառելի են և՛ հանցանքի տեսակի, և՛ վաղեմության ժամկետի վերաբերյալ նոր կարգավորումները:

դ) արարքի (հանցանքի) ծանրության աստիճանը չի փոփոխվում, իսկ այդ արարքի համար սահմանված վաղեմության ժամկետը երկարում է: Այս դեպքում կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խստացնող օրենքին հետադարձ ուժ տալու կանոնը:

ե) արարքի (հանցանքի) ծանրության աստիճանը նվազում է, իսկ այդ արարքի համար սահմանված վաղեմության ժամկետը չի փոփոխվում: Այս դեպքում օրենսդրական փոփոխության արդյունքում պատժի մեղմացման հետևանքով նախկինում ծանր համարվող հանցանքը հանդիսանում է միջին ծանրության հանցանք: Միևնույն ժամանակ, արդեն միջին ծանրության հանցանք համարվող այդ նույն արարքի վաղեմության ժամկետը նոր օրենքով չի փոփոխվել և ՀՀ նախկին քրեական օրենսգրքով ծանր հանցանքի համար նախատեսված վաղեմության ժամկետի պես, տասը տարի է: Հետևաբար, այս դեպքում ևս կիրառելի է մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու կանոնը՝ հանցանքի տեսակի և պատժի մասով՝ արարքը պետք է որակվի ՀՀ գործող քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով:

Քրեական օրենքի հետադարձության կանոնների համաձայն՝ տվյալ իրավիճակում նախկին օրենքով ծանր հանցագործության համար նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը համեմատելով նոր օրենքով միջին ծանրության հանցանքի համար սահմանված վաղեմության ժամկետի հետ՝ կարող ենք արձանագրել, որ թեև հանցանքի տեսակը մեղմացել է, սակայն վաղեմության ժամկետները մնացել են անփոփոխ: Հետևաբար, շարունակում է գործել տվյալ արարքի համար վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու տասնամյա ժամկետը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ անթույլատրելի է օրենքի փոփոխության արդյունքում հետադարձության կանոնների կիրառմամբ ստացված միջին ծանրության հանցանքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը (տասը տարին) համեմատել ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված միջին ծանրության հանցանքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի (հինգ տարի) հետ: Նման համեմատությունը սկզբունքորեն չի համապատասխանի ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության կանոնի էությանն ու նշանակությանը:

Հակառակ մոտեցումը հանգեցնում է այնպիսի իրավիճակի, որ արարքի կատարման պահին ծանր հանցագործություն համարվող արարքի պարագայում անձի նկատմամբ կիրառվում է արարքի կատարման պահին միջին ծանրության հանցանքի համար նախատեսված կարգավորումը, որը որևէ պարագայում կիրառելի չէ:

2. Վճռաբեկ դատարանը թիվ ՀԿԴ/0124/01/23 գործով 2024 թվականի հուլիսի 19-ին կայացված որոշմամբ անդրադարձել է տնային կալանք խափանման միջոցի կիրառման իրավաչափությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խափանման միջոցների աստիճանակարգության մեջ, ելնելով ներգործության բնույթից, աստիճանից և վրա հասնող հետևանքներից, կալանքը համարվում է ամենախիստը, քանի որ առավելագույն չափով է սահմանափակում մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, և, որպես անձի ոչ պատշաճ վարքագծի կանխման վերջին հնարավոր միջոց (ultima ratio), պետք է կիրառվի այն բացառիկ դեպքերում, երբ կհիմնավորվի մեղադրյալի օրինական վարքագիծն այլընտրանքային խափանման միջոցներով երաշխավորելու անհնարինությունը: Այլ խոսքով՝ կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ կհիմնավորի, իսկ դատարանն էլ պատճառաբանված որոշմամբ կհաստատի, որ միայն այդ խափանման միջոցի կիրառմամբ է հնարավոր հասնել հետապնդվող նպատակներին՝ այդ համատեքստում հաշվի առնելով մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող ու դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները:

Ուստի, յուրաքանչյուր դեպքում կալանավորման կիրառման հարցը քննարկելիս ելակետ պետք է ընդունվի հիշյալ նպատակների նվաճման հանգամանքը, և եթե հիշյալ նպատակներին հասնելը հնարավոր է առանց կալանավորում կիրառելու, ապա այն չպետք է կիրառվի, հակառակ դեպքում՝ կխախտվի անձի իրավունքների սահմանափակման և դրա արդյունքում հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ համաչափությունը, որի արդյունքում կալանավորումը կվերածվի պարզապես պատժիչ միջոցի կամ կհետապնդի պատժիչ նպատակներ: Նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանի համար ուղենիշ է այն գաղափարը, որ իրավական պետությունում քրեական դատավարության նպատակներին պետք է հասնել ոչ թե ցանկացած, այլ՝ անձի իրավունքների և ազատությունների հնարավորինս քիչ սահմանափակման ճանապարհով:

Անդրադառնալով խափանման միջոցի տեսակն ընտրելու անհրաժեշտությունը որոշելու չափանիշ հանդիսացող՝

մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող հնարավոր հանգամանքների առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ դրանց էական նշանակություն ունենալը և որոշիչ դերը նախևառաջ պայմանավորված է նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված՝ «մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի դրսևորումները» վերաբերելի հիմքեր են բոլոր խափանման միջոցներին, որոշ բացառություններով: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտել է, որ որպեսզի իրավասու մարմինը գործնականում հնարավորություն ունենա տարբերակված մոտեցում ցուցաբերել և նույն հիմքերի առկայության պայմաններում պիտանի խափանման միջոցն ընտրելու մասին ճիշտ եզրահանգում կատարել և հիմնավորել դրա անհրաժեշտությունը՝ պետք է հաշվի առնել նաև որոշ հանգամանքներ:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նման հանգամանքներ, ի թիվս այլնի, կարող են լինել՝

1) վերագրվող հանցանքի փաստական հանգամանքները, ակնկալվող պատժի ծանրության աստիճանը, ինչպես նաև ազատությունից զրկելուն այլընտրանքային պատիժների առկայությունը,

2) մեղադրյալի անձին ներկայացվող հանգամանքները, մասնավորապես՝ դատվածության առկայությունը (նախկինում կատարած արարքի բնույթը, ծանրության աստիճանը, նշանակված պատժի տեսակը, չափը, պատիժը կրելու, պատժից ազատվելու հանգամանքը և այլն), ինչպես նաև անձը բնութագրող հանգամանքները,

3) մեղադրյալի տարիքը, սեռը, առողջական վիճակը, քաղաքացիությունը (ՀՀ քաղաքացի է, երկքաղաքացի, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, ապաստան հայցող անձ կամ փախստական), ուսման պայմանները, եթե սովորում է և այլն,

4) զբաղմունքի տեսակը, հասարակությունում ունեցած սոցիալական դիրքը և դերը, եթե աշխատում է, ապա զբաղեցրած պաշտոնը և դրանից բխող հնարավոր ազդեցությունն օգտագործելու հավանականությունը և այլն,

5) ընտանեկան դրությունը (ամուսնացած, ամուսնալուծված), խնամքին անչափահաս կամ անաշխատունակ անձանց առկայությունը, ընտանեկան ամուր կապերը,

6) բնակության մշտական վայրի առկայությունը, ինչպես նաև բնակության վայրում սոցիալական ամուր կապերը,

7) մեղադրյալի գույքային դրությունը, ինչպես նաև ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը, կամ հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքի առկայությունը, դրա չափը, այդ գույքի ծագումը թաքցնելուն ուղղված գործողությունների բնույթը և այլն,

8) մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգի առկայությունը,

9) եթե մեղադրյալը նախկինում ենթարկվել է քրեական պատասխանատվության և/կամ պատժի, ապա՝ նրա վարքագիծը նախկինում իրականացված քրեական վարույթի ընթացքում (թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից, պարբերաբար չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի հրավերով, էապես խոչընդոտել է վարույթին և այլն), ինչպես նաև այլ ենթադրյալ հանցագործությունների կատարման մեջ մեղադրվելու մասին մեկ այլ վարույթի առկայությունը (մինչդատական, դատական),

10) այն հանգամանքները, որոնք բացառում են քրեական հետապնդումը (թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից կամ պատժից) կամ քրեական վարույթը,

11) գործով ներգրավված տուժողի, վկաների, այլ մեղադրյալների հետ փոխհարաբերությունների բնույթը,

12) խափանման միջոց կալանք ընտրված լինելու դեպքում՝ դրա տևողության ողջամտությունը և դրանով պայմանավորված այլ քրեաիրավական նշանակություն ունեցող պայմանները,

13) այլ էական հանգամանքներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանի հայեցողությունը՝ կալանքի և տնային կալանքի կիրառման հարաբերակցության միջև, պետք է հիմնված լինի մեղադրյալի վարքագծի տեսանկյունից դրական և բացասական գործոնների հակակշռման ու հավասարակշռման գաղափարի վրա:

Նշված հետևության հանգելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն հայեցակարգը, որ խափանման միջոցներ կիրառելու, այդ թվում՝ դրանց տեսակներն ընտրելու, հետագայում դրանք փոխելու մեխանիզմի հիմքում դրված կարևորագույն գաղափարը խափանման միջոցի պիտանիությունն է՝ դրված նպատակին հասնելու տեսանկյունից, իսկ անձի նկատմամբ հարկադրանքի միջոց ընտրելիս՝ հարկ է առաջնորդվել նվազագույնի սկզբունքով, քանի որ արգելվում է ընտրել ավելի խիստ հարկադրանքի միջոց, քան այն, որով քրեական վարույթի ընթացքում հնարավոր կլինի ապահովել անձի օրինական վարքագիծը:

3. Վճռաբեկ դատարանը թիվ ԼԴ/0025/01/22 գործով 2024 թվականի նոյեմբերի 5-ին կայացված որոշմամբ անդրադարձել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, համապատասխան հոդվածի սանկցիայում որպես հիմնական պատիժ նախատեսված լինելու պարագայում, որպես լրացուցիչ պատիժ նշանակելու հարցին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հիմնական և լրացուցիչ պատիժների կիրառման վերաբերյալ կարգավորումներում կատարվել է սկզբունքային փոփոխություն: Մասնավորապես, եթե ՀՀ նախկին քրեական օրենսգիրքն ուղղակիորեն պահանջում էր որոշ

տեսակի լրացուցիչ պատիժները (այդ թվում՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը) նշանակել միայն Հատուկ մասում ամրագրված լինելու դեպքում, ապա գործող օրենսգիրքը նման պահանջ չի սահմանում՝ լրացուցիչ պատժի տեսակն ընտրելու և նշանակելու նպատակահարմարության գնահատումը թողնելով դատարանի հայեցողությանը: Ընդ որում, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի Հատուկ մասը պարունակում էր զգալի թվով հանցակազմեր, որոնց սանկցիան, բացի հիմնական պատժատեսակներից, նախատեսում էր նաև լրացուցիչ պատիժ, որի կիրառումը դատարանի համար պարտադիր էր:

Այնինչ, ՀՀ գործող քրեական օրենսգրքի Հատուկ մասում լրացուցիչ պատիժներ ամրագրված չեն: Այս կապակցությամբ օրենսդրի կամքը դրսևորվում է նրանում, որ դատարանը, ղեկավարվելով կատարված արարքի համար համաչափ պատիժ նշանակելու պահանջով, իր հայեցողական լիազորությունների սահմաններում իրավասու լինի նշանակել Ընդհանուր մասում նախատեսված համապատասխան լրացուցիչ պատժատեսակը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ինչպես նախկին, այնպես էլ գործող ՀՀ քրեական օրենսգրքերը չեն տարբերակում հիմնական և լրացուցիչ պատիժ նշանակելու սկզբունքները և նպատակները, քանի որ, բոլոր դեպքերում, պատիժ նշանակելիս դատարանները պարտավոր են առաջնորդվել ՀՀ քրեական օրենսդրության ընդհանուր սկզբունքներով, դրանք են՝ օրինականություն, անձնական պատասխանատվություն, ըստ մեղքի պատասխանատվություն, արդարություն և պատասխանատվության անհատականացում: Ինչ վերաբերում է պատժի նպատակների իրացմանը, ապա, անկախ նրանից, թե անձի նկատմամբ նշանակվել է հիմնական պատիժ, թե՝ հիմնական և լրացուցիչ պատիժներ՝ համակցված, պատժի նպատակները կարող են իրացվել միայն այն դեպքում, երբ դատարանի կողմից յուրաքանչյուր կոնկրետ գործով, հաշվի առնելով, ի թիվս այլնի, հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցավորի անձը բնութագրող տվյալները և այլն, նշանակվի արդարացի պատիժ՝ հիմնված ներքին համոզմունքի վրա:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կոնկրետ հանցագործության առանձնահատկություններից ելնելով՝ դատարանը պետք է նշանակի նաև լրացուցիչ պատիժ, եթե գալիս է այն եզրահանգման, որ միայն հիմնական պատիժ նշանակելու դեպքում հնարավոր չէ հասնել պատժի նպատակների իրացմանը, մասնավորապես՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացմանը և հետագա հանցագործությունների կանխմանը:

4. Վճռաբեկ դատարանը թիվ ՀԿԴ/0038/15/23 գործով 2024 թվականի նոյեմբերի 26-ին կայացված որոշմամբ անդրադարձել է բարեխիղճ ձեռք բերողի գույքի արգելադրման հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի սեփականության իրավունքի սահմանափակման՝ հարկադրանքի միջոցի՝ գույքի արգելադրման կիրառման ընթացքում հանրային և մասնավոր շահերի հավասարաչափ պաշտպանության և դրանց գնահատմանը ներկայացվող պահանջներն էլ ավելի են կարևորվում այն պայմաններում, երբ քրեական վարույթով արգելադրման է ենթակա մեղադրյալի կարգավիճակով հանդես չեկող երրորդ անձի գույքը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը երրորդ անձի գույքի արգելադրման համար սահմանել է որոշակի առանձնահատկություններ և տարբերակել է երրորդ անձին պատկանող գույքի և մեղադրյալի գույքի արգելադրման կառուցակարգերը՝ նպատակները և հիմքերը: Դա ուղղված է քրեական վարույթի շրջանակներում, քրեական օրենքով արգելված արարքի կատարմանը չներգրավված անձի իրավունքների անհարկի սահմանափակման հնարավորության բացառմանը: Իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքից բխում է, որ վարույթն իրականացնող մարմինը ենթադրյալ հանցանքի կատարման կասկածով չծանրաբեռնված անձի նկատմամբ չի կարող միևնույն չափանիշով քրեադատավարական հարկադրանքի միջոց կիրառել, ինչ մեղադրյալի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարույթի շրջանակներում՝ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձի գույքի արգելադրում կարող է կատարվել բացառապես գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու նպատակով: Վճռաբեկ դատարանը նաև կարևորել է արգելադրման ենթակա գույքի և հանցանքի միջև պատճառական կապի առկայությունը՝ որպես պարտադիր նախապայման գույքի արգելադրման իրավաչափության համար:

Միևնույն ժամանակ, նույնիսկ գույքի արգելադրման նպատակների և հիմքերի առկայության պայմաններում երրորդ անձին պատկանող գույքը չի կարող արգելադրվել, եթե վերջինս հանդիսանում է բարեխիղճ երրորդ անձ (bona fide): Իսկ բարեխիղճ երրորդ անձի գույքի արգելադրման սահմանափակման էությունը բխում է հենց օրենքով սահմանված բարեխիղճ երրորդ անձի հասկացությունից, ըստ որի՝ **բարեխիղճ է այն անձը, ով չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը հանցագործության արդյունքով անուղղակի առաջացած կամ ստացված գույք է:**

Անդրադառնալով երրորդ անձի բարեխղճության հարցի գնահատմանը՝ Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ անձի բարեխղճությունը գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է գնահատման ենթարկի հանցանքի արդյունքում առաջացած գույքի ապօրինության վերաբերյալ երրորդ անձի սուբյեկտիվ ընկալումը, այսինքն այն հարցը, թե արդյո՞ք տվյալ պայմաններում անձը կարող էր իմանալ կամ գիտեր գույքի՝ հանցագործությանն առնչվելու հանգամանքը: Ընդ որում, պետք է գնահատվի անձի սուբյեկտիվ ընկալումը ոչ թե գույքի հնարավոր արգելադրմանը նախորդող ողջ ժամանակաշրջանի ընթացքում, այլ կոնկրետ գույքը ձեռք բերելու պահին:

5. Վճռաբեկ դատարանը թիվ ՍԴ3/0002/10/23 գործով 2024 թվականի դեկտեմբերի 19-ին կայացված որոշմամբ իրավական դիրքորոշումներ է ձևավորել հեռախոսային խոսակցությունների ազատության և գաղտնիության իրավունքի սահմանափակման դատավարական կառուցակարգերի կապակցությամբ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունքի սահմանափակման կարգը սահմանող իրավանորմերը նախատեսում են տվյալ իրավունքի սահմանափակման երկու տարբեր ռեժիմներ:

Առաջին ռեժիմը, որ նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածով, նախկինում ի հայտ եկած (ստեղծված, ձևավորված)՝ վարույթի համար նշանակություն ունեցող թվային տվյալների, նամակագրության և հաղորդակցության այլ ձևերի բովանդակության առգրավումն է: Երկրորդ ռեժիմը, որը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածով, տվյալ պահին ընթացող կամ ապագայում տեղի ունենալիք հեռախոսային խոսակցության, տեքստային, պատկերային, ձայնային, տեսաձայնային և այլ հաղորդագրության բովանդակության, բաժանորդի մուտքային և ելքային զանգերի, հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակի, հեռախոսազանգի վերահասցեագրման կամ փոխանցման, համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդակցության բովանդակության, համացանցային հեռախոսազանգերի մուտքային և ելքային զանգերի գաղտնի վերահսկումն է՝ դրանց պարզումը, հավաքումը, ամրագրումն ու պահպանումը: Այսինքն՝ քննարկվող երկու ռեժիմների առաջին տարբերությունը կայանում է նրանում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի կարգավորումներով՝ ստացման

ենթակա տվյալները դրանց ստացման պահին պետք է արդեն իսկ ձևավորված լինեն՝ գոյություն ունենան, ինչն էլ հետագայում վերցվում է քննիչի կողմից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի կարգավորումներով ստացման ենթակա տվյալները ձևավորվում կամ ստեղծվում են քննիչի կողմից միջնորդությունը ներկայացնելու պահին կամ այն ներկայացնելուց հետո, և, դրանց ստեղծմանը զուգահեռ, իրավասու մարմինը հավաքում, ամրագրում ու պահպանում է դրանք:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է նաև, որ վերոնշյալ երկու ռեժիմների դեպքում ստացվող տվյալները բովանդակային առումով կարող են լինել նույնը, օրինակ՝ մուտքային և ելքային հեռախոսազանգերը, բաժանորդների վերաբերյալ տվյալները, դրանց տևողությունը, վերահասցեավորման և զանգը սպասարկող կայանների վերաբերյալ տվյալները, կախված դրանց՝ կապի օպերատորի համապատասխան սարքավորման տվյալների շտեմարանում ձևավորման (ստեղծման) և վարույթն իրականացնող մարմնի կողմից ստացման պահից: Դրանք կարող են և՛ առգրավվել օրենսգրքի 239րդ հոդվածի ռեժիմով, և՛ վերահսկվել՝ հավաքվել, ամրագրվել և պահպանվել օրենսգրքի 249-րդ հոդվածով նախատեսված՝ գաղտնի քննչական գործողության ռեժիմով՝ այդ տվյալների ստեղծմանը զուգահեռ:

Անդրադառնալով իրավունքի սահմանափակման վերոնշյալ երկու ռեժիմներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ թվային, այդ թվում՝ «հեռախոսային հաղորդակցության վերահսկում» գաղտնի քննչական գործողության շրջանակներում հեռախոսային խոսակցությունների վերաբերյալ տվյալներ կարող են հավաքվել, ամրագրվել և պահպանվել միայն ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթներով:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած՝ «Նամակագրության և հաղորդակցության այլ ձևերի առգրավումը» եզրույթին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հեռախոսային հաղորդակցությունը, տվյալ հոդվածի իմաստով, հանդիսանում է հաղորդակցության այլ ձև, իսկ հեռախոսային հաղորդակցության վերաբերյալ տվյալները, որոնք ինքնաշխատ եղանակով գրանցվում և պահպանվում են կապի օպերատորի համապատասխան սարքավորման տվյալների շտեմարանում, հանդիսանում են քննիչի կողմից առգրավվման ենթակա օբյեկտ՝ որպես օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված թվային տվյալ:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ նախաքննության մարմնի կողմից հեռախոսային հաղորդակցության վերաբերյալ տվյալների (CDR) ստացման դատավարական ընթացակարգում հեռախոսային խոսակցությունների գաղտնիության

սահմանադրական և քրեադատավարական հիմնարար իրավունքի իրավաչափ սահմանափակման առանցքը դատական երաշխիքների շրջանակներում նախաքննական մարմնի կողմից հայցվող տվյալների ստացման նկատմամբ նախնական դատական ստուգումն է:

Նախնական դատական ստուգման շրջանակներում՝ դատական երաշխիքի վարույթի հարուցումից հետո, դատարանը պետք է ստուգի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանների (հիմքերի) առկայությունը, ինչպես նաև նախաքննության մարմնի կողմից հայցվող տեղեկատվության՝ միջնորդության մեջ նշված ծավալով ստանալու հիմնավորվածությունը: Դատական ստուգումից հետո, երբ դատարանի որոշմամբ թույլատրվել է ստանալ նախաքննության մարմնի կողմից հայցվող տվյալները, այդ տվյալների հետագա ստացման եղանակը կրում է տեխնիկական բնույթ, և դրանց՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի կարգավորումներով՝ տեղեկատվության պահանջի շրջանակներում ստանալը, եթե խոսքը չի վերաբերում հեռախոսային հաղորդակցության բովանդակային տվյալներին, չի հակասում քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանությանը: Այլ խոսքով՝ հեռախոսային հաղորդակցության վերաբերյալ տվյալների ստացումը թույլատրող որոշման առկայության պայմաններում նախաքննության մարմինը կարող է հայցվող տեղեկատվությունը ստանալ «տեղեկատվության պահանջ» քննչական գործողության շրջանակներում:

Վերոնշյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը շեշտել է նաև այն հանգամանքը, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված օրենքի 3-րդ հոդվածով, ի թիվս այլնի, փոփոխության են ենթարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի կարգավորումները, որոնց համաձայն՝ հեռախոսային հաղորդակցության վերաբերյալ տվյալները պետք է ստացվեն «տեղեկատվության պահանջ» քննչական գործողության շրջանակներում:

Դատախազությունը, կարևորելով անկախ և անաչառ դատարան ունենալու հրամայականը, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել քրեական օրենսդրությամբ ամրագրված խնդիրների կենսագործումը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հիմքով և կարգով՝ 2024 թվականի ընթացքում դիմել է իրավասու մարմիններին՝ կոնկրետ գործերով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդումներով:

2024 թվականի ընթացքում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Դատախազության կողմից ՀՀ արդարադատության նախարարին է ներկայացվել 11 հաղորդում (2023 թվականին՝ 10), որոնցից 7-ի դեպքում մերժվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը, 1-ը դեռևս քննարկման փուլում է, իսկ 3 հաղորդման դեպքում՝ ՀՀ արդարադատության նախարարը հարուցել է 3 կարգապահական վարույթ: Հարուցված կարգապահական վարույթների արդյունքներով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Արդարադատության նախարարությունը դիմել է Բարձրագույն դատական խորհուրդ:

Վերոնշյալ երեք միջնորդության քննության արդյունքում՝ Բարձրագույն դատական խորհուրդը կարգապահական պատասխանատվության է ենթարկել երեք դատավորի՝ նշանակելով «նախազգուշացում», «խիստ նախազգուշացում» և «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի տեսակները:

Հարկ է արձանագրել, որ դատավորի նկատմամբ «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ միջին ծանրության հանցագործության կատարման համար մեղադրվող մեկ մեղադրյալի վերաբերյալ գործի քննությունն իրականացվել է շուրջ 3 տարի, որի ընթացքում չի պահպանվել գործի՝ ողջամիտ ժամկետում քննության պահանջը:

4

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 2093 դեպք (2023 թվականին՝ 2358 դեպք): Նվազում է արձանագրվել 265 դեպքով կամ 11.2%-ով: Արձանագրված դեպքերից 762-ը կամ 36.4%-ը եղել են պատահարներ (2023 թվականին՝ 803), 1331-ը կամ 63.6%-ը հանցագործություններ (2023 թվականին՝ 1555), այդ թվում՝ 715-ը կամ 53.7%-ը՝ զինվորական (2023 թվականին՝ 847), 616-ը կամ 46.3%-ը՝ այլ հանցագործություններ (2023 թվականին՝ 708):



2023 թվականի համեմատ՝ պատահարները նվազել են 41 դեպքերով կամ 5.1%-ով, հանցագործությունները նվազել են 224-ով կամ 14.4%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունների դեպքերը նվազել են 132-ով կամ 15.6%-ով, իսկ այլ հանցագործությունները՝ 92-ով կամ 13%-ով:

Հաշվետու տարում դեպքերի նվազումը, ի թիվս այլնի, պայմանավորված է զինված ուժերում կարգապահության մակարդակի բարձրացմամբ, ինչպես նաև սահմանային լարվածության հարաբերական թուլացմամբ:

Եթե 2023 թվականի ընթացքում արձանագրված 1555 հանցագործություններից 320-ը կամ 21% են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 242-ը՝ ծանր, իսկ 78-ը՝ առանձնապես ծանր հանցագործություն, ապա 2024 թվականին արձանագրված 1331 հանցագործության դեպքերից ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ են եղել 217-ը կամ 16.3%-ը, որոնցից 178-ը՝ ծանր, 39-ը՝ առանձնապես ծանր: 2023 թվականի համեմատ՝ ծանր հանցագործությունները նվազել են 64-ով կամ 26.4%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները նվազել են 39-ով կամ 50%-ով:

Անդրադառնալով 39 առանձնապես ծանր հանցագործության դեպքերին՝ պետք է նշել, որ դրանցից 3-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 11-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 9-ը՝ սպանության, 3-ը՝ սպանության փորձի, 6-ը՝ մի խումբ անձանց կողմից կատարված խոշտանգման, 4-ը՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի ապօրինի իրացման, 2-ը՝ անզգուշությամբ մարդու մահ առաջացրած իշխանազանցության կամ իշխանությունը չարաշահելու և 1-ը՝ 12 տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու դեպքեր են:

2024 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում զինծառայողների՝ ծառայության հետ կապված հանգամանքներում արձանագրվել է 27 զինծառայողի մահվան դեպք (2023 թվականին՝ 54): Նշված դեպքերից՝ հակառակորդի կողմից սպանություն՝ 4 (ԵԿՄ անդամ), սպանություն՝ 5 (որից՝ 1 ԵԿՄ անդամ, 1 վարժական հավաքի մասնակից (հրդեհ)), անզգուշությամբ ինքնասպանության հասցնել՝ 7, ճանապարհատրանսպորտային պատահար՝ 4, մարտական մեքենաներ վարելու կանոնների խախտում՝ 1, ավիավթար՝ 2, հիվանդություն՝ 3 (որից 1 ԵԿՄ անդամ) և դժբախտ պատահար՝ 1:



2024 թվականի ընթացքում արձանագրվել է զինծառայողների մահվան դեպքերի 27 դեպքով կամ 50 %-ով նվազում (2023 թվականին՝ 54): Նշված ցուցանիշը պայմանավորված է հակառակորդի կողմից կատարված սպանության դեպքերի նվազմամբ՝ 2024 թվականին՝ 4, 2023 թվականին՝ 19 (տարբերությունը 15) և զինծառայողի մահվան հանգեցրած՝ վտանգ ներկայացնող ռազմամթերքի և այլ նյութերի հետ վարվելու կանոնների խախտման դեպքերի բացակայությամբ (2023 թվականին՝ 17):

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 174 զինծառայողներ, նախորդ տարվա 343-ի դիմաց, այսինքն՝ նվազում է արձանագրվել 169-ով կամ 49.2%-ով:

Վերոնշյալ 174 դեպքերով մարմնական վնասվածքները պատճառվել են հանցագործությունների հետևանքով (2023 թվականին՝ 343):

23 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածքներ (2023 թվականին՝ 67), 136-ը՝ միջին ծանրության, թեթև և թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, իսկ 15-ի ծանրության աստիճանը 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ պարզված չի եղել (2023 թվականին՝ 46):

Զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված 1331 ենթադրյալ հանցագործության դեպքերը, 2023 թվականին արձանագրված 1555-ի համեմատ, ըստ հանցատեսակների, ունեն հետևյալ պատկերը.

- Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 516-524 հոդվածներ)՝ 317 (2023 թվականին՝ 350, նվազում՝ 33-ով կամ 9.4-ով%),
- Զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 525-531 հոդվածներ)՝ 218 (2023 թվականին՝ 240, նվազում՝ 22-ով կամ 9.1-ով%),
- Ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու, զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հետ կապված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 532-537 հոդվածներ)՝ 17 (2023 թվականին՝ 58, նվազում՝ 41-ով կամ 71%-ով),
- Ռազմական տեխնիկայի օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 538-539 հոդվածներ)՝ 51 (2023 թվականին՝ 35, աճ՝ 16-ով կամ 31.3%-ով):
- Հատուկ ծառայությունների կրման և հատուկ պայմաններում զինվորական պարտքի կատարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 540-548 հոդվածներ)՝ 7 (2023 թվականին՝ 18, նվազում՝ 11-ով կամ 61.1%-ով),
- Զինվորական պաշտոնեական հանցագործություններ (Քրեական օրենսգրքի 549-550 հոդվածներ)՝ 105, (2023 թվականին՝ 146, նվազում՝ 41-ով կամ 28%-ով):

Ինչպես երևում է թվային տվյալներից՝ ի թիվս այլնի, **զինվորական հանցագործությունների դեպքերի նվազումը հիմնականում պայմանավորված է զենքի, ռազմամթերքի կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հետ կապված հանցագործությունների դեպքերի նվազմամբ: Նվազումը այդ ոլորտում կատարված հետևողական աշխատանքի արդյունք է:**

Զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր թվի նվազումը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված, ինչպես նաև հատուկ ծառայությունների կրման և հատուկ պայմաններում զինվորական պարտքի կատարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների թվաքանակի նվազմամբ: Նվազումը զինծառայողների շրջանում կարգապահության մակարդակի բարձրացման արդյունք է:

Զինվորական հանցագործություններից աճ է գրանցվել ռազմական տեխնիկայի օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործությունների թվում (16-ով կամ 31.3%-ով), որը, ի թիվս այլնի, պայմանավորված է ռազմական թռչող սարքերի հետ վարվելու կանոնների խախտման դեպքերի ավելացմամբ: Աճը նկատվել է 2024 թվականի սկզբին, ինչից ելնելով տվյալ դեպքերով ամփոփումը ներառվել էր ՀՀ զինվորական դատախազության կիսամյակային աշխատանքի ծրագրում: Կիսամյակային աշխատանքների ամփոփման արդյունքներով՝ տրվել են մի շարք հանձնարարականներ:

Այլ հանցագործությունների վիճակագրությունը, ըստ հանցատեսակների, 2023 թվականի համեմատությամբ, հետևյալն է.

- Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 155-187 հոդվածներ)՝ 39 (2023 թվականին՝ 96, նվազում՝ 57-ով կամ 59.3%-ով),
- Անձի ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 188-197 հոդվածներ)՝ 66 (2023 թվականին՝ 63, աճ՝ 3-ով կամ 4.5%-ով),
- Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 198-202 հոդվածներ)՝ 8 (2023 թվականին՝ 7, աճ՝ 1-ով կամ 12.5%-ով),

- Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 252-266 հոդվածներ)՝ 150 (2023 թվականին՝ 168, նվազում՝ 18-ով կամ 11%-ով),
- Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 297-307 հոդվածներ)՝ 9 (2023 թվականին՝ 4, աճ՝ 5-ով կամ 56%-ով),
- Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 308-392 հոդվածներ)՝ 164 (2023 թվականին՝ 176, նվազում՝ 12-ով կամ 7%-ով),
- Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ քրեական օրենսգրքի 393-406 հոդվածներ)՝ 135 (2023 թվականին՝ 127, աճ՝ 8-ով կամ 6%-ով),
- Այլ հանցակազմեր՝ 45 (2023 թվականին՝ 69, նվազում՝ 24-ով կամ 34.8%-ով):

Ընդհանուր բնույթի հանցագործությունների վիճակագրական պատկերը, 2023 թվականի համեմատությամբ, հիմնականում փոփոխության չի ենթարկվել: Հաշվետու տարում Զինվորական դատախազությունում ուսումնասիրություն է կատարվել աճ արձանագրած դեպքերի վերաբերյալ, որի արդյունքների հիման վրա՝ ՀՀ ՁՈՒ ԳՇ և ՀՀ ՊՆ ՌՈ պետերին ներկայացվել են միջնորդագրեր, ինչպես նաև Զինվորական դատախազության դատախազներին հանձնարարվել է այդ վարույթների քննության ընթացքում վերաբերելի մասով ապահովել Գլխավոր դատախազությունում կատարված ամփոփման հիման վրա Դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 2023 թվականի հուլիսի 14-ին տրված հանձնարարականի պահանջների կատարումը:

2024 թվականի ընթացքում արձանագրված 1331 հանցագործություններից 85-ով կամ 6.4%-ով հնարավոր չի եղել պարզել քրեական պատասխանատվության ենթակա անձը: Այլ խոսքով՝ հանցագործությունների բացահայտումը կազմել է 93.6% (2023 թվականին՝ 96.6%):

2024 թվականի ընթացքում արձանագրված 1331 հանցագործություններից 1293-ը կատարվել է Զինված ուժերում, իսկ 38-ը՝ ՀՀ ԱԱԾ ՍԶ զորամասերում և ՀՀ ՊՆ ՌՈ ստորաբաժանումներում:

Ըստ խմբերի անդրադառնալով հանցագործություն կատարած զինծառայողներին՝ հարկ է նշել, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին, առավել շատ հանցագործությունները կատարվել են ժամկետային զինծառայողների կողմից՝ 590, որից 27-ը ԱԱԾ ՍԶ (2023 թվականին՝

591, որից 6-ը՝ ԱԱԾ ՍՁ), պայմանագրային զինծառայողների կողմից՝ 349, որից ՀՀ ԱԱԾ ՍՁ՝ 7 (2023 թվականին՝ 336, որից 6-ը՝ ԱԱԾ ՍՁ), սպաների կողմից՝ 172, որից 1-ը՝ ԱԱԾ ՍՁ (2023 թվականին՝ 242) և ենթասպաների կողմից՝ 24 (2023 թվականին՝ 22): Բացի այդ, հանցագործություններ են կատարվել նաև քաղաքացիական անձանց կողմից՝ 74 (2023 թվականին՝ 133), դեռևս չպարզված անձանց կողմից՝ 85 (2023 թվականին՝ 26):

Վերլուծությունը ցույց է տվել, որ 2024 թվականին արձանագրված առերևույթ հանցագործություն կատարած զինծառայողների թվաքանակում սպաների տեսակարար կշիռը կազմել է 15.2% (2023 թվականին՝ 20.4%), ենթասպաներինը՝ 2.2% (2023 թվականին՝ 2%), պայմանագրային զինծառայողներինը՝ 30.8% (2023 թվականին՝ 28.3%), ժամկետային զինծառայողներինը՝ 52% (2023 թվականին՝ 50%):



2024 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի հատկանիշներ պարունակող հանցագործություններ է կատարել 1463 անձ (2023 թվականին՝ 1250). աճ է գրանցվել 213-ով կամ 14.5%-ով:

Կատարված վերլուծություններով պարզվել է նաև, որ 2024 թվականի ընթացքում Քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի հատկանիշներ պարունակող հանցագործություններ է կատարել 303 անձ (2023 թվական՝ 257). աճ է արձանագրվել 46-ով կամ 15.2%-ով:

2024 թվականի ընթացքում քննվել է կոռուպցիոն բնույթի 214 քրեական վարույթ (2023 թվականին՝ 316): 58 քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է (2023 թվականին՝ 70): Դրանցից 50-ով՝ վարույթները կարճվել են (2023 թվականին՝ 46), որոնցից 34-ով վարույթները կարճվել են ռեաբիլիտացնող (2023 թվականին՝ 37), 16-ով՝ ոչ ռեաբիլիտացնող (2023 թվականին՝ 9) հիմքերով: 8 քրեական վարույթներ 12 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ (2023 թվականին՝ 24 գործ՝ 58 անձի վերաբերյալ):

2024 թվականի ընթացքում ավարտված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթներով հիմնավորվել է 35.776.402 դրամի նյութական վնաս (2023 թվականին՝ 139.988.893 դրամ), որից մինչդատական վարույթում վերականգնվել է 3.169.620 դրամը (2023 թվականին՝ 7.882.009 դրամ):

Հաշվետու տարում 3523 քրեական վարույթների նախաքննությունն ավարտվել է (2023 թվականին՝ 3136): Ավարտված քրեական վարույթներից 904-ը՝ 1026 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 1 քրեական վարույթ 1 անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու վերաբերյալ եզրափակիչ ակտով ուղարկվել է դատարան (2023 թվականին՝ 975-ը՝ 1275 անձի վերաբերյալ):

2618 քրեական վարույթ կարճվել են (2023 թվականին՝ 2161), որից 1398-ը՝ ռեաբիլիտացնող հիմքով (2023 թվականին՝ 1158), 1220-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով (2023 թվականին՝ 1003):

2024 թվականի ընթացքում վերացվել է քրեական վարույթը կարճելու մասին 38 (2023 թվականին՝ 44) որոշում, որոնցից 28-ը՝ ՀՀ զինվորական դատախազի և տեղակալների կողմից: Կարճումը վերացված վարույթներից 3–ն ուղարկվել է դատարան:

2024 թվականի ընթացքում վերացվել է քրեական հետապնդում չհարուցելու 5 որոշում (2023 թվականին՝ 9) և քրեական հետապնդումը դադարեցնելու 1 որոշում (2023 թվականին՝ 2):

Հաշվետու ժամանակահատվածում հսկող դատախազները ստացել են անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին քննիչի 1582 միջնորդություն (2023 թվականին՝ 1668), քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 939 միջնորդություն (2023 թվականին՝ 1357), քրեական հետապնդում չհարուցելու 3416 միջնորդություն (2023 թվականին՝ 1736), հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու 2042 միջնորդություն՝ ընդհանուր 7979 միջնորդություն (2023 թվականին՝ 4761), որից 7716-ը բավարարվել է (2023 թվականին՝ 4581), 1-ը՝ բավարարվել է մասնակի, իսկ 262-ը՝ մերժվել (2023 թվականին՝ 180): 262 միջնորդությունները մերժվել են անհիմն կամ վաղաժամ լինելու հիմքերով:

Հաշվետու ժամանակահատվածում հսկող դատախազների նախաձեռնությամբ 743 անձի նկատմամբ կայացվել են քրեական հետապնդում հարուցելու մասին (2023 թվականին՝ 750), 511 անձի նկատմամբ՝ քրեական հետապնդում չհարուցելու մասին (2023 թվականին՝ 354) և 133 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին (2023 թվականին՝ 390) որոշումներ:

Հաշվետու ժամանակահատվածում կալանավորումը, որպես խափանման միջոց կիրառելու 1020 միջնորդություն են ներկայացվել դատարաններ (2023 թվականին՝ 972): Դրանցից 976-ը՝ բավարարվել են (2023 թվականին՝ 930), որից 969-ը՝ լրիվ, 7-ը՝ մասնակի, իսկ 44-ը՝ մերժվել են (2023 թվականին՝ 42): Մերժման որոշումներից 14-ի դեմ դատախազների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ (2023 թվականին՝ 25), որոնցից 4-ը՝ մերժվել է (2023 թվականին՝ 18), 1-ը բավարարվել (2023 թվականին՝ 7), 8-ի քննությունն ընթացքի մեջ է, 1-ը՝ հետ է վերցվել մեղադրյալի՝ ՀՀ ՁՈՒ զորակոչվելու հանգամանքով պայմանավորված:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազների կողմից 87 միջնորդագրեր (2023 թվականին՝ 107) և 38 հաղորդումներ (2023 թվականին՝ 12) ուղարկվել են պատկան մարմիններին ու կազմակերպություններին:

Միջնորդագրերից 2-ն ուղարկվել են ՀՀ զինվորական դատախազի, 2-ը՝ ՀՀ զինվորական դատախազի տեղակալների կողմից:

Ներկայացված միջնորդագրերի հիման վրա՝ իրականացվել են ծառայողական քննություններ, կարգապահական խախտումներ թույլ տված լինելու դեպքերում զինծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև իրականացվել են միջնորդագրերից բխող այլ միջոցառումներ:

2024 թվականի ընթացքում քննված քրեական վարույթներով հիմնավորվել է հանցագործությունների հետևանքով պետությանը 1.479.117.389 դրամի նյութական վնասի պատճառելու հանգամանքը (2023 թվականին՝ 320.054.160 դրամ), որից մինչդատական վարույթում ավարտված քրեական վարույթներով վերականգնվել է 51.935.493 դրամը (2023 թվականին՝ 44.740.205 դրամ):



Հաշվետու ժամանակահատվածում մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 905 քրեական գործ՝ 1027 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 975 գործ՝ 1275 անձի վերաբերյալ), այդ թվում՝ եզրափակիչ ակտով՝ 1 քրեական վարույթ՝ 1 անձի վերաբերյալ:



Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ՝ ընդհանուր առմամբ 937 քրեական գործ՝ 1089 անձի վերաբերյալ, քննվել և ավարտվել է դատարանում (2023 թվականին՝ 496 գործ՝ 578 անձի վերաբերյալ), որոնցից 751 քրեական գործ դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ. դատապարտվել ՝ 842 անձ (2023 թվականին՝ 394 գործ՝ 426 անձ):



Դատարանների որոշումներով 162 քրեական գործ՝ 219 անձի վերաբերյալ կարճվել է (2023 թվականին՝ 89 գործ՝ 139 անձի վերաբերյալ):

24 քրեական գործով՝ 28 անձի վերաբերյալ, կայացվել են արդարացման դատավճիռներ (2023 թվականին՝ 13 գործով 13 անձի վերաբերյալ): 4 քրեական գործով 4 անձ արդարացվել է մեղադրողների միջնորդությամբ:

2024 թվականի ընթացքում Զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է 118 խախտում (2023 թվականին՝ 196 խախտում):

Պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով՝ պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու վերաբերյալ տրվել է 43 նախազգուշացում (2023 թվականին՝ 66 նախազգուշացում), ներկայացվել է 32 միջնորդագիր (2023 թվականին՝ 19 միջնորդագիր):

2024 թվականի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է պետությանը պատճառված 5.677.550.703 դրամի վնաս (2023 թվականին՝ 5.062.243.785 դրամ):

Դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ՝ վերականգնվել է պետությանը պատճառված 4.462.706.271 դրամի վնաս (2023 թվականին՝ 2.482.453.154 դրամ):



2023 թվականին կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված վնասներից, 2024 թվականի ընթացքում դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ վերականգնվել է 44.408.105 դրամ (2023 թվականին՝ 997.323 դրամ):

Ուսումնասիրությունների արդյունքում չվերականգնված վնասի դեպքերով նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնք նախաքննության փուլում են:

2024 թվականի ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախաձեռնվել է **31 քրեական վարույթ** (2023 թվականին՝ 52 քրեական վարույթ):

2024 թվականին պետական շահերի պաշտպանության ոլորտում հարուցվել է 19 հայց (2023 թվականին՝ 12 հայց), որոնցից 5-ը քաղաքացիական դատավարության կարգով, իսկ 14-ը՝ քրեական դատավարության կարգով (գույքային հայց)՝ 134.275.731 դրամ բռնագանձելու ընդհանուր պահանջով (2023 թվականին՝ 51.724.853 դրամ): Հայցերից 10-ը բավարարվել են ամբողջությամբ, 8-ի քննությունը դեռևս չի ավարտվել, իսկ 1-ի դեպքում գործի վարույթը կարճվել է:

Ամբողջությամբ բավարարված 10 հայցերով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարի չափը կազմում է 36.673.080 դրամ:

5

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Ըստ Ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված տվյալների՝ 2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է կոռուպցիոն հանցագործության 1116 դեպք (2023 թվականին՝ 1368)[10]: Նախորդ տարվա համեմատությամբ՝ հանցագործության դեպքերը նվազել են 252-ով կամ 18.4%-ով:

Կոռուպցիոն հանցագործության դեպքեր



Կոռուպցիոն հանցագործությունների թվի նվազումը հիմնականում պայմանավորվել է կաշառք տալու (2024 թվականին՝ 153 դեպք, 2023 թվականին՝ 274), պաշտոնեական կեղծիքի (2024 թվականին՝ 99 դեպք, 2023 թվականին՝ 133), պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու (2024 թվականին՝ 364 դեպք, 2023 թվականին՝ 409) դեպքերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում աճել են մասնավոր ոլորտում կաշառք ստանալու (2024 թվականին՝ 15 դեպք, 2023 թվականին՝ 10), մասնավոր ոլորտում կաշառք տալու (2024 թվականին՝ 5 դեպք, 2023 թվականին՝ 4), պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալու (2024 թվականին՝ 17 դեպք, 2023 թվականին՝ 7) դեպքերը:

Կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի նվազումը, ի թիվս այլնի, պայմանավորված է վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության որդեգրած՝ կոռուպցիայի դեմ 0 հանդուրժողականության քաղաքականությամբ, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմամբ, ինչպես նաև պատժողական խիստ քաղաքականությամբ:

2024 թվականի ընթացքում առերևույթ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ստացվել է 2297 հաղորդում (2023 թվականին՝ 1914), որոնցից 1175-ով նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 2023 թվականի 1209-ի դիմաց, իսկ 1122-ով վարույթ չի նախաձեռնվել:

Վկայակոչված վիճակագրությունն ուսումնասիրելիս՝ առաջին հերթին ակնառու է այն հանգամանքը, որ 2024 թվականին գրանցվել է կոռուպցիոն դեպքերով ներկայացված հաղորդումների աճ՝

10. 2023 թվականին գրանցված և սույն հաղորդման մեջ նշված կոռուպցիոն հանցագործությունների թիվը (1368) տարբերվում է ՀՀ դատախազության 2023 թվականի գործունեության մասին ՀՀ Ազգային ժողովին նախորդ տարի ներկայացված հաղորդման մեջ նշված թվից (1404)՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-31-Ն օրենքով կոռուպցիոն 3 հանցագործությունների (ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ, 441-րդ և 549-րդ հոդվածներ) օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների շրջանակը նեղացվել է, ինչի հիման վրա վիճակագրական տվյալները վերանայվել են:

383-ով կամ 20%-ով: Ներկայացված հաղորդումների թվի աճի կապակցությամբ, ի թիվս այլնի, հարկ է արձանագրել հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության աշխատակիցների քանակական փոփոխությունը և նրանց կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքի արդյունքում ներկայացված հաղորդումների վիճակագրությունը: Մասնավորապես, 2023 թվականի ընթացքում նշված ստորաբաժանման հաստիքները համալրված են եղել 46.6%, իսկ հաշվետու ժամանակահատվածում՝ 64.1%: Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության աշխատակիցների կողմից 2023 թվականի ընթացքում միայն Հակակոռուպցիոն կոմիտե է ներկայացվել հանցանքի մասին 49 պատշաճ հաղորդում, իսկ հաշվետու ժամանակահատվածում՝ **85 հաղորդում, այսինքն՝ հաղորդումների թիվը գրեթե կրկնապատկվել է:** Այս ցուցանիշները վկայում են նաև այն մասին, որ մասնագիտացված ստորաբաժանման աշխատակիցների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելը ևս ունի էական նշանակություն կոռուպցիոն դեպքերի բացահայտման և հաշվառման աճի վրա:

2024 թվականի ընթացքում նախաքննության մարմինների կողմից քննվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 3526 քրեական վարույթ (2023 թվականին՝ 3556): 2023 թվականի համեմատությամբ՝ քննված քրեական գործերի թիվը նվազել է 30-ով կամ 0.8%-ով:

2024 թվականի ընթացքում նախաքննական մարմինների վարույթում քննված 3526 քրեական վարույթից ավարտվել է 1097-ը (2023 թվականին՝ 908), որոնցից 880-ը կարճվել է (2023 թվականին՝ 602), այդ թվում՝ 473-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով (2023 թվականին՝ 502): 217 քրեական վարույթ՝ 493 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 306 քրեական վարույթ՝ 757 անձի վերաբերյալ) մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 321 քրեական վարույթ միացվել է այլ քրեական վարույթների, իսկ անավարտ է մնացել 1735 քրեական վարույթ:

Ըստ կոռուպցիոն բնույթի առանձին հանցատեսակների՝ հաշվետու տարում քննված քրեական վարույթների շարժը ներկայացվում է ստորև:[11]

11. Աղյուսակում **ներկայացված են միայն այն կոռուպցիոն հանցագործությունները**, որոնցով հաշվետու ժամանակահատվածում ստացվել են հաղորդումներ, նախաձեռնվել են քրեական վարույթներ, քննվել են քրեական վարույթներ կամ մեղադրական եզրակացությամբ հանձնվել են իրավասու դատարան: ՀՀ քրեական օրենսգրքի **221-րդ հոդվածով**, **221.1-ին հոդվածով**, **232-րդ հոդվածով**, **268-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով**, **269-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով**, **274-րդ հոդվածով**, **275-րդ հոդվածով**, **282-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 3-րդ մասով**, **284-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 3-րդ մասով**, **437-րդ հոդվածով**, **480-րդ հոդվածով** և **497-րդ հոդվածով** նախատեսված հանցագործություններով հաշվետու ժամանակահատվածում դեպքեր չեն արձանագրվել:
Ընդ որում, սույն աղյուսակում ստացված հաղորդումների թվի հանրագումարը (1236) չի համապատասխանում 2024 թվականի ընթացքում առերևույթ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումների՝ սույն հաղորդման մեջ նշված թվին (2297), քանի որ 1061 հաղորդումների դեպքում հնարավոր չի եղել տալ կոռուպցիոն որևէ հանցանքին համապատասխանության նախնական իրավական գնահատական:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը	Ստացված հաղորդումների թիվը	Նախաձեռնված վարույթների թիվը	Քննված վարույթների թիվը	Կարճված վարույթների թիվը	Մեղադրական եզրակացությամբ իրավասու դատարան հանձնված գործերի թիվը (գործ/անձ, որից կալանքի տակ գտնվող)	Անավարտ մնացած վարույթների թիվը (որոնցով կալանքի տակ գտնվող անձանց թիվը)	Մեղադրական դատավճիռների թիվը (գործ/մարդ)
218-220-րդ հոդվածներ	-	-	15	2	1/1 1 անձ գտնվել է կալանքի տակ	12	2/2
231-րդ հոդված	2	2	2	1	-	1	-
255-րդ հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ և 3-րդ մաս	48	47	144	24	9/20 4 անձ գտնվել է կալանքի տակ	70	3/3
256-րդ հոդվածի 2-րդ մաս, 2-րդ կետ և 3-րդ մաս	164	164	535	181	27/50 2 անձ գտնվել է կալանքի տակ	265	13/16
258-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ կետ և 3-րդ մաս	2	2	5	-	-	4	-
272-րդ և 273-րդ հոդվածներ	21	21	32	11	3/4	5	1/1
276-րդ հոդված	8	8	18	6	1/1	4	1/1
277-րդ հոդված չարաշահելը)	56	55	148	26	-	85	-
296-րդ հոդված	60	57	144	-	11/28	84	-
435-րդ հոդված	160	158	425	65	60/198 43 անձ գտնվել է կալանքի տակ	219, որոնցով 1 անձ գտնվել է կալանքի տակ	28/35
436-րդ հոդված	40	39	113	29	36/61 1 անձ գտնվել է կալանքի տակ	31	38/136
437-րդ հոդված	-	-	2	-	-	2	4/8
438-րդ հոդված	-	-	8	2	1/5	4	1/1
439-րդ հոդված	1	1	5	2	1/2	-	1/2
440-րդ հոդված	6	6	13	-	5/5 2 անձ գտնվել է կալանքի տակ	4	8/11
441-րդ հոդված	440	400	1297	306	33/67 6 անձ գտնվել է կալանքի տակ	698	11/20
442-րդ հոդված	3	3	7	2	-	4	-
443-րդ հոդված	1	1	8	2	-	6	-
444-րդ հոդված	21	21	45	18	2/2	20	1/1
445-րդ հոդված	152	140	327	108	18/34	122	10/27
477-րդ հոդված	-	-	1	-	-	1	-
481-րդ հոդված	-	-	1	-	-	1	-
482-րդ հոդված	2	1	3	1	-	2	-
486-րդ հոդված 2-րդ մաս 2-րդ կետ և 3-րդ մաս	1	1	4	2	-	1	-
496-րդ հոդված	2	2	5	1	-	1	-
549-րդ հոդված	46	46	213	91	9/15 1 անձ գտնվել է կալանքի տակ	83	4/8

2024 թվականին վերացվել է կոռուպցիոն բնույթի՝

- քրեական գործով վարույթը կարճելու մասին 48 որոշում, որոնցից 3-ը կամ 6.3%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդում չհարուցելու մասին 7 որոշում,
- քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 4 որոշում:

Համեմատության համար նշենք, որ 2023 թվականին վերացվել է՝

- քրեական գործով վարույթը կարճելու մասին 26 որոշում, որոնցից 3-ը կամ 11.5%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդում չհարուցելու մասին 2 որոշում,
- քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 4 որոշում:

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով՝ վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 60 բողոք (2023 թվականին՝ 15), որոնցից բավարարվել է 5-ը (2023 թվականին՝ 2) կամ 8.3%-ը (2023 թվականին՝ 13.3%): Քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումների դեմ բերվել է 7 բողոք (2023 թվականին՝ 3): Նշված բողոքները մերժվել են: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 13 բողոք (2023 թվականին՝ 4), որոնցից 3-ը բավարարվել է (2023 թվականին՝ 2):

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով դատախազների կողմից տրվել է 168 հանձնարարական (2023 թվականին՝ 119), քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 17 միջնորդագիր (2023 թվականին՝ 19):

Լրացուցիչ քննության է վերադարձվել 9 քրեական վարույթ՝ 2023 թվականի 11-ի դիմաց. լրացուցիչ քննության վերադարձված քրեական վարույթների թիվը նվազել է 2-ով կամ 18.2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 2 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 1 անձ ենթարկվել է կարգապահական տույժի: Համեմատության համար նշենք, որ 2023 թվականի ընթացքում նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 26 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 2 անձ:

Հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի քրեական վարույթներով դատախազների կողմից քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 6 անձ:

2024 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված քրեական վարույթներով պետությանը, համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 9.077.021.700 դրամ գույքային վնաս (2023 թվականին՝ 32.886.735.053 դրամ), որից պետությանը՝ 6.854.136.600 դրամ (2023 թվականին՝ 25.699.223.153 դրամ), համայնքներին՝ 2.089.537.100 դրամ (2023 թվականին՝ 160.643.000 դրամ), իրավաբանական անձանց՝ 123.158.000 դրամ (2023 թվականին՝ 6.556.465.000 դրամ), ֆիզիկական անձանց՝ 10.190.000 դրամ (2023 թվականին՝ 416.573.900 դրամ):





2024 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը, համայնքներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված 1.163.514.400 դրամ գույքային վնաս (2023 թվականին՝ 1.365.324.431 դրամ), որից պետությանը՝ 805.810.800 դրամ (2023 թվականին՝ 1.215.032.431 դրամ), համայնքներին՝ 229.023.600 դրամ (2023 թվականին՝ 43.391.000 դրամ), իրավաբանական անձանց՝ 123.158.000 դրամ (2023 թվականին՝ 106.901.000 դրամ), ֆիզիկական անձանց՝ 5.522.000 դրամ:





Ավարտված վարույթներից մեկով՝ ընդհանուր՝ 14 միլիոն 443 հազար դրամ կադաստրային արժեքով 8 հողամաս է վերադարձվել Լոռու մարզի Լոռի բերդ համայնքին:

Մասնավորապես՝

1. Կողես բնակավայրի 3.1 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի սեփականության իրավունքը:

2. Կողես բնակավայրի 2.29 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի սեփականության իրավունքը:

3. Կողես բնակավայրի 1.3 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի սեփականության իրավունքը:

4. Կողես բնակավայրի 1.41 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի սեփականության իրավունքը:

5. Կողես բնակավայրի 2.2 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի սեփականության իրավունքը:

6. Կողես բնակավայրի 3.35 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի սեփականության իրավունքը:

7. Կողես բնակավայրի 1.5 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի սեփականության իրավունքը:

8. Կողես բնակավայրի 1.93 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի սեփականության իրավունքը:

2024 թվականի ընթացքում դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 163 քրեական գործ (2023 թվականին՝ 149)՝ 362 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 249): Նշված քրեական գործերից 126-ով (2023 թվականին՝ 97) 272 անձ դատապարտվել է (2023 թվականին՝ 140), որոնցից 37 անձ (2023 թվականին՝ 25)՝ ազատազրկման, 46 անձ (2023 թվականին՝ 39)՝ տուգանքի, 4 անձ (2023 թվականին՝ 3)՝ հիմնական այլ պատժի, 185 անձի (2023 թվականին՝ 73) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 17 անձի (2023 թվականին՝ 9) նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 11 գործով 17 անձ արդարացվել է (2023 թվականին՝ 9 գործով 14 անձ):



Դատարանում կարճվել է 26 գործ 73 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 43 գործ 95 անձի վերաբերյալ): 2024 թվականին կարճված 26 գործով անցնող 73 անձից 1-ի (2023 թվականին՝ 7) վերաբերյալ գործը կարճվել է համաներման ակտի կիրառմամբ, 41-ի (2023 թվականին՝ 71) վերաբերյալ՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, իսկ 31-ի (2023 թվականին՝ 15) վերաբերյալ՝ այլ հիմքերով:

Դատարանում քննված և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր վնասը կազմել է 6.348.450.096 դրամ (2023 թվականին՝ 6.191.220 դրամ), որից վերականգնվել է 8.773.853 դրամը (2023 թվականին՝ 4.463.095 դրամ), որը հանդիսացել է պետությանը պատճառված վնաս:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքում 2023 թվականին կատարված փոփոխության արդյունքում Դատախազությանը վերապահվեց նաև համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորությունների շրջանակներում ուսումնասիրություններ կատարելու գործառույթ: Այս փոփոխությունների արդյունքում արձանագրվել են նաև Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից համայնքային շահերի պաշտպանության նպատակով ուսումնասիրություններ իրականացնելու և դրանց արդյունքներով նախկինում տեղի ունեցած կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ներկայացվել են պատշաճ հաղորդումներ: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ վարչությունից Հակակոռուպցիոն կոմիտե է ստացվել 30 հաղորդում, որոնց կապակցությամբ նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Դատախազությունում 2024 թվականի ընթացքում ներքին ազդարարման դեպքեր չեն գրանցվել: Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով 2024 թվականին ստացվել է 380 հաղորդում, որից 301-ը՝ անանուն, 79-ը՝ տվյալներով: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգման է ուղարկվել 237 հաղորդում, հիշյալ հաղորդումների ստուգման արդյունքներով նախաձեռնվել է 21 քրեական վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթներով կոռուպցիոն հանցագործություններ կատարելու համար դատի են տրվել 173 (2023 թվականին՝ 152) պաշտոնատար անձ, ովքեր ըստ բնագավառների և զբաղեցրած պաշտոնների հանդիսացել են՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 1 պետ:

2. Տեղական ինքնակառավարման մարմնի 31 պաշտոնատար անձ, այդ թվում՝

- Երևան քաղաքի վարչական շրջանի 1 նախկին ղեկավար,
- Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի 6 աշխատակից, այդ թվում՝ բաժնի 3, վարչության՝ 1 ղեկավար,
- համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1 տնօրեն,
- մարզպետի 1 խորհրդական,
- գործող և նախկին համայնքի 11 ղեկավար,
- համայնքի ղեկավարի 1 տեղակալ,
- համայնքի ղեկավարի 1 օգնական,
- համայնքի աշխատակազմի 9 աշխատակից, այդ թվում՝ բաժնի 2, վարչության՝ 2 պետ:

3. ՀՀ ՊԵԿ 16 պաշտոնատար անձ, որից՝

- մաքսային 12 տեսուչ,
- հարկային 2 տեսուչ,
- 2 օպերլիազոր:

4. ՀՀ սնանկության դատարանի 1 դատավոր:

5. ՀՀ դատախազության 1 նախկին դատախազ:

6. ՀՀ քննչական կոմիտեի 6 պաշտոնատար անձ (քննիչ):

7. Սնանկության գործով 1 կառավարիչ:

8. ՀՀ ՆԳՆ ոստիկանության 42 աշխատակից, այդ թվում՝

- ճանապարհային ոստիկանության 1 ծառայող,
- պարեկային ծառայության 30 ծառայող,
- համայնքային ոստիկանության 4 տեսուչ,
- ՊՊԳՎ ստորաբաժանման 1 պետ,
- ՊՊԳՎ 1 տեսուչ,
- Հաշվառման-քննական բաժանմունքի 1 պետ և 2 տեսուչ,
- ՀՀ ՆԳՆ ոստիկանության միգրացիայի և քաղաքացիության ծառայության 2 աշխատակից:

9. ՀՀ ՊՆ և ՁՈՒ 31 պաշտոնատար անձ՝

- ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման զորահավաքային վարչության 1 պետ,
- ՀՀ զորակոչային և զորահավաքային համալրման զորահավաքային տարածքային ստորաբաժանման 4 ղեկավար,
- ՀՀ զորակոչային և զորահավաքային համալրման զորահավաքային տարածքային ստորաբաժանման զորակոչային բաժանմունքի 1 պետ,
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման զորահավաքային տարածքային ստորաբաժանումում ընդգրկված 1 ակնաբույժ,
- Կենտրոնական բժշկական հանձնաժողովի 4 անդամ,
- ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ֆիզիկական պատրաստության և սպորտի ծառայության ֆիզիկական պատրաստության բաժնի 1 սպա,
- ՀՀ պաշտպանության նախարարության N բանակային կորպուսի բաժնի 1 պետ,
- զորամասի 3 հրամանատար,
- զորամասի հրամանատարի 1 տեղակալ,
- գումարտակի 1 հրամանատար,
- վաշտի 1 հրամանատար,
- դասակի 3 հրամանատար,
- ջոկի 1 հրամանատար,
- զորամասի ավտոմոբիլային ծառայության 2 պետ,
- զորամասի կապի 1 պետ,
- պայմանագրային 5 զինծառայող:

10. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների 3 ծառայող:

11. ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի 1 բժիշկ, 1 բուժքույր:

12. ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնի 1 գլխավոր մասնագետ:

13. ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության տարածքային ստորաբաժանման 1 պետ և 2 աշխատակից:

14. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսության մասնաճյուղի 1 անտառապետ և մասնաճյուղի 1 տնօրեն:

15. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 6 աշխատակից և 2 բաժնի պետ:

16. Ուսումնական հաստատության 10 աշխատակից, որից՝

- բարձրագույն ուսումնական հաստատության ֆակուլտետի 1 դեկան,
- բարձրագույն ուսումնական հաստատության բաժնի 1 պետ,
- քոլեջի 2 տնօրեն,
- քոլեջի 1 դասախոս,
- դպրոցի 3 տնօրեն,
- դպրոցի 1 ուսուցիչ,
- դպրոցի 1 մարզիչ:

17. ՀՀ կրթության տեսչական մարմնի վարչության 1 պետ:

18. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության 5 աշխատակից, բաժնի 2 պետ:

19. ՀՀ առողջապահության նախարարի 1 տեղակալ, նախարարության վարչության 1 պետ:

20. Բժշկական հաստատությունների 2 աշխատակից:

21. Հիմնադրամի 1 տնօրեն:

22. ՀՀ սննդի անվտանգության տեսչական մարմնի մարզային կենտրոնի 1 գլխավոր տեսուչ:

Ստորև ներկայացվում է վերոնշյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ մի քանի գործերով տվյալներ:

- Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Նաիրիի քննչական բաժնում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 214-րդ հոդվածի 2-րդ մասի և 325-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով քննվող քրեական վարույթի նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ, որի առթիվ 2023 թվականի հուլիսի 31-ին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որն ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե:

Քրեական վարույթով իրականացված գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների հիման վրա՝ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ հետախուզական վարչությունում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Տ.Փ.-ն, հանդիսանալով Սևանկության դատարանի դատավոր, կաշառք տվողների մատնանշած անձանց օգտին, իր իշխանական լիազորություններն օգտագործելով, գործողություն կատարելու համար Տ.Հ.-ի օժանդակությամբ անձամբ ստացել է առանձնապես խոշոր չափերով կաշառք:

2023 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդություններ են ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ՝ դատավորի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելու համաձայնություն տալու վերաբերյալ, որոնք Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվական դեկտեմբերի 15-ի որոշումներով բավարարվել են:

2023 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից որոշում է կայացվել Տ.Փ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանի՝

2023 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ մեղադրյալ Տ.Փ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը՝ 2 ամիս ժամանակով:

2024 թվականի հունվարի 30-ին քրեական վարույթի նյութերը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են Հակակոռուպցիոն դատարան: Քրեական գործը գտնվում է հիմնական դատալսումների փուլում:

- Արմավիրի մարզի դատախազությունում, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գյուղերից մեկի վարչական շենքի (ներկայում բնակելի տան) կադաստրային գործը: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Փարաքար համայնքի գյուղերից մեկի նախկին գյուղապետը, խախտելով ՀՀ հողային օրենսգրքի մի շարք հոդվածների պահանջները, գույքն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու հիմքերի բացակայության պայմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող՝ 246.6 քմ մակերեսով վարչական շենքը և 920 քմ մակերեսով հողամասը 2005 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված առուվաճառքի պայմանագրով՝ 978 հազար դրամով, վաճառել է քաղաքացի Տ.Խ.-ին: Այնուհետև, խախտելով Կառավարության 2002 թվականի համապատասխան որոշմամբ սահմանված կարգը, գյուղապետը 2005 թվականի սեպտեմբերի 9-ին թույլատրել է Տ.Խ.-ին գյուղի վարչական շենքի գործառնական նշանակությունը փոխել՝ որպես բնակելի տան, որից հետո շենքն ու հողատարածքը հանել է հասարակական սպասարկման տարածքների ֆոնդի հաշվեկշռից ու ընդգրկել բնակելի ֆոնդի շենքերի հաշվեկշռում:

2009 թվականի հուլիսի 31-ին Տ.Խ.-ի և գյուղապետի որդու միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով գյուղապետի որդին 4 միլիոն 500 հազար դրամով ձեռք է բերել վերոնշյալ վարչական շենքն ու հողամասը:

Հանցավոր գործունեությամբ ստացված գույքի ծագման աղբյուրն ու տեղաշարժը թաքցնելու նպատակով՝ վերոնշյալ գույքը 2017 թվականին 2 միլիոն դրամով օտարվել է քաղաքացի Ս.Մ.-ին:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են առերևույթ հանցանքի դեպքեր՝ դատախազը հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

2024 թվականի մարտի 22-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասով և 296-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական վարույթով ներկայումս իրականացվում են ապացուցողական և վարութային այլ գործողություններ:

- Ա.Ս.-ն, 2011 թվականից մինչև 2018 թվականը զբաղեցնելով Երևան քաղաքի համայնքներից մեկի ղեկավարի պաշտոնը, իր մտերիմ Ա.Շ.-ի հետ, հափշտակել է Երևանին սեփականության իրավունքով պատկանող՝ Ներքին Չարբախ 3-րդ փողոց 60/1 հասցեում գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատության՝ 124.3 քմ մակերեսով և 18 մլն 720 հազար դրամ շուկայական արժեքով անշարժ գույքը:

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության կողմից քրեական գործի (վարույթի) ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2018 թվականի փետրվարի 9-ին համայնքի ղեկավարը, Ա.Շ.-ի կողմից ստանալով իր սեփականության իրավունքը գրանցելու վերաբերյալ դիմում, կազմել է նախադպրոցական ուսումնական հաստատությանը հատկացված հողամասը մասնավորեցնելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ այն պայմաններում, երբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գույքը կարող էր օտարվել միայն բացառիկ դեպքերում, իսկ «Կրթության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օտարվելու դեպքում գույքը կարող էր օգտագործվել միայն ուսումնական նպատակներով:

Նախագծին կից ներկայացված պաշտոնական փաստաթղթերում համայնքի ղեկավարը Երևանի քաղաքապետարանին հաղորդել է կեղծ տվյալներ: Մասնավորապես՝ ներկայացրել է իրականում գոյություն չունեցող՝ Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարի 2005 թվականի որոշում, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակցի կողմից տրված՝ կեղծ տվյալներ պարունակող տեղեկանք: Դրանց հիման վրա՝ Երևանի քաղաքապետի 2018 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ նախադպրոցական հաստատության վերոնշյալ տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը նվիրաբերվել է համայնքի ղեկավարի մտերիմ Ա.Շ.-ին:

2018 թվականի փետրվարի 28-ին վերոնշյալ գույքը ձևակերպվել է Ա.Շ.-ի անվամբ, վերջինս 2019 թվականի փետրվարի 28-ին գույքը նվիրաբերել է համայնքի ղեկավար Ա.Ս.-ի դստերը:

Բացի այդ, համայնքի ղեկավարը կազմել է Երևանի քաղաքապետի որոշման մեկ այլ նախագիծ, որով մանկապարտեզի տարածքի մյուս հատվածը՝ 77.1 քմ մակերեսով և 11 միլիոն 400 հազար դրամ շուկայական արժեքով, նվիրատվությամբ օտարվել է համայնքապետարանի աշխատակից Մ.Մ.-ին:

2024 թվականի փետրվարի 26-ին հսկող դատախազը սեփական նախաձեռնությամբ հանրային քրեական

հետապնդում է հարուցել Ա.Ս.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, Ա.Շ.-ի նկատմամբ՝ 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Դատախազը 2024 թվականի մարտի 11-ին հաստատել է վերոնշյալ անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

- Ս.Պ.-ն, 2005 թվականից զբաղեցնելով Արարատի մարզի Արտաշատ համայնքի Այգեպատ բնակավայրի ղեկավարի պաշտոնը, 2012 թվականին, շուկայականից էականորեն ցածր գնով, համայնքի հաշվեկշռում գտնվող կենցաղի տան շենքը վաճառել է իր աներոջը, որն էլ, տարիներ անց, ձևական առուվաճառքի պայմանագիր կնքելու միջոցով, գույքը վաճառել է իր դստերը՝ Ս.Պ.-ի կնոջը:

Քրեական վարույթով պարզվել է, որ Այգեպատ բնակավայրի ղեկավար Ս.Պ.-ն, համայնքապետարանի առաջատար մասնագետ Ռ.Մ.-ի հետ համատեղ, համայնքի ավագանու նիստի՝ 2012 թվականի հուլիսի 14-ի արձանագրության մեջ կեղծ տեղեկություններ է ներառել այն մասին, որ ավագանու երկու անդամները կողմ են համայնքի կենցաղի տան կիսաքանդ շենքն օտարելուն (իրականում կենցաղի տունը 2008-2010 թվականների ընթացքում վերանորոգվել է):

Կեղծ արձանագրության հիման վրա՝ կենցաղի տան շենքն օրենքի խախտմամբ դրվել է աճուրդի. 7 միլիոն 210 հազար դրամ շուկայական արժեք ունեցող շենքի օտարման մեկնարկային գին է սահմանվել 2 մլն 570 հազար դրամը:

Կազմակերպված աճուրդ-վաճառքին մասնակցել և հաղթող է ճանաչվել Ս.Պ.-ի աները՝ Ռ.Խ.-ն: Աճուրդից առաջ տվյալ տարածքը 15 տարով վարձակալության է տրամադրված եղել ամսական՝ 10 հազար դրամով: Վարձակալության գումարը, վաճառքից հետո, վճարվել է համայնքի ղեկավարին:

Ռ.Խ.-ն վերոնշյալ գույքը 2018 թվականի մարտի 13-ին, ձևական առուվաճառքի պայմանագրով՝ 3 միլիոն դրամով, օտարել է իր դստերը՝ Այգեպատ բնակավայրի ղեկավար Ս.Պ.-ի կնոջը:

Դատախազը 2023 թվականի դեկտեմբերի 18-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Այգեպատ բնակավայրի ղեկավար Ս.Պ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 445-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Պաշտոնեական կեղծիք կատարելուն և վստահված գույքի հափշտակությանն օժանդակելու համար հանրային քրեական

հետապնդում է հարուցվել նաև ավագանու նախկին անդամների նկատմամբ, իսկ վստահված գույքի հափշտակության, հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելուն և փողերի լվացմանն օժանդակելու համար՝ համայնքի ղեկավարի աներոջ՝ Ռ.Խ.-ի նկատմամբ:

Հակակոռուպցիոն դատարանի որոշմամբ՝ հանցավոր ծագում ունեցող գույքի՝ Այգեպատ համայնքի կենցաղի տան վրա, արգելանք է կիրառվել:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում փողերի լվացմանն օժանդակելու համար հանրային քրեական հետապնդում է հարուցվել նաև Ս.Պ.-ի կնոջ նկատմամբ:

Դատախազը 2024 թվականի մարտի 1-ին հաստատել է համայնքի ղեկավարի, վերջինիս կնոջ և աներոջ վերաբերյալ մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

- Դատախազը 2024 թվականի հունվարի 4-ին սեփական նախաձեռնությամբ հանրային նոր քրեական հետապնդում է հարուցել 1999 թվականից մինչև 2017 թվականը Պաշտպանության նախարարությունում զինվորական տարբեր պաշտոններ զբաղեցրած Հ.Բ.-ի նկատմամբ (Պաշտպանության նախարարության N կորպուսի հրամանատար, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ և այլն):

Հանրային նոր քրեական հետապնդումը հարուցվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 251 միլիոն դրամ փողերի լվացում կատարելու համար: Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում Հ.Բ.-ին մեղադրանք է ներկայացված նաև հայտարարագրման ենթակա՝ առանձնապես խոշոր չափերով գույքի և եկամտի վերաբերյալ տվյալները թաքցնելու համար (5 դրվագ):

Քրեական վարույթով նշանակված փորձաքննության հիմքով Հ.Բ.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցվել է:

- Օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվել է, որ Պաշտպանության նախարարության կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամ հանդիսացած Ս.Հ.-ն, այլ պաշտոնատար անձանց հետ, հիվանդության վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմելու եղանակով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու գործընթացը կազմակերպելու համար, պարտադիր զինվորական ծառայության ենթակա անձի հորից պահանջել է 6 միլիոն 948 հազար դրամին համարժեք 18 հազար ԱՄՆ դոլար կաշառք:

Ս.Հ.-ն և կաշառք տվող քաղաքացին բռնվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից 2024 թվականի հուլիսի 26-ին՝ կաշառքի մի մասը՝ 10 հազար ԱՄՆ դոլարը ստանալու պահին:

2024 թվականի հուլիսի 27-ին նախաձեռնվել է քրեական վարույթ: Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում հայտնաբերվել են առերևույթ այլ հանցանքների վերաբերյալ փաստական տվյալներ (առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու օժանդակության փորձ, խոշոր չափերով կաշառք ստանալ, կաշառք տալ, հիվանդության սիմուլյացիայի ճանապարհով ծառայությունից ազատվելու եղանակով պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու օժանդակություն, պաշտոնատար անձանց կողմից կեղծ փաստաթուղթ կազմել և տրամադրել): Ստացված տվյալների հիման վրա՝ նախաձեռնվել է քրեական վարույթ և միացվել 2024 թվականի հուլիսի 27-ին նախաձեռնված քրեական վարույթին:

Դատախազը 2024 թվականի դեկտեմբերի 2-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Ս.Հ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-46-435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

2024 թվականի դեկտեմբերի 10-ին հաստատվել է Ս.Հ.-ի և այլոց վերաբերյալ մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերի հետ հանձնվել Հակակոռուպցիոն դատարան:

- Փ.Յ.-ն, 2008 թվականից մինչև 2019 թվականը զբաղեցնելով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Մետրոպոլիտեն) տնօրենի պաշտոնը, պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ կատարել է խոշոր և առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ:

Մասնավորապես՝

- Փ.Յ.-ն իր որդու հետ 2008 թվականի սեպտեմբերի 1-ին կնքել է աշխատանքային պայմանագիր, որի հիման վրա՝ որդին զբաղեցրել է Մետրոպոլիտենի «Կապի և ազդանշանման» մասնաճյուղի պետի տեղակալի, իսկ 2014 թվականի օգոստոսի 4-ից՝ «Ազդանշանման և կապի» մասնաճյուղի պետի պաշտոնները: Փ.Յ.-ն, Մետրոպոլիտենի տնօրենների խորհրդի նախագահի օժանդակությամբ, ստացել է Խորհրդի անդամների միաձայն հավանությունը՝ Մետրոպոլիտենի՝ Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի 76 շենքի (կապի տան) 944.5 քմ մակերեսով նկուղային հարկն օտարելու վերաբերյալ: Ընկերության տնօրենների խորհրդի գրության հիման վրա՝ Երևանի քաղաքապետը 2013 թվականի օգոստոսի 20-ին գրությամբ դիմել է ՀՀ վարչապետին՝ առաջարկելով հանձնարարել համապատասխան գերատեսչությանը՝ հրապարակային սակարկությունների միջոցով նշված տարածքը ներկայացնել օտարման:

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի գնահատողը 2013 թվականի հոկտեմբերի 23-ին կազմել է գնահատման կեղծ հաշվետվություն: Հաշվետվության համաձայն՝ 944.5 քմ մակերեսով տարածքի շուկայական արժեքը 2013 թվականի հոկտեմբերի 12-ի դրությամբ կազմել է 106 միլիոն 850 հազար դրամ: Գնահատողը վերոնշյալ փաստաթղթում դիտավորությամբ չի ներառել շենքի նկուղային հարկաբաժնի տարածքի համար հատկացված՝ 0.19459 հա և 0.0038736 հա մակերեսներով հողամասերն ու դրանց շուկայական արժեքները: Արդյունքում՝ գույքը, որի իրական շուկայական արժեքը 2013 թվականի հոկտեմբերի 12-ի դրությամբ կազմել է 194 միլիոն 880 հազար դրամ, գնահատվել է 106 միլիոն 850 հազար դրամ: 2013 թվականի դեկտեմբերի 4-ին անշարժ գույքն աճուրդի է դրվել, մեկնարկային գին է սահմանվել 106 միլիոն 850 հազար դրամը: 2013 թվականի դեկտեմբերի 4-ին կայացած առաջին և նույն թվականի դեկտեմբերի 16-ին կայացած երկրորդ աճուրդներին որևէ անձ (այդ թվում՝ Փ.Յ-ի որդին) չի մասնակցել, գույքն աճուրդով չի վաճառվել: Փ.Յ-ի որդին անշարժ գույքը գնել է երրորդ աճուրդի ժամանակ՝ 2013 թվականի դեկտեմբերի 26-ին՝ 75 միլիոն 393 հազար դրամով:

- Փ.Յ-ն, իր որդու օժանդակությամբ, հափշտակել է 7 միլիոն 104 հազար դրամ, մեկ այլ դեպքում՝ որդու և Մետրոպոլիտենում աշխատող որդու ընկերոջ օժանդակությամբ՝ 38 միլիոն 505 հազար դրամ:
- Փ.Յ-ն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի նախկին տեղակալի խնդրանքով, աշխատանքի է ընդունել երեք վարորդի, ովքեր ընկերությունում փաստացի չեն աշխատել, փոխարենը՝ տարիներ շարունակ՝ որպես վարորդ՝ սպասարկել են քաղաքապետարանի վերոնշյալ պաշտոնյային ու նրա ընտանիքի անդամներին: Մետրոպոլիտենի բյուջեից 2012 թվականի օգոստոսից մինչև 2018 թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում երեք վարորդներին վճարվել է 11 միլիոն 147 հազար դրամ աշխատավարձ, հատկացվել է 11 միլիոն 887 հազար դրամի բենզին, ավտոմեքենաների տեխսպասարկման համար՝ 5 միլիոն դրամ: Արդյունքում՝ Մետրոպոլիտենի տնօրենը վատնել է շուրջ 28 միլիոն դրամ:
- Փ.Յ-ն, ընկերության կարիքների համար ձեռք բերված բենզինից, 2009 թվականի հոկտեմբերից մինչև 2019 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր ամիս տարբեր խմբաքանակներով, հափշտակել է 39 միլիոն 963 հազար դրամի 110 հազար լիտր բենզին:

- Փ.Յ-ն 2015 թվականի հուլիսի 1-ին աշխատանքի է ընդունել քաղաքացու, ով աշխատանքի չի հաճախել, չի կատարել իր աշխատանքային պարտականությունները, սակայն Մետրոպոլիտենի բյուջեից 2015-2018 թվականներին ստացել է 7 միլիոն 120 հազար դրամ աշխատավարձ:
- Փ.Յ-ն 2011 թվականի մայիսի 27-ին կնքած պայմանագրով աշխատանքի է ընդունել մեկ այլ քաղաքացու, ով նույնպես աշխատանքի չի հաճախել, սակայն ընկերության բյուջեից 2011-2014 թվականներին ստացել է 4 միլիոն դրամ աշխատավարձ:
- Փ.Յ-ն, խախտելով «Գնումների մասին» օրենքի պահանջը, առանց մրցույթ հայտարարելու և անցկացնելու, 2017 թվականի օգոստոսի 4-ին Մետրոպոլիտենի անունից ՍՊ ընկերության հայաստանյան մասնաճյուղի հետ կնքել է պայմանագիր, որը նույնական է եղել նախորդ տարում կնքած պայմանագրի առարկային, սակայն պայմանագրի արժեքը 220 հազար եվրոյով ավելի է եղել:

Դատախազը 2024 թվականի 2024 թվականի սեպտեմբերի 12-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Փ.Յ-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (7 դրվագ), ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, Փ.Յ-ի որդու նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագ): Հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել և՛ հինգ անձի նկատմամբ: Փ.Յ-ի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց է ընտրվել 5 միլիոն դրամ գրավը, իսկ վերջինիս որդու նկատմամբ՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

2024 թվականի հոկտեմբերի 15-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը և վարույթի նյութերը հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

- Քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվել է Արարատի մարզի Արտաշատ համայնքի նախկին ղեկավար Գ.Մ.-ի կողմից, Արտաշատ համայնքի նախկին պաշտոնատար անձանց հետ հանցակցությամբ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու վերաբերյալ քրեական վարույթը: Գ.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով (ութ դրվագ), 308-րդ հոդվածի 2-րդ մասով (4 դրվագ): Գ.Մ.-ի և այլոց վերաբերյալ քրեական վարույթը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է իրավասու դատարան:
- Քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվել է Երևան քաղաքի Արաբկիր համայնքի ավագանու անդամների կողմից իրենց

պաշտոնական լիազորությունների չարաշահման, ինչպես նաև նախկին թաղապետ Հ.Շ.-ի կողմից իր պաշտոնեական լիազորությունների չարաշահման և փողերի լվացում կատարելու վերաբերյալ քրեական վարույթը: Հ.Շ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (2 դրվագ) և 308-րդ հոդվածի 2-րդ մասով (4 դրվագ): Հ.Շ.-ի և այլոց վերաբերյալ քրեական վարույթը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, հանձնվել է իրավասու դատարան:

- Հաշվետու ժամանակահատվածում՝ 2024 թվականի դեկտեմբերի 10-ին, Հակակոռուպցիոն դատարանի կողմից կայացված դատավճռով, ՀՀ արտակարգ իրավիճակների նախկին նախարար Ա.Փ.-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով: Նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 տարի ժամկետով,[12] տուգանք՝ 1 միլիոն 300 հազար դրամ՝ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով՝ 3 տարի ժամկետով:

12. Ազատազրկման ձևով նշանակված պատժից հաշվակցվել (հանվել) է փաստացի անազատության մեջ գտնվելու ժամանակը՝ 6 ամիս 7 օրը՝ թողնելով կրելու 4 տարի 5 ամիս 23 օր:

6

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր դատախազությունը պետական և համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ լիազորության շրջանակում 2024 թվականին շարունակել է ոլորտի ուսումնասիրությունը և հաշվետու ժամանակահատվածում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով կատարել է 435 ուսումնասիրություն (2023 թվականին՝ 383), հայտնաբերել է 328 իրավախախտում (2023 թվականին՝ 447):

Ուսումնասիրություններն ընդգրկել են պետական և համայնքային գույքի պահպանության, օտարման իրավաչափության, հողային օրենսդրության պահանջների պահպանության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, քաղաքաշինության ոլորտները:

Հաշվետու և նախորդ տարիներին ներկայացված հայցերով 2024 թվականի ընթացքում կայացված դատական ակտերով փաստացի վերականգնվել է նախնական գնահատմամբ շուրջ 2 միլիարդ 785 միլիոն 511 հազար դրամ (շուրջ 7 միլիոն 69 հազար ԱՄՆ դոլար) շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով գույք:[13]

Պետության սեփականության իրավունքը վերականգնվել է հետևյալ գույքերի նկատմամբ՝

1. Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ հաստատվել է Դատախազության և պատասխանող «Սոխոսենթր» ՍՊ ընկերության միջև կնքված հաշտության համաձայնությունը: Համաձայնության հիման վրա՝ Երևան քաղաքի Կողբացի փողոցի 36/3 հասցեում կառուցված համալիրի 1-ին և 2-րդ հարկերից շուրջ 240 քմ մակերեսով տարածքի սեփականության իրավունքն ու 0,03 հա մակերեսով հողամասի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը փոխանցվել է Հայաստանի Հանրապետությանը:

Նշված տարածքների շուկայական արժեքը մոտ 1 միլիարդ դրամ է, իսկ պետությանը փոխանցվող վարձակալության տարեկան վճարն ավելի քան 38 միլիոն դրամ (գույքը ներկայում ծանրաբեռնված է վարձակալության պայմանագրերով):

13. Նշված գույքերի շուկայական արժեքները զգալիորեն գերազանցում են շուկայականին մոտարկված կադաստրային արժեքները:

2. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի փետրվարի 9-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է և Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի Աղավնու աղբյուր թաղամասի թիվ 27 հասցեում գտնվող՝ 0.4997 հա մակերեսով և նույն թաղամասի թիվ 28 հասցեում գտնվող՝ 0.4997 հա մակերեսով 9 միլիոն 382 հազարական դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեք ունեցող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ հողամասերի նկատմամբ վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: 2024 թվականի մայիսի 8-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

3. Հակակոռուպցիոն դատարանի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի վճռով (օրինական ուժի մեջ է մտել 2024 թվականի հուլիսի 31-ին) Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է և Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի Աղավնու աղբյուր թաղամասի թիվ 26 հասցեում գտնվող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ 0.5 հա մակերեսով 9 միլիոն 388 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեք ունեցող հողամասի նկատմամբ վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: 2024 թվականի դեկտեմբերի 27-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:



4. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 19-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է և Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի թիվ 22 հասցեում գտնվող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ շուրջ 3 հա մակերեսով 86 միլիոն 625 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեք

ունեցող հողամասի նկատմամբ վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: 2025 թվականի փետրվարի 13-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

5. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի հունվարի 12-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է և Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Մ. Մկրտչյան փողոցի 32/1 հասցեում գտնվող՝ 431 միլիոն 915 հազար դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 26.700 քմ մակերեսով և նույն փողոցի 36/1 հասցեում գտնվող՝ 427 միլիոն 62 հազար դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ 26.400 քմ մակերեսով հողամասերի նկատմամբ վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը:

2025 թվականի փետրվարի 13-ին գույքերն ամրացվել են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

6. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի հուլիսի 2-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է և Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 2/5 հասցեում գտնվող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածքներ» նպատակային նշանակությամբ 12.400 քմ մակերեսով 730 միլիոն 462 հազար դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ

վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: 2025 թվականի փետրվարի 13-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

7. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի նոյեմբերի 1-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է և Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի Աղավնու աղբյուր թաղամասի թիվ 29 հասցեում գտնվող 0.5 հա մակերեսով և նույն թաղամասի թիվ 30 հասցեում գտնվող 0.4997 հա մակերեսով համապատասխանաբար 9 միլիոն 388 հազար դրամ և 9 միլիոն 382 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեք ունեցող, հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ հողամասերի նկատմամբ վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: 2025 թվականի փետրվարի 13-ին գույքերն ամրացվել են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

8. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի նոյեմբերի 1-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է և Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի Աղավնու աղբյուր թաղամասի թիվ 8 հասցեում գտնվող՝ հանգստի համար նախատեսված, «հատուկ պահպանվող տարածք» նպատակային նշանակությամբ 2 հա մակերեսով 37 միլիոն 554 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: 2025 թվականի փետրվարի 13-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

Համայնքների սեփականության իրավունքը վերականգնվել է հետևյալ գույքերի նկատմամբ՝

1. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի փետրվարի 20-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է, որի արդյունքում Կոտայքի մարզի Նաիրի (Քասախ) համայնքի Ե. Չարենցի 4-րդ փողոցի 13 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակությամբ 0.0801 հա մակերեսով 5 միլիոն 474 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեք ունեցող հողամասի նկատմամբ վերականգնվել է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի սեփականության իրավունքը:

2. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի նոյեմբերի 29-ի վճռով հաշտության համաձայնությունը հաստատելու արդյունքում Մերձավան բնակավայրի Երկրագործների 9 հասցեում գտնվող՝ ընդհանուր 16 միլիոն 347 հազար դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 63.2 քմ մակերեսով տնտեսական շինության, 70.2 քմ մակերեսով ծածկի ու շինության զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.3027 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականության իրավունքը:

3. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 20-ի վճռով հաշտության համաձայնությունը հաստատելու արդյունքում Մերձավան բնակավայրում գտնվող 3 միլիոն դրամ շուկայական արժեքով 0.35 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ վերականգնվել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականության իրավունքը:

4. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը մասնակի բավարարվել է, որի արդյունքում Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրում գտնվող՝ 150 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեք ունեցող գյուղատնտեսական նշանակության՝ ընդհանուր 0.7 հա մակերեսով

4 հողամասերի նկատմամբ վերականգնվել է Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի սեփականության իրավունքը:

Այսպիսով, 2024 թվականին դատախազների կողմից ներկայացված հայցերով Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականության իրավունքն է գրանցվել շուրջ 2 միլիարդ 785 միլիոն 511 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 18 միավոր անշարժ գույքի նկատմամբ (2023 թվականին վերադարձվել է 4 միավոր անշարժ գույք):

2024 թվականի ընթացքում դատախազական ակտերի հիման վրա պետությանը և համայնքներին են վերադարձվել հետևյալ գույքերը՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Գ. Նարեկացու փողոց 3 հասցեում գտնվող՝ 29 միլիոն 82 հազար 580 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 0.431 հեկտար հողամասի և դրա վրա գտնվող՝ ընդհանուր 511.97 քմ մակերեսով շենքերի և շինությունների նկատմամբ վերականգնվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը: 2024 թվականի մայիսի 23-ին գույքն ամրացվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին, այնուհետև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գտնվող «Գավառի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Իջևան համայնքին են վերադարձվել շուրջ 3 հա մակերեսով 5 հողամասեր: Տավուշի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրելով Տավուշի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթով ձեռք բերված տվյալները, հարցումներ է կատարել Կադաստրի կոմիտե և պարզել, որ «Տավուշ» միջազգային հայրենակցական միության ՀԿ-ին Տավուշի

մարզում անհատույց տրամադրվել են 5 հողատարածքներ, որոնք չեն օգտագործվում ըստ նպատակային նշանակության: Դատախազի կողմից գրություն է հասցեագրվել Իջևանի համայնքապետարան՝ վերոնշյալ հողամասերը համայնքի օգտագործմանը վերադարձնելու նպատակով: Իջևան համայնքի իրավասու մարմինների կողմից դատախազի գրության հիման վրա ձեռնարկված գործողությունների արդյունքում՝ Իջևան համայնքին են վերադարձվել ընդհանուր 3.1845 հա մակերեսով 5 հողամասերը:

3. Արարատ համայնքին են վերադարձվել Ավշար համայնքի նախկին ղեկավարի կողմից իշխանական և ծառայողական լիազորությունների օգտագործմամբ հափշտակված 3 անշարժ գույքերը՝ Հ. Շիրազի փողոցում գտնվող՝ շուրջ 55.5 միլիոն դրամ արժեքով և ամսական 115 հազար դրամ վարձավճարով վարձակալությամբ հանձնված՝ 0.37602 հա մակերեսով «բնակավայրերի նպատակային նշանակության» հասարակական կառուցապատման հողատարածքը և դրանով ծանրաբեռնված՝ 1211.74 քմ մակերեսով պահեստները, Հ. Շիրազի փողոցում գտնվող՝ 759 հազար դրամ արժեքով 0.0622 հա մակերեսով «բնակավայրերի նպատակային նշանակության» հասարակական կառուցապատման հողատարածքը և Հ. Շիրազի փողոցում գտնվող՝ շուրջ 22 միլիոն դրամ արժեքով և ամսական 445 հազար դրամ վարձավճարով վարձակալությամբ հանձնված՝ 0.0966 հա մակերեսով «բնակավայրերի նպատակային նշանակության» հասարակական կառուցապատման հողատարածքը և դրանով ծանրաբեռնված՝ 416.6 քմ մակերեսով նախկին կոլտնտեսության շենքը: Դատախազը 2024 թվականին սեպտեմբերի 19-ին Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնեական լիազորությունների չարաշահման, պաշտոնեական կեղծիքի, վատնման և փողերի լվացման փաստերով քննվող քրեական վարույթի շրջանակում միջնորդագիր էր հասցեագրել Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանուն՝

Ավշար բնակավայրի Հ. Շիրազի փողոցում գտնվող վերոնշյալ 3 անշարժ գույքերն օտարելու վերաբերյալ 2001 թվականի փետրվարի 25-ին, 2005 թվականի օգոստոսի 23-ին և 2007 թվականի դեկտեմբերի 27-ին կայացված որոշումները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Այսպիսով, 2024 թվականի ընթացքում դատախազական ակտերի հիման վրա պետությանը և համայնքներին վերադարձված գույքերի ընդհանուր արժեքը կազմում է 107 միլիոն 341 հազար դրամ:

Դատախազության կողմից հաշվետու ժամանակահատվածում դատարան է ներկայացվել 277 հայց, որոնցից 73-ը՝ քաղաքացիական դատավարության կարգով՝ ընդհանուր 6 միլիարդ 974 միլիոն 593 հազար դրամ գումարի բռնագանձման պահանջով, 35-ը՝ քրեական դատավարության կարգով՝ ընդհանուր 420 միլիոն 348 հազար դրամ վնասի հատուցման համար դրամական գումարի բռնագանձման պահանջով և 169 հայց՝ վարչական դատավարության կարգով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց վարչական ակտերի, գործողությունների դեմ, որոնցով պետությանը կամ համայնքներին պատկանող գույքն ապօրինի օտարվել է:

Նշված հայցապահանջներով պետությանը կամ համայնքին վերադարձման ենթակա գույքերի արժեքը որոշակիացված չէ՝ հաշվի առնելով դրանց՝ գնահատման գործընթացներում գտնվելու կամ դեռևս գնահատված չլինելու հանգամանքները:

2024 թվականի ընթացքում գումարի բռնագանձման հայցերով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով բավարարվել է 207 միլիոն 583 հազար դրամ հայցապահանջով 43 հայց (2023 թվականին՝ 318 միլիոն 759 հազար դրամ հայցապահանջով 22 հայց):

Շուրջ 38 միլիարդ 762 միլիոն 651 հազար դրամ հայցապահանջով 495 հայցի քննություն, այդ թվում՝ նախորդ տարիներից փոխանցված, ընթացքի մեջ է:

2024 թվականի ընթացքում Դատախազության ստորաբաժանումների կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության գործառույթի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ներկայացվել է հանցանքի մասին 63 հաղորդում, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ՝ պաշտոնատար անձանց կողմից լիազորությունների չարաշահման, պաշտոնեական անփութության, կեղծիքի և այլ հանցագործությունների հատկանիշներով (2023 թվականին՝ 110 հաղորդում):

2024 թվականի ընթացքում դատարանների կողմից բավարարվել են Դատախազության կողմից ներկայացված մի շարք հայցեր, որոնց՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին կվերադարձվեն հետևյալ գույքերը.

1. 2024 թվականի նոյեմբերի 29-ին Հակակոռուպցիոն դատարանը բավարարել է Գլխավոր դատախազության հայցը և անվավեր ճանաչել «Երասխ-1» զորամասն օտարելու մասին Պաշտպանության նախարարության և Է.Ա.-ի միջև 2009 թվականի հունվարի 13-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը: Որպես հետևանք՝ Դատարանն անվավեր է ճանաչել Է.Ա.-ի անվամբ կատարված իրավունքի գրանցումը: Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը 2023 թվականի ապրիլի 28-ին հայց էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Արարատի մարզի Արմաշ գյուղում գտնվող՝ շուրջ 60 միլիոն դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով «Երասխ-1» զորամասի շուրջ 2200 քմ մակերեսով զորանոցը և այլ շինությունները, ինչպես նաև 1.2 հա մակերեսով հատուկ նշանակության հողամասն օտարելու մասին Պաշտպանության նախարարության և Է.Ա.-ի միջև 2009 թվականի հունվարի 13-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ Է.Ա.-ի անվամբ կատարված իրավունքի գրանցումը:

2. 2024 թվականի նոյեմբերի 29-ին Հակակոռուպցիոն դատարանը բավարարել է Գլխավոր դատախազության հայցը և անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի ու Կ.Պ.-ի միջև 2005 թվականի հունիսի 20-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը: Որպես գործարքի անվավերության հետևանք՝ Դատարանը Կ.Պ.-ին պարտավորեցրել է Երևան համայնքին վերադարձնել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշին փողոցին հարող՝ 1.286 հա մակերեսով հողամասը: Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը 2023 թվականի փետրվարի 2-ին հայց էր ներկայացրել դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի և Կ.Պ.-ի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել գույքի նկատմամբ Կ.Պ.-ի սեփականության իրավունքի պետական գրանցումը: Գլխավոր դատախազության հայցի հիմքում դրված էր այն հանգամանքը, որ 2005 թվականի հունիսի 20-ին Երևանի քաղաքապետի և Կ.Պ.-ի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը հակասել է Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին՝ առկա չի եղել վերոնշյալ հողամասն օտարելու վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմնի որոշում: Դատարանն արձանագրել է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը հակասել է ՀՀ հողային

օրենսգրքի 56-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին, հետևաբար, առկա է վերը նշված պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով անվավեր ճանաչելու հիմքը:

3. 2024 թվականի դեկտեմբերի 23-ին Հակակոռուպցիոն դատարանը բավարարել է Գլխավոր դատախազության հայցը և անվավեր ճանաչել Լոռու մարզի Ձրաշեն համայնքի 2 փողոցի 1/1 հասցեի 0.07 հա մակերեսով հողամասի աճուրդը: Որպես գործարքի անվավերության հետևանք՝ Դատարանն անվավեր է ճանաչել Ձրաշեն համայնքի և Գ.Ե.-ի միջև կնքված առուվաճառքի պայմանագիրն ու պարտավորեցրել Գ.Ե.-ին Ձրաշեն համայնքին վերադարձնել վերոնշյալ հողամասը: Հայցը դատարան էր ներկայացվել 2024 թվականի օգոստոսի 26-ին: Հայցի հիմքում դրվել էր այն հանգամանքը, որ աճուրդն իրականացվել է Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ, քանի որ աճուրդում հաղթող է ճանաչվել տվյալ սակարկությանը մասնակցելու իրավունք չունեցող անձը. աճուրդի անցկացման պահին Գ.Ե.-ն հանդիսացել է Լոռու մարզի Ձրաշեն համայնքի ղեկավարի տեղակալ, ինչը նշանակում է, որ վերջինս «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով զրկված էր աճուրդին մասնակցելու իրավունքից: Դատարանն արձանագրել է, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վերաբերյալ աճուրդին նույն համայնքի ղեկավարի տեղակալի մասնակցությունը խաթարել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հիմքում ընկած՝ օրինականության և թափանցիկության կարևորագույն սկզբունքները: Օրենսդրի կողմից որոշակի անձանց շրջանակի մասնակցության սահմանափակումն ինքնանպատակ չէ, այն միտված է, ի թիվս այլնի, նվազեցնել հնարավոր կոռուպցիոն ռիսկերը, չարաշահումները, կանխել աճուրդի կազմակերպչի կողմից կողմնակալ վերաբերմունքի դրսևորման հնարավորությունը՝ հաշվի առնելով նաև, որ վերը նշված անձինք, մասնակցելով աճուրդին, կարող են ազդեցություն ունենալ աճուրդի անցկացման պայմանների, ընթացքի և արդյունքների վրա, ինչն ինքնաբերաբար հանգեցնելու է նաև շահերի բախման իրավիճակի:

4. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի նոյեմբերի 25-ի վճռով Գլխավոր դատախազության հայցը բավարարվելու արդյունքում Իջևան քաղաքի Անկախության փողոց թիվ 1/41 հասցեում գտնվող 0.15 հա մակերեսով հողամասի նկատմամբ Ա.Թ.-ի և Ս.Չ.-ի կառուցապատման իրավունքը դադարեցվել է, և հողամասը վերադարձվել է Իջևան համայնքին: Վճռի դեմ կողմի ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի որոշումը կհրապարակվի 2025 թվականի ապրիլի 8-ին:

5. Հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 2-ի վճռով ամբողջությամբ բավարարվել է Գլխավոր դատախազության հայցն ընդդեմ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարի և Ար.Ա.-ի՝ երկու հողամասերի վերաբերյալ (0,00581 հա և 0.003486 հա) 2012 թվականին և 2015 թվականին անցկացված աճուրդներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին: Դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում վիճարկվող աճուրդները կազմակերպել, իրականացրել և աճուրդավար է հանդիսացել տվյալ ժամանակահատվածում Գուգարք համայնքի համայնքապետը, իսկ աճուրդներին մասնակցել ու հաղթող է ճանաչվել նրա որդին՝ Ար.Ա.-ն, հետևաբար աճուրդներն իրականացվել են «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ: Դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո, վերոնշյալ 2 հողամասերի նկատմամբ կգրանցվի Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը:

6. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի օգոստոսի 30-ին բավարարել է Գլխավոր դատախազության հայցը և որպես անվավեր ճանաչված՝ 2007 թվականի լոտ 1 հողամասի աճուրդի, Կոտայքի նախկին մարզպետի և Ռ.Ս.-ի միջև կնքված հողամասի առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանք՝ անվավեր է ճանաչել 2009 թվականին Ռ.Ս.-ի և Խ.Ե.-ի միջև կնքված հողամասի առուվաճառքի պայմանագիրը և որպես անվավերության հետևանք Հայաստանի Հանրապետությանն է վերադարձրել Կոտայքի մարզի Աղավնաձոր համայնքի վարչական սահմանին հարող՝ 9 միլիոն 388 հազար 500 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 0.5 հա մակերեսով հողամասը: Վճռի դեմ երրորդ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը 2025 թվականի մարտի 12-ին մերժվել է և Դատարանի 2024 թվականի օգոստոսի 30-ի վճիռը թողնվել է անփոփոխ:

7. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 5-ի վճռով բավարարվել է Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության հայցադիմումը, որի հիման վրա գործարար Ս.Մ.-ից և «Գլոբուս» ՍՊ ընկերության տնօրեն Գ.Հ.-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության ենթակա է բռնագանձման 4.4 միլիարդ դրամ (11 միլիոն ԱՄՆ դոլար) (գումարի չափը որոշվել է դատաֆինանսատնտեսագիտական փորձաքննության եզրակացության հիման վրա): Վճիռը բողոքարկվել է և Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից բեկանվել՝ դատավարական նորմերի խախտման հիմքով: Հայցվոր Գլխավոր դատախազության կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք:

2024 թվականի ընթացքում դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ՀՀ վարչական դատարան են ներկայացվել Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող, ինչպես նաև հողային օրենսդրության պահանջների այլ խախտումներով օտարված հողամասերի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների իրավաչափության վիճարկման հայցադիմումներ:

Դատախազության ստորաբաժանումների կողմից համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում 2023 թվականին վարչական դատարան ներկայացված գործերի քննության արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը, 2024 թվականի մայիսի 10-ի նախադեպային որոշումներով, անդրադառնալով Դատախազության կողմից համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության իրականացմանը, արձանագրել է, որ իր լիազորություններն իրականացնելիս համայնքի ղեկավարի կողմից համայնքային շահերի խախտման փաստ հայտնաբերելու դեպքում դատախազը պարտավոր է հայց ներկայացնելու առաջարկությամբ դիմել համայնքի ավագանուն, քանի որ վերջինիս է վերապահված համայնքային շահերի պաշտպանությանն առնչվող՝ տվյալ հարցերով հայց ներկայացնելու առաջնային իրավասությունը:

Հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի՝ վերը նշված դիրքորոշումը՝ Դատախազության ստորաբաժանումների կողմից 2024 թվականին համայնքների ավագանիներին ներկայացվել են համայնքային շահերի պաշտպանության հայց հարուցելու վերաբերյալ շուրջ 130 առաջարկություններ և ավագանու կողմից սահմանված ժամկետում պատասխան չստանալու կամ հայց չներկայացնելու վերաբերյալ պատասխան ստանալու բոլոր դեպքերում Դատախազության ստորաբաժանումների կողմից վարչական դատարան են ներկայացվել համայնքային շահերի պաշտպանության հայցեր: **Ներկայումս Վարչական դատարանի վարույթում են շուրջ 90 գործեր, որոնցով դատախազության կողմից ներկայացվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ հայցեր:** Նշված հայցերով դատարանից պահանջվել է ճանաչել տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների առոչինչ լինելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանցով օտարվել են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողեր: Հայցերի հիմքում դրվել է այն հանգամանքը,

որ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը նորմատիվ իրավական ակտով հստակ սահմանված լինելու պայմաններում համայնքի ավագանին իրավասու չէր համապատասխան որոշմամբ այն ընդգրկել օտարման ենթակա հողամասերի ցանկում:

Վարչական դատարանի վարույթում առկա շուրջ 90 հայցերից ներկայացվում են հետևյալ գործերը՝

1. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից վարչական դատարան է ներկայացվել 5 հայց՝ ընդդեմ Արտաշատ համայնքի ղեկավարի, երրորդ անձ՝ Կադաստրի կոմիտեի, ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահի որդի Ա.Ա.-ի՝ պահուստային ֆոնդի շուրջ 40 հա մակերեսով հողերն օտարելու մասին Մխչյան համայնքի ղեկավարի որոշումների առոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:

Հայցերի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ համայնքի ղեկավարի որոշումներով հողամասերն օտարվել են պահուստային ֆոնդի հողերից՝ առանց դրանց նպատակային նշանակության փոփոխության, մինչդեռ ՀՀ հողային օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ պահուստային ֆոնդի հողերի օտարումը թույլատրվում է դրանց նպատակային նշանակությունը փոփոխելուց հետո:

2. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հայց է ներկայացվել վարչական դատարան ընդդեմ Արտաշատ համայնքի ղեկավարի, երրորդ անձ՝ Կադաստրի կոմիտեի, «Վինկո» ՓԲԸ-ի՝ Նարեկ համանքի ղեկավարի թիվ 87/2 որոշման առոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասին:

Հայցի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Նարեկ համայնքի ղեկավարի 2001 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման համաձայն՝ Արտաշատի «Վինկո» ՓԲ ընկերությանը օտարվել է 120 հա արոտավայր և վարելահող, մինչդեռ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք զբաղեցված են համայնքի վարչական սահմաններից դուրս՝ ընդհանուր օգտագործման արոտավայրերով: Հետևաբար, արոտավայրերը չեն կարող սեփականության իրավունքով փոխանցվել քաղաքացիներին և իրավաբանական անձանց, մինչդեռ քննարկվող դեպքում Նարեկ համայնքի ղեկավարի 2001 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ արոտավայրերը օտարվել են իրավաբանական անձի:

3. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հայցադիմում է ներկայացվել վարչական դատարան ընդդեմ Արտաշատ համայնքի ղեկավարի, երրորդ անձ՝ Կադաստրի կոմիտեի, ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահի կնոջ՝ Ջ.Ա.-ի՝ Մխչյան համայնքի ղեկավարի թիվ 25 որոշման առոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասին:
Հայցի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ Մխչյան համայնքի ղեկավարի 2003 թվականի փետրվարի 7-ի թիվ 25 որոշման համաձայն՝ պահուստային ֆոնդի հողերից արդյունաբերության, ընդերքի օգտագործման և այլ արտադրական նշանակության կառուցապատման նպատակով Ջ.Ա.-ին սեփականության իրավունքով հատկացվել է շուրջ 0.5 հա մակերեսով հողամաս, մինչդեռ ՀՀ հողային օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ պահուստային ֆոնդի հողերի օտարումը թույլատրվում է դրանց նպատակային նշանակությունը փոփոխելուց հետո: Մխչյան համայնքի ղեկավարի 2003 թվականի փետրվարի 7-ի թիվ 25 որոշման ուսումնասիրությունից, սակայն, հետևում է, որ 4092 քմ հողամասն օտարվել է պահուստային ֆոնդի հողերից՝ առանց դրա նպատակային նշանակության փոփոխության:

4. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հայցադիմում է ներկայացվել վարչական դատարան ընդդեմ Երևանի նախկին քաղաքապետի, երրորդ անձ՝ «Ա.Ա.Դ. ՀՈԹԵԼ» ՓԲԸ-ի՝ Երևան համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 18-ի թիվ 108-Ա որոշման առոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասին, որով Երևան քաղաքի Աբովյան փողոց 5/1 հասցեում գտնվող 473.16 քմ մակերեսով ընդհանուր օգտագործման չմասնավորեցվող հողամասն օտարվել է «Ա.Ա.Դ. ՀՈԹԵԼ» ՓԲԸ-ին:
Հայցի հիմքում դրվել է այն փաստական հանգամանքը, որ Երևանի նախկին քաղաքապետի 2018 թվականի հունվարի 18-ի թիվ 108-Ա որոշմամբ՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 5/1 հասցեին կից 473.16 քմ մակերեսով ընդհանուր օգտագործման, մասնավորեցման ոչ ենթակա հողամասն օտարվել է իրավաբանական անձի: Մինչդեռ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ մասի բովանդակային վերլուծությունից ակնհայտ է, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով արգելել է՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են:

5. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հայցադիմում է ներկայացվել վարչական դատարան ընդդեմ Երևանի նախկին քաղաքապետի, երրորդ անձ՝ «Էրեբունու շուկա» ՍՊԸ-ի՝ Երևան համայնքի ղեկավարի 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 1416-Ա որոշման առոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասին, որով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետով սահմանված հիմքով, Երևան քաղաքի Էրեբունի փողոցի 17/1 հասցեում գտնվող՝ 596.97 քմ մակերեսով հողամասն օտարվել է «Էրեբունու շուկա» ՍՊԸ-ին:

Հայցի հիմքում դրվել է այն փաստական հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի՝ 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 1416–Ա որոշմամբ «Էրեբունու շուկա» ՍՊԸ-ին օտարվել է Երևան քաղաքի Էրեբունի փողոցի 17/1 հասցեում գտնվող 596.97 քմ մակերեսով հողամասը, որը գտնվում է Էրեբունի վարչական շրջանում և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշման համաձայն՝ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը գտնվել է տարածագնահատման 6-րդ գոտում: Երևանի քաղաքապետարանում պահպանվող փաստաթղթերի ու քարտեզագրական նյութերի դիտարկման, ուսումնասիրության արդյունքում, սակայն, Դատախազությունը պարզել է, որ ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի հիմքով՝ վաճառված 596.97 քմ ընդհանուր մակերեսով՝ 3 հողակտորից բաղկացած հողամասի 559.1 քմ մակերեսով հողակտորն ամբողջությամբ հանդիսացել է առանձին գույքային միավոր և ենթակա էր օտարման միայն հրապարակային սակարկության՝ աճուրդի եղանակով:

2024 թվականի ընթացքում ուսումնասիրություններ են իրականացվել ՀԽՍՀ հասարակական կազմակերպություններին հանձնված գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման իրավաչափության վերաբերյալ:

Պետական շահերի պաշտպանության վարչության կողմից իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀԽՍՀ հասարակական կազմակերպություններին հանձնված գույքերի նկատմամբ հետագայում իրավունքների պետական գրանցումներն իրականացվել են առանց գույքի նկատմամբ իրավունքը հավաստող անհրաժեշտ փաստական և իրավական հիմքերի, ինչպես նաև սեփականության իրավունքի ծագման պայմանը կատարված լինելու վերաբերյալ ապացույցների (մասնավորապես՝ հասարակական կազմակերպության սեփական միջոցներից վճարում կատարված լինելու փաստը հավաստող) բացակայության պայմաններում:

Ուսումնասիրությունների արդյունքներով Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազների կողմից ներկայացված՝ հանցանքի մասին հաղորդումների հիման վրա նախաձեռնվել են 11 քրեական վարույթներ:

Միաժամանակ, վերը նշված գրանցումները վերացնելու հայցապահանջներով Վարչական դատարան են ներկայացվել 31 հայցադիմումներ, մասնավորապես՝

ա) «Հայաստան» մարզական միության գույքերի վերաբերյալ՝ 5 հայցադիմում.

բ) «Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ-ի գույքերի վերաբերյալ՝ 1 հայցադիմում,

գ) «Հայաստանի գրողների միություն ՀԿ»-ի գույքերի վերաբերյալ՝ 3 հայցադիմում.

դ) «Հայաստանի նկարիչների միություն» ՀԿ-ի գույքերի վերաբերյալ՝ 4 հայցադիմում.

ե) «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» ՀԿ-ի գույքերի վերաբերյալ՝ 18 հայցադիմում (այդ թվում՝ Ղափանցյան 59, Ռուբինյանց 27/4, Արշակունյաց 5 և այլ հասցեներում գտնվող գույքերի վերաբերյալ):

Ստորև ներկայացվում են պետական շահերի պաշտպանության հարցադրումներով կատարված ուսումնասիրությունների արդյունքների, ներկայացված հաղորդումների և հայցադիմումների վերաբերյալ այլ տեղեկություններ: Այսպես՝

1. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Երևանի քաղաքապետի 2004 թվականի մայիսի 21-ի թիվ 890-Ա որոշմամբ Երևան քաղաքի Դավթաշենի տարածքում՝ Ոստիկանության զորքերի թիվ 1032 զորամասի հարևանությամբ գտնվող 6 հա մակերեսով հողամասն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրվել է «Դինամո-2000» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությանը՝ մարզադաշտի և սպորտային բազայի կառուցման նպատակով:

Երևանի քաղաքապետի և «Դինամո-2000» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպության միջև 2004 թվականի օգոստոսի 6-ին կնքվել է հողի անհատույց (մշտական) օգտագործման մասին թիվ 112/1-ԱԳ պայմանագիրը, ինչի արդյունքում՝ 2004 թվականի օգոստոսի 20-ին հիշյալ հասարակական կազմակերպության անվամբ գրանցվել է օգտագործման իրավունք:

Նշված գույքի նկատմամբ 2009 թվականի սեպտեմբերի 12-ին գրանցվել է «Դինամո-2000» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպության

սեփականության իրավունքը՝ հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետը՝ պայմանով, որ գույքի հետագա օտարման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիր ներկայացնելու դեպքում:

Մինչդեռ ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Դինամո-2000» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությանը թիվ 299 շինարարության թույլտվությունը տրվել է միայն 2006 թվականի մայիսի 3-ին, և 2005 թվականի սեպտեմբերի 26-ի դրությամբ ք. Երևան, Դավիթաշեն 1 թաղ. հ 62/75 հողամասի վրա սահմանված կարգով կառուցված շենքեր և շինություններ, այդ թվում՝ կիսակառույց շենքեր, շինություններ առկա չեն եղել, հետևաբար՝ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի կարգավորումների հիմքով նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա չէր գրանցման:

Նախնական տվյալների համաձայն՝ առանց օրինական հիմքերի «Դինամո-2000» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցված՝ ք. Երևան, Դավիթաշեն 1 թաղ. հ 62/75 հասցեների 6 հա հողամասի շուկայական արժեքները 2011 թվականի դրությամբ կազմել են շուրջ 2.4 միլիարդ դրամ, իսկ 2024 թվականի դրությամբ՝ 4.8 միլիարդ դրամ:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հանցանքի մասին հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Միաժամանակ, Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հայցադիմում է ներկայացվել Վարչական դատարան ընդդեմ Կադաստրի կոմիտեի՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից «Դինամո-2000» ֆուտբոլային ակումբ հասարակական կազմակերպության անվամբ 2009 թվականի սեպտեմբերի 12-ին կատարված անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցումը ոչ իրավաչափ ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին:

2. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ հակակոռուպցիոն դատարան ընդդեմ ՀՀ կառավարության և «Միկմետալ» ՓԲ ընկերության՝ Երևանի քաղաքապետի և «Միկմետալ» ՓԲ ընկերության միջև 2005 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որն ընդունվել է վարույթ: ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերի համաձայն՝

2005 թվականի դեկտեմբերի 23-ին Երևանի քաղաքապետի և «Միկմետալ» ՓԲ ընկերության միջև կնքված «հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագրով Երևան քաղաքի Ազատության 27 հասցեում գտնվող՝ 19.113 հա մակերեսով հողամասը Երևանի քաղաքապետարանի կողմից ուղղակի վաճառքով օտարվել է «Միկմետալ» ՓԲԸ-ին՝ 164.754.060 ՀՀ դրամով: Հիշյալ պայմանագրով խախտվել է ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 879-Ն որոշման թիվ 1 հավելվածի 3.24-րդ կետը, որի համաձայն՝ Ազատության պողոտայի հատվածը, սկսած Դավիթ Անհաղթի փողոցի հետ հատումից մինչև Թբիլիսյան խճուղի, ներառված է 3-րդ գոտում և նույն որոշման հավելված 1-ով՝ 3-րդ տարածագնահատման գոտում գտնվող հողամասի ուղղակի վաճառքի՝ 2005 թվականի կադաստրային գինը կազմում է 1 քմ-ի համար 1465 դրամ, իսկ 4-րդ տարածագնահատման գոտու վաճառքի գինը 862 դրամ գումար: Արդյունքում՝ Երևան քաղաքի Ազատության 27 հասցեում գտնվող 19.113 հա մակերեսով հողամասը 280.005.450 ՀՀ դրամ գումարով վաճառելու փոխարեն վաճառվել է՝ 164.754.060 ՀՀ դրամով:

«Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագրի իրավական հիմքերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այն չի համապատասխանում 2005 թվականի հոկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 29-ի N 1746-Ն որոշման և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 879-Ն որոշման պահանջներին: Նշված փաստերից ելնելով՝ Գլխավոր դատախազությունը հայցապահանջով խնդրել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի և «Միկմետալ» ՓԲ ընկերության միջև 2005 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիրը և հատուցել ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» N 1746-Ն որոշմանը համապատասխան հաշվարկված հողամասի կադաստրային արժեքը 2005 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ՝ 1.330.264.800 ՀՀ դրամ՝ հաշվանցելով «Միկմետալ» ՓԲ ընկերության կողմից 2005 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ վճարված 164.754.060 ՀՀ դրամը:

3. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ուսումնասիրություններ են իրականացվել «Ժորհաս» ՍՊ ընկերության անվամբ Երևան քաղաքի Ազատության պողոտայի և Բաբայան փողոցի հատման մասում գտնվող 0.02 հա հողամասի նկատմամբ կատարված իրավունքի պետական գրանցման իրավաչափության վերաբերյալ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետի 2000 թվականի փետրվարի 28-ի թիվ 177 որոշմամբ «Ժորհաս» ՍՊ ընկերությանը Երևան քաղաքի Ազատության պողոտայի և Բաբայան փողոցների հատման մասում տրվել է 200 քմ հողամաս, սակայն հողամասի վարձակալության պայմանագիրը կնքվել է 2006 թվականի մարտի 29-ին, իսկ դրանից ծագող իրավունքները գրանցվել են 2006 թվականի ապրիլի 7-ին:

2006 թվականի ապրիլի 25-ին հիշյալ հողամասի նկատմամբ գրանցվել է ընկերության սեփականության իրավունքը՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածը, որի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ նշված հոդվածի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության իրավունք կարող էր տրամադրվել, եթե վերջիններս հողամասի նկատմամբ օգտագործման կամ վարձակալության իրավունք են ձեռք բերել և այդ իրավունքները գրանցել մինչև 2005 թվականի նոյեմբերի 26-ը: Ընկերությունը, սակայն, 200 քմ մակերեսով հողամասի նկատմամբ վարձակալության իրավունք է ձեռք բերել և իրավունքը գրանցել 2005 թվականի նոյեմբերի 26-ից հետո՝ 2006 թվականի մարտի 29-ին: Հետևաբար, առկա չի եղել «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված հիմքը և դրա հիման վրա հողամասի նկատմամբ ընկերության սեփականության իրավունքը ենթակա չէր գրանցման:

Պետական շահերի պաշտպանության վարչության կողմից հայցադիմում է ներկայացվել վարչական դատարան ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ «Ժորհաս» ՍՊ ընկերության անվամբ Երևան քաղաքի Ազատության պողոտայի և Բաբայան փողոցի հատման մասում գտնվող՝ 0.02 հա հողամասի նկատմամբ կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որն ընդունվել է վարույթ:

4. Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը հայց է ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան ընդդեմ Ս.Ա.-ի՝ պետությանը պատճառված 278 միլիոն 160 հազար դրամ վնասը հատուցելու պահանջի մասին, որը ձևավորվել է «Արմենիան Մայնինգ Քոնթրաքթոր» ՍՊԸ-ի՝ «SAMTEL LP» ոչ ռեզիդենտ կազմակերպությանը վճարված գումարների չափով առկա ծախսերի հնարավոր ուռճացման և համապատասխան տարվա հարկվող շահույթն անհիմն նվազեցնելու կամ հարկային վնասն ավելացնելու պայմաններում իրականացված լրացուցիչ հարկային պարտավորությունների հաշվարկի հիման վրա:

5. Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը հայց է ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան ընդդեմ «Մասիս» ՁՕ ընկերության նախկին տնօրեն Ա.Դ.-ի՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ վատնման եղանակով Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 611 միլիոն 72 հազար դրամ արժողությամբ գույքը հափշտակելու հետևանքով պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 2024 թվականին Հակակոռուպցիոն դատարան ներկայացված՝ գործարքի (աճուրդի) անվավերության պահանջներով 20 հայցադիմումներ վերաբերել են ընդհանուր շուրջ 517 հա (5.170.000 քմ) մակերեսով հողամասերի օտարումների իրավաչափության վիճարկմանը, որոնցից ներկայացվում են Հակակոռուպցիոն դատարանի վարույթում գտնվող հետևյալ գործերը՝

1. Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքի 7090 քմ մակերեսով հողամասի վերաբերյալ Երևանի քաղաքապետի և Ա.Ս.-ի միջև կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջը (Հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի մարտի 7-ի վճռով բավարարվել է):

2. Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքի 16.870 քմ մակերեսով հողամասի վերաբերյալ Երևանի քաղաքապետի և Լ.Դ.-ի միջև կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջը:

3. Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքի 17.730 քմ մակերեսով հողամասի վերաբերյալ Երևանի քաղաքապետի և Կ.Ի.-ի միջև կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջը:

4. Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքի 2.080 քմ մակերեսով հողամասի վերաբերյալ Երևանի քաղաքապետի և Ա.Ն.-ի միջև կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջը (Հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի մարտի 6-ի վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը):

5. Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքի 6.640 քմ մակերեսով հողամասի վերաբերյալ Երևանի քաղաքապետի և Ա.Մ.-ի միջև կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջը (Հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի մարտի 6-ի վճռով բավարարվել է):

6. Երևան քաղաքի Գ. Հովսեփյան փողոցի՝ հեռուստաաշտարակին հարող տարածքի 17.200 քմ մակերեսով հողամասի վերաբերյալ Երևանի քաղաքապետի և Ա.Հ.-ի միջև կնքված պայմանագիրն անվավեր ճանաչելու հայցապահանջը:

7. Արարատի մարզի Վեդի համայնքում 2017-2021 թվականների ընթացքում ընդհանուր՝ 503 հա մակերեսով 19 հողակտորի վերաբերյալ իրականացված աճուրդներն անվավեր ճանաչելու և օտարված հողակտորները համայնքին վերադարձնելու վերաբերյալ հայցապահանջը:

Կոտայքի մարզի Հրազդան համայնքի իրավասու պաշտոնատար անձանց կողմից Հրազդան համայնքում օրենքի պահանջների խախտմամբ կազմակերպված աճուրդներով օտարված որոշ հողատարածքների աճուրդներն անվավեր ճանաչելու պահանջով հայցեր չեն ներկայացվել դատարան՝ ձախողելով հողատարածքները համայնքին վերադարձնելու գործընթացը: Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության զեկուցագրի հիման վրա՝ նշված հանգամանքները պարզելու նպատակով նախաձեռնվել է քրեական վարույթ և, միաժամանակ, Գլխավոր դատախազության կողմից Հակակոռուպցիոն դատարան է ներկայացվել ընդհանուր 22 հա մակերեսով հողամասերի աճուրդներն անվավեր ճանաչելու վերաբերյալ 4 հայց:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 2024 թվականին Հակակոռուպցիոն դատարան ներկայացված 11 հայցադիմումներ վերաբերել են Պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնված և ՀՀ հողային օրենսգրքի պահանջների խախտումներով օտարված՝ ընդհանուր 6.359 հա (63.590 քմ) մակերեսով հողամասերին, մասնավորապես՝

1. Գլխավոր դատախազությունը 2024 թվականի սեպտեմբերի 30-ին հայց է ներկայացրել ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, Հ.Մ.-ի, երրորդ անձ՝ ՀՀ կադաստրի կոմիտեի, Գ.Ս.-ի՝ 2005 թվականի հոկտեմբերի 20-ին Պաշտպանության նախարարության և Հ.Մ.-ի միջև կնքված՝ ք.Երևան, Ծ. Իսակով պողոտային հարող տարածքում գտնվող՝ 237 միլիոն 270 հազար դրամ շուկայական արժեքով 0.9 հա մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիրը և ք. Երևան, Ծ. Իսակով պողոտային հարող տարածքում գտնվող 574 միլիոն 260 հազար դրամ շուկայական արժեքով 2.3 հա մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին (ընդհանուր՝ 32.000 քմ.):

2. Գլխավոր դատախազությունը 2024 թվականի սեպտեմբերի 30-ին հայց է ներկայացրել ընդդեմ Երևան համայնքի, Գ.Ս.-ի, երրորդ անձ՝ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ 2010 թվականի հուլիսի 30-ին Երևանի քաղաքապետի և Գ.Ս.-ի միջև կնքված ք. Երևան, Իսակով պողոտայի 29/4 և 23/3 հասցեներում գտնվող 33 միլիոն 268 հազար դրամ արժեքով 7353.7 քմ մակերեսով հողամասի և 2010 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված 10 միլիոն 410 հազար դրամ արժեքով 2301.20 քմ մակերեսով հողամասերի առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին (ընդհանուր՝ 9654.9 քմ.:

3. Գլխավոր դատախազությունը 2024 թվականի սեպտեմբերի 30-ին հայց է ներկայացրել ընդդեմ Պաշտպանության նախարարության, Գ.Ս.-ի, երրորդ անձ՝ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ 2009 թվականի մարտի 26-ին Երևանի քաղաքապետի և Գ.Ս.-ի միջև կնքված ք. Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա 29/4 հասցեի 160 միլիոն 380 հազար դրամ արժեքով 0.5346 հա

մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին (ընդհանուր՝ 5.346 քմ.):

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը ուսումնասիրություններ է իրականացրել նաև գետափնյա հատվածներում հողամասերի տրամադրման և շինությունների կառուցման իրավաչափության և օրենսդրության պահանջներին համապատասխանության վերաբերյալ: Մասնավորապես՝ 2024 թվականի մայիսի 26-ին Դեբետ գետի վարարումների հետևանքով ափամերձ տարածքներում տեղի ունեցած ավերածությունների, գետափնյա հատվածներում հողամասերի տրամադրման և շինությունների կառուցման իրավաչափության և օրենսդրության պահանջներին համապատասխանության վերաբերյալ իրականացվող ուսումնասիրությունների ընթացքում առաջացող խնդիրների լուծման և միասնական մոտեցման անհրաժեշտությամբ պայմանավորված պետական շահերի պաշտպանության վարչության կողմից վեր են հանվել ու վերլուծության ենթարկվել վերաբերելի օրենսդրական կարգավորումները և համապատասխան շրջաբերական-ուղեցույց է ուղարկվել Երևան քաղաքի, վարչական շրջանների և մարզերի դատախազներին՝ առաջարկելով նմանատիպ ուսումնասիրությունների ընթացքում առաջնորդվել նշված կարգավորումներով:

Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչ օրս հաստատված չէ Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանը և հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան առկա չէ կառավարության սահմանած պետական մելիորատիվ համակարգերի կամ ջրային ֆոնդի կազմի մեջ մտնող ջրային օբյեկտների հողերի ցանկը, որոնք կարևոր նշանակություն ունեն ուսումնասիրությունների արդյունքում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքը պահպանելով կոնկրետ արարքներին քրեաիրավական գնահատական տալու պրոցեսում՝ գրություն է ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին՝ խնդրելով հանձնարարել լիազոր մարմնին հիշյալ տարածքի կառավարման պլանը սեղմ ժամկետներում Կառավարության հաստատմանը ներկայացնելու և ջրային ֆոնդի կազմի մեջ մտնող ջրային օբյեկտների հողերի ցանկը սահմանելու ուղղությամբ:

1

ԱՊՈՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում 2024 թվականի ընթացքում իրավասու դատախազների կողմից զեկուցագրեր են ստացվել 121 քրեական վարույթով 201 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 46 քրեական վարույթով 79 անձի վերաբերյալ) և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 16 նյութ՝ 16 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելիության վերաբերյալ (2023 թվականին՝ 27 զեկուցագիր 28 անձի վերաբերյալ):

Նշված նյութերով ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 163 որոշում (2023 թվականին՝ 82), իսկ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին՝ 45 որոշում (2023 թվականին՝ 26 որոշում):

Ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին 45 որոշումներից՝

- 35-ը կայացվել են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ 50 միլիոն դրամը գերազանցող ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին տվյալների բացակայության հիմքով,
- 8-ը՝ նախաձեռնված քրեական վարույթներով անձանց նկատմամբ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով չնախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման համար քրեական հետապնդում հարուցված լինելու հիմքով,
- 2-ը՝ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի իմաստով պաշտոնատար անձ չհանդիսանալու հիմքով:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով սկսվել է 7 ուսումնասիրություն[14]:

Վարչությունում իրականացվող ուսումնասիրությունների շրջանակներում, ի թիվս այլնի, կազմվել է 1700 հարցում (2023 թվականին՝ 1400)՝ ուղղված Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությանը, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը, Ներքին գործերի նախարարությանը, Կադաստրի կոմիտեին, Պետական եկամուտների կոմիտեին, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին և այլ մարմիններին:

Ուսումնասիրությամբ բացահայտված՝ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական (ներդրումային) արժեքները պարզելու նպատակով՝ 45 վարույթի շրջանակներում կայացվել և Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ է ուղարկվել ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին 61 որոշում (2023 թվականին՝ 82 վարույթի շրջանակներում՝ 116 որոշում):

14. Նշված 7 ուսումնասիրությունները սկսվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա, որի համաձայն՝ իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն, եթե ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

Նույն ժամանակահատվածում 56 վարույթի շրջանակներում ստացվել է դատաապրանքագիտական փորձաքննության վերաբերյալ 79 եզրակացություն (2023 թվականին՝ 124):

Նշված ժամանակահատվածում 59 ուսումնասիրության շրջանակում Հակակոռուպցիոն դատարան (սույն հատվածում այսուհետ նաև՝ Դատարան) է ներկայացվել հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու մասին 79 դիմում (2023 թվականին՝ 81): Հաշվետու ժամանակահատվածում Դատարանը կայացրել է հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ 79 որոշում, որոնցից 5-ով Դատարանն ամբողջությամբ կամ մասնակի մերժել է հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դիմումները:

Դատարանի կողմից հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ ամբողջությամբ կամ մասնակի բավարարված դիմումներից 5-ով ներկայացվել է վերաքննիչ բողոք, որոնցից 3-ը՝ բավարարվել, իսկ 2-ը մերժվել են Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից:[15]

Դատարանների կողմից բավարարված որոշումներն ուղարկվել են հարկադիր կատարման՝ համապատասխան անձանց գույքերի վրա դրվել է արգելանք:

Հաշվետու ժամանակահատվածում 47 ուսումնասիրության շրջանակում կազմվել է ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփման վերաբերյալ նույնքան եզրակացություն (2023 թվականին՝ 94), որից 3-ով (2023 թվականին՝ 17) որոշում է կայացվել ավարտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով ուսումնասիրությունը, իսկ 44-ով՝ Հակակոռուպցիոն դատարան հարուցվել են հայցեր:

2024 թվականի ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ Դատարան է ներկայացվել 44 հայցադիմում (2023 թվականին՝ 73), որոնք ընդունվել են վարույթ: Ներկայացված հայցադիմումներից 43-ը ներկայումս քննվում են Դատարանում, իսկ ներկայացված մեկ հայցադիմումից իրավասու դատախազը հրաժարվել է: Դատարանում քննվող 43 հայցադիմումներով բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է 96 միլիարդ 961 միլիոն 344 հազար դրամ: Բռնագանձման է ենթակա նաև 346 անշարժ և 71 շարժական գույք, ինչպես նաև 85 իրավաբանական անձում մասնակցություն: 2024 թվականին Դատարան ներկայացված հայցադիմումների ընդհանուր հայցագինը[16] կազմում է 100 միլիարդ 354 միլիոն 660 հազար դրամ:

Ի թիվս այլ հայցերի՝

1. 2024 թվականի մայիսի 6-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ

15. Նշված 7 ուսումնասիրությունները սկսվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա, որի համաձայն՝ իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն, եթե ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:
16. Ընդհանուր հայցագնի մեջ ներառված չեն իրավաբանական անձանցում մասնակցության, ինչպես նաև մի շարք գույքերի շուկայական արժեքները:

հայցադիմում, որով Վարչությունը պահանջ է ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր, գյուղատնտեսության նախկին նախարար, Արարատի նախկին մարզպետ, Բնապահպանության նախկին նախարար **Արամայիս Թեմուրի Գրիգորյանից** և նրան փոխկապակցված 3 անձանցից (ընտանիքի անդամներ՝ կին, որդի, դուստր) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- Արարատի մարզում գտնվող 15, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գտնվող 4 անշարժ գույք,
- 2 ավտոմեքենա,
- Արարատի մարզում գտնվող 25 և Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գտնվող 2 անշարժ գույքի շուկայական արժեք,
- 3 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- ավելի քան 60 միլիոն դրամին համարժեք պարտատոմսեր,
- 311 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

2. 2024 թվականի մայիսի 10-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով Վարչությունը պահանջ է ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախկին նախարար **Վարդան Սուրենի Այվազյանից** և նրան փոխկապակցված 6 անձանցից (ընտանիքի անդամներ՝ կին, զավակներ, եղբայր) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 3 անշարժ գույք,
- 2 տրանսպորտային միջոց, ինչպես նաև ևս 2 տրանսպորտայի միջոցի շուկայական արժեք,
- 9 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- 150 միլիոն դրամին համարժեք փոխառությունների պահանջի իրավունք,
- 21 միլիարդ դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

3. 2024 թվականի օգոստոսի 16-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով Վարչությունը պահանջ է ներկայացրել Գյումրու նախկին քաղաքապետ **Վարդան Կոլյայի Ղուկասյանից** և նրան փոխկապակցված 3 անձանցից (ընտանիքի անդամներ՝ կին, որդի, դուստր) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- Գյումրի քաղաքում գտնվող 17 անշարժ գույք, այդ թվում՝ բնակարաններ և տարածքներ,

- 1 տրանսպորտային միջոց,
- 2 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- 224 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

4. 2024 թվականի սեպտեմբերի 18-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով Վարչությունը պահանջ է ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր **Ալեքսանդր Ազատի Սարգսյանից** և նրան փոխկապակցված 4 անձանցից (ընտանիքի անդամներ՝ կին, որդիներ, որդու կին) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- Կոտայքի մարզում գտնվող 8, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գտնվող 6 անշարժ գույք,
- 5 ավտոմեքենա,
- 3 ավտոմեքենայի շուկայական արժեք,
- ավելի քան 357 միլիոն դրամ՝ որպես Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող անշարժ ու շարժական գույքերի ձեռքբերման արժեք,
- 5 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- 950 միլիոն դրամ ավանդ,
- 3 միլիարդ 784 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

5. 2024 թվականի նոյեմբերի 22-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով Վարչությունը պահանջ է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարի նախկին տեղակալ, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախկին նախարար, ՀՀ հաշվեքննիչ պալատի նախկին նախագահ **Լևոն Սուրենի Յոլյանից** և նրան փոխկապակցված 5 անձանցից (ընտանիքի անդամներ՝ կին, դուստրեր, դստեր ամուսին, վարորդ) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- Ծաղկաձոր քաղաքում՝ 1, Արտավազ գյուղում՝ 3, Արտաշատ քաղաքում՝ 1, Երևան քաղաքում՝ 1 անշարժ գույք,
- 1 տրանսպորտային միջոց,
- Երևան քաղաքում գտնվող երկու գույքի շուկայական արժեքը, որոնց հանրագումարը կազմում է ավելի քան 53 միլիոն դրամ,
- 3 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- ավելի քան 69 միլիոն դրամին համարժեք փոխառության պահանջի իրավունք և շուրջ 32 միլիոն դրամին համարժեք ավանդ,
- 1 միլիարդ 569 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

6. 2024 թվականի դեկտեմբերի 16-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով Վարչությունը պահանջ է ներկայացրել ՀՀ վարչապետի նախկին խորհրդական, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության նախկին վարչության պետ **Սամվել Կարոյի Սանամյանից** և նրան փոխկապակցված 6 անձանցից (ընտանիքի անդամներ՝ կին, զավակներ, նրանց ամուսիններ) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 19 անշարժ գույք՝ առավելապես Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում,
- 4 տրանսպորտային միջոց,
- 10 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- ավելի քան 10 հազար ԱՄՆ դոլար ավանդ,
- շուրջ 96 միլիոն դրամին համարժեք փոխառությունների պահանջի իրավունք,
- ավելի քան 1 միլիարդ 300 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

7. 2024 թվականի դեկտեմբերի 24-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումը, որով Վարչությունը պահանջում է ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության նախկին պետ **Հովհաննես Միշայի Սահակյանից** և նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել հետևյալը՝

- 3 անշարժ գույք՝ Երևանում և Դիլիջանում (բնակարաններ, արտադրական տարածքներ),
- 3 չմարված ավանդի գումար՝ շուրջ 34 հազար 500 ԱՄՆ դոլարի չափով,
- 3 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- 2 փոխառության պահանջի իրավունքի ապօրինի մաս՝ 98 միլիոն 507 հազար դրամ,
- 494.5 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամուտների և միջոցների մնացորդ,
- 156 միլիոն 514 հազար դրամ, որպես ապօրինի եկամտի մնացորդի և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

8. 2024 թվականի դեկտեմբերի 27-ին Դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որով Վարչությունը պահանջ է ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր **Վահրամ Վաղինակի Բաղդասարյանից** և նրան փոխկապակցված 3 անձանցից (ընտանիքի անդամներ՝ կին, երկու որդիներ) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 13 անշարժ գույք (10 միավոր գույք Լոռու մարզում, 1 միավոր Տավուշի մարզում, 2 միավոր Երևան քաղաքում),
- 3 տրանսպորտային միջոց,
- 2 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- 3 պարտատոմս,
- ավելի քան 246 հազար ԱՄՆ դոլար ավանդ,
- շուրջ 46 միլիոն դրամին համարժեք փոխառությունների պահանջի իրավունք երկու ընկերություններից,
- շուրջ 460 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի և օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

Ընդհանուր առմամբ, Վարչության ձևավորումից առ այսօր, դատարաններում քննվող 136 հայցադիմումներով պահանջվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- **270 շարժական գույք,**
- **1381 անշարժ գույք,**
- **359 իրավաբանական անձանցում մասնակցություն:**

Դրամական պահանջը կազմում է ավելի քան 527 միլիարդ դրամ, իսկ ընդհանուր հայցագինը՝ շուրջ 600 միլիարդ դրամ:

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորումների շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրավասու վարչության դատախազները հրաժարվել են 4 հայցադիմումից, որոնցից 3-ը դատարան էր ներկայացվել 2023 թվականին, իսկ մեկը՝ 2024 թվականին: Հայցադիմումներից հրաժարումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ պատասխանողները Դատարան են ներկայացրել իրենց օրինական եկամուտների վերաբերյալ՝ Վարչությանը մինչ այդ անհայտ տվյալներ, և ներկայացված նոր տվյալների ստուգմամբ՝ Վարչությունը հանգել է եզրակացության, որ առկա չեն անձանց պատկանող և Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ապօրինի ծագում ունեցող գույքեր:

2024 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթի շրջանակում կնքել է հաշտության 4 համաձայնություն, որոնցից մեկով Հայաստանի Հանրապետությանն է

փոխանցվել Երևան քաղաքում գտնվող 1 անշարժ գույք (շուկայական արժեքը կազմում է 2 միլիարդ 18 միլիոն 400 հազար դրամ), իսկ մյուս 3 հաշտության համաձայնություններով՝ փոխանցման է ենթակա ընդհանուր 858 միլիոն 972 հազար դրամ, որից 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխանցվել է 515 միլիոն դրամը: Կնքված հաշտության համաձայնությունների ընդհանուր հանրագումարային արժեքը կազմում է շուրջ 2 միլիարդ 877 միլիոն 372 հազար դրամ (2023 թվականին հաշտության համաձայնությունների կնքման արդյունքում Հայաստանի Հանրապետությանն է փոխանցվել 6 անշարժ, 1 շարժական գույք, որոնց շուկայական արժեքը կազմում է 2 միլիարդ 102 միլիոն դրամ, իսկ փոխանցված դրամական միջոցները՝ 80 միլիոն դրամ):

2024 թվականի ընթացքում Դատարանի կողմից կայացվել են հայցադիմումն ամբողջությամբ բավարարելու մասին 1 և մասնակի բավարարելու մասին 4 վճիռներ:

Հայցադիմումները բավարարելու վերաբերյալ կայացված վճիռներից 4-ը դեռևս չեն մտել օրինական ուժի մեջ: **Օրինական ուժի մեջ է մտել հայցադիմումն ամբողջությամբ բավարարելու վերաբերյալ 1 վճիռ:**

Օրինական ուժի մեջ մտած՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առաջին վճռով՝ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքն է գրանցվել Երևան քաղաքի Վարդանանց փողոցում գտնվող 1 բնակարանի և Կոտայքի մարզի Առինջ համայնքում գտնվող 1 բնակելի տան նկատմամբ: Բռնագանձման ենթակա՝ 50 հազար 720 եվրոյին համարժեք դրամն ու 878 հազար դրամն արդեն փոխանցված են Վերականգնված միջոցների միասնական հաշվին, իսկ մնացած՝ 55.8 միլիոն դրամի բռնագանձման նպատակով Հակակոռուպցիոն դատարան է ներկայացվել կատարողական թերթ ստանալու դիմում, որը ստացվելուց հետո կուղարկվի հարկադիր կատարման:

2024 թվականին Վարչության դատախազների կողմից ուղարկվել է 17 միջազգային հարցում, որոնցից՝ մեկական հարցում ուղարկվել է ԱՄԷ, Իսպանիա, Վրաստան, ԱՄՆ, երեքական հարցում՝ Հունաստան, Բուլղարիա, 7 հարցում՝ ՌԴ: Ուղարկված հարցումներից 5-ով պետությունները Վարչությանն են փոխանցել հայցվող տեղեկությունը, 4-ով Վարչությունը ստացել է մերժում, 8 հարցումներով դեռևս պատասխան չի ստացվել:

CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-agency Network) միջազգային ոչ պաշտոնական ցանցի միջոցով Վարչության կողմից մի շարք գործընկեր պետությունների իրավասու մարմիններին ուղարկվել է 6 հարցում (մեկական հարցում՝ ԱՄՆ, Հունաստան, Ֆրանսիա, Բուլղարիա, 2 հարցում՝ Իսպանիա): Վարչության կողմից ուղարկված հարցումներից 4-ով ստացվել են պատասխաններ, իսկ երկու հարցումներով դեռևս պատասխան չի ստացվել:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-agency Network) միջազգային ոչ պաշտոնական ցանցի միջոցով ստացվել է 5 հարցում (3 հարցում՝ Ֆրանսիայից, մեկական հարցում՝ Լատվիայից և Լեհաստանից): Հարցումների շրջանակներում Վարչության կողմից կատարվել են անհրաժեշտ գործողությունները և տրամադրվել են հարցմամբ հայցվող տեղեկատվությունը:

8

ՊԱՏԻԺՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ընթացքում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 323 խախտում (2023 թվականին՝ 151): Պատկան մարմիններին ուղարկվել է 53 հաղորդում (2023 թվականին՝ 34): Ներկայացվել է 40 միջնորդագիր (2023 թվականին՝ 37), որոնց հիման վրա վերանայվել է 31 ակտ (2023 թվականին՝ 23): Դատախազների կողմից կասեցվել է 3 ակտ (2023 թվականին՝ 10), իրականացվել է 9 ծառայողական քննություն (2023 թվականին՝ ընթացքում՝ 13):



2024 թվականին՝ քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 1850 անձ (2023 թվականին՝ 1632), որից 331-ը՝ պատժի լրիվ կրումով (2023 թվականին՝ 287), 138-ը՝ պայմանական վաղաժամկետ (2023 թվականին՝ 110), 1-ը՝ ներման կարգով (2023 թվականին՝ 3), 2-ը՝ համաներումով (2023 թվականին՝ 5), 1110-ը՝ խափանման միջոց կալանքը փոփոխելով (2023 թվականին՝ 904), 65-ը՝ դատարանի դահլիճից (2023 թվականին՝ 62 անձ), 12-ը՝ հիվանդության պատճառով (2023 թվականին՝ 7), 188-ը՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ (2023 թվականին՝ 249), 3-ը՝ այլ հիմքերով (2023 թվականին՝ 5):

Հաշվետու ժամանակաշրջանում տարբեր պատճառներով մահացել է ՔԿՀ-ներում պահվող 12 անձ (2023 թվականին՝ 16), որից 10-ը՝ քաղաքացիական բժշկական հաստատությունում, 2-ը՝ քրեակատարողական հիմնարկում (ՀՀ ԱՆ «Արթիկ» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում արձանագրվել են 1-ական անձանց կենսաբանական մահ):

Վերջին 10 տարվա ընթացքում ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց մահվան դինամիկան	
2015	28 պահվող անձ
2016	29 պահվող անձ
2017	17 պահվող անձ
2018	18 պահվող անձ
2019	21 պահվող անձ
2020	5 պահվող անձ
2021	13 պահվող անձ
2022	18 պահվող անձ
2023	16 պահվող անձ
2024	12 պահվող անձ

2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվը կազմել է 2686 (2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 2469), որոնցից 1401-ը՝ կալանավորված անձ՝ 45-ը՝ կին, 1 անչափահաս տղա (2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 1317 կալանավորված անձ՝ 48 կին, 2 անչափահաս տղա և 2 չափահաս՝ մինչև 21 տարեկան տղա), 1285 դատապարտյալ, որից 26-ը՝ կին, 1 անչափահաս տղա և 1 չափահաս՝ մինչև 21 տարեկան տղա (2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 1152 դատապարտյալ, որից 22-ը՝ կին):



01.2024թ.



ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ պահվում է 312 օտարերկրյա քաղաքացի (2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 199):

2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ է կրում ցմահ ազատազրկման դատապարտված 83 անձ (2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 87):

ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2024 թվականի ընթացքում ստացվել է 298 անձի կողմից հացադուլ հայտարարելու 471 դիմում: Հացադուլ հայտարարելու վերաբերյալ բոլոր դեպքերով հացադուլ հայտարարած անձը հարցման է ենթարկվել, ընդ որում՝ մի շարք դեպքերում՝ դատախազի կողմից տրամադրված խորհրդատվության արդյունքում, կալանավորված անձը կամ դատապարտյալը դադարեցրել է հացադուլը:

ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2024 թվականի ընթացքում արձանագրվել է 205 անձի կողմից ինքնավնասման կամ ինքնախեղման 626 դեպք (2023 թվականին՝ 155 անձի կողմից ինքնավնասման կամ ինքնախեղման 472 դեպք), որոնց պատճառները հիմնականում կապված են եղել քրեական վարույթների ընթացքի, կիրառված խափանման միջոցի, արարքի իրավաբանական որակման, ԱՆ քրեակատարողական ծառայության

կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների, անձնական, առողջական խնդիրների հետ, մի շարք դեպքերում ինքնավնասումը կատարվել է հոգեկան անհավասարակշիռ վիճակում, որոշ դեպքերում էլ ներկայացվել են չհիմնավորված պահանջներ:



ՔԿՀ-ում պահվող անձանց կողմից հացադուլ հայտարարելու, ինքնավնասում կատարելու պատճառները պարզելու նպատակով, ինչպես նաև տարբեր այլ հիմքերով դատախազների կողմից հարցման է ենթարկվել 467 դատապարտյալ կամ կալանավորված անձ (այսուհետ՝ Պահվող անձ):

2024 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության դեպք չի արձանագրվել, սակայն նույն ժամանակահատվածում արձանագրվել է 14 անձի կողմից կատարված ինքնասպանության փորձի 19 դեպք:

ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից ինքնասպանության (ինքնասպանության փորձի) և ինքնավնասման ռիսկերը գնահատելու, այդ կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու և ինքնավնասման ու ինքնասպանության (ինքնասպանության փորձի) հնարավոր դեպքերը չեզոքացնելու ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում Դատախազության կողմից իրականացված ուսումնասիրությունները և արձանագրված դեպքերը ցույց են տվել, որ նախորդիվ՝ դեռևս 2023 թվականի նոյեմբերի 6-ին ԱՆ քրեակատարողական ծառայության պետին հասցեագրված գրությամբ բարձրացված խնդիրը շարունակում է մնալ արդիական՝ նկատի ունենալով, որ առանձին քրեակատարողական հիմնարկներում բավարար միջոցներ չեն ձեռնարկվում պահվող անձանց ինքնավնասման դեպքերը բացառելու կամ չեզոքացնելու ուղղությամբ, ինչով պայմանավորված ինքնավնասման դեպքերը ոչ միայն էականորեն չեն նվազել, այլ կոնկրետ դեպքերով՝ փաստվել է, որ դրանք կարող են միևնույն անձի կողմից շարունակաբար կատարվել:

Դատախազությունում ստացված հատուկ հաղորդագրությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող մի խումբ անձանց կողմից կատարված ինքնավնասումների՝ առնվազն ժամանակագրական հաջորդականության վերլուծությունը

բավարար է եղել արձանագրելու, որ վերջիններս ունեն ինքնավնասման ակնհայտ հակում և ինքնավնասումն իրականացրել են արգելված իր չհանդիսացող իրերի և առարկաների օգտագործմամբ:

Այս կապակցությամբ միջնորդագիր է ներկայացվել ԱՆ քրեակատարողական ծառայության պետին՝ առաջարկելով քննարկել կոնկրետ անձանց նկատմամբ արգելված իր չհանդիսացող իրեր և առարկաներ ունենալն արգելելու մասին որոշումներ կայացնելու անհրաժեշտության հարցը՝ սահմանելով կոնկրետ դատապարտյալին կամ կալանավորված անձին վերաբերելի լրացուցիչ արգելված իրերի ցանկ:

2024 թվականի ընթացքում Դատախազության կողմից ԱՆ քրեակատարողական ծառայության մարմինների և դրանց կազմում գործող ստորաբաժանումների կայացրած որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում արձանագրվել է 31 խախտում, որոնց վերաբերյալ միջնորդագրեր են ուղարկվել ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին:

Հաշվետու ժամանակահատվածում ստուգվել են ընդհանուր 4146 որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը, այդ թվում՝ 2574 որոշում՝ կարգապահական տույժ կիրառելու մասին, 8 որոշում՝ խրախուսանքի միջոց կիրառելու մասին, 432 որոշում՝ դատապարտյալին տվյալ գոտու խիստ կամ մեղմ պայմաններում պահելու մասին, 1003 որոշում՝ դատապարտյալի տեղաբաշխման վերաբերյալ, 117 որոշում՝ դատապարտյալին կարճատև կամ երկարատև մեկնումներ տրամադրելու մասին, 12 որոշում՝ համաներում կիրառելու մասին:

Ստուգմամբ արձանագրված՝ օրենսդրությանը հակասող ակտերի վերաբերյալ ներկայացվել է 31 միջնորդագիր, որի արդյունքում 22 ակտ վերանայվել և փոփոխվել է, իսկ 9-ը թողնվել է անփոփոխ:

Վերանայված 22 ակտերը կայացվել են ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից: Նշված ակտերից 20-ը վերաբերել են տույժի, 1-ը՝ խրախուսանքի միջոց կիրառելուն, իսկ 1-ը՝ դատապարտյալին տվյալ գոտու խիստ պայմաններում պահելուն:

Կարգապահական տույժի միջոց կիրառելու մասին ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերի որոշումները վերանայելու վերաբերյալ դատախազների կողմից կայացվել են որոշումներ ինչպես նշանակված կարգապահական տույժերի խստացման, այնպես էլ մեղմացման վերաբերյալ միջնորդություններով:

Մասնավորապես՝ 11 դեպքով կայացված որոշումները պարունակել են նշանակված տույժի մեղմացման վերաբերյալ միջնորդություն, իսկ 9 դեպքով կայացված որոշումները՝ խստացման վերաբերյալ միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՆ քրեակատարողական հիմնարկներում Պահվող անձանց նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումների և կից ներկայացված նյութերի ուսումնասիրությամբ արձանագրվել են վերջիններիս կողմից կատարված կարգապահական խախտումներում ագրեսիվություն և կոնֆլիկտայնություն բնութագրող հանգամանքներ, ինչի կապակցությամբ համապատասխան գրություններ են հասցեագրվել ԱՆ ՔԿՀ պետերին, արդյունքում 12 Պահվող անձ հաշվառվել է որպես բացասական հակում ունեցող:

Հաշվետու ժամանակահատվածում խրախուսանքի միջոց կիրառելու մասին ՔԿՀ պետի կողմից կայացված 1 որոշման վերանայման վերաբերյալ ներկայացվել է միջնորդություն, որի քննարկման արդյունքում ՔԿՀ պետի կողմից կայացված որոշումն անվավեր է ճանաչվել:

Քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի մեխանիզմների պատշաճ իրացումը կարևորելով և միաժամանակ հավանական համարելով հատկապես քրեական ենթամշակույթին հարող անձանց ծննդյան օրերին և Ամանորին քրեակատարողական հիմնարկներում ներքին կարգապահական կանոնների առերևույթ խախտումների հնարավոր առկայությունը՝ Դատախազության կողմից պահանջվել և ուսումնասիրվել են վերոնշյալ օրերի տեսագրությունները, որոնց արդյունքում հայտնաբերվել են խախտումներ: Մասնավորապես՝ խախտումները վերաբերել են հիշյալ օրերին քրեական ենթամշակույթին հարող անձանց խցերում պահվող անձանց խմբերով մոտենալուն, բաց կերակրադռնակներից անարգելք հանձնուքներ փոխանցելուն, խցերի մոտ մարդկային կուտակումներ առաջացնելուն, որն արտահայտվել է ՔԿՀ-ի մասնաշենքում պահվող շուրջ 105 անձանց կողմից՝ հերթով, երբեմն 4-5 անձից բաղկացած խմբերով, կոնկրետ խցին մոտենալով: **Նկարագրված գործողությունները կատարվել են ՔԿՀ իրավասու պաշտոնատար անձանց ներկայությամբ, ովքեր ոչ միայն այս խախտումները կանխելու կամ խափանելու ուղղությամբ որևէ միջոց չեն ձեռնարկել, այլև իրենք են մոտեցել հիշյալ խցերին, վերցրել և փոխանցել հանձնուք:**

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված օրերին ԱՆ «Արմավիր» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներում դրսևորվել է անգործություն, քրեակատարողական հիմնարկի

ծառայողները զերծ են մնացել իրենց օրինական պարտականությունները կատարելուց: Ավելին, առանձին դեպքում ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի մի շարք աշխատակիցներ դիտարկել են, որ ներքին կարգապահական կանոնների խախտման արձանագրումը և վերացումը կոնկրետ դեպքում իրենց գործը չէ, այլ վերադասի գործն է, ում կողմից դրսևորված պասիվ վարքագիծն աշխատակիցները գնահատել են որպես ներքին կանոնակարգի խախտման թույլատրելիություն:

Դատախազության կողմից միջնորդագիր է հասցեագրվել ԱՆ քրեակատարողական ծառայության պետին՝ առաջարկելով ձեռնարկել գործուն միջոցներ քրեական ենթամշակույթի դեմ պայքարի գործիքները կազմակերպված, ճիշտ պլանավորված ու արդյունավետ իրագործելու ուղղությամբ:

Այս կապակցությամբ ներկայացված ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդություններով ԱՆ ՔԿՀ-ների 13 աշխատակից ենթարկվել է կարգապահական տույժի, այդ թվում՝ 1 անձի վերաբերյալ կիրառվել է «Ծառայության դադարեցում» կարգապահական տույժը:

Դատախազության կողմից ուսումնասիրվել է նաև ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց կամ դատապարտյալների անձնական խուզարկության կամ խցի կամ կացարանի խուզարկության, ինչպես նաև հագուստի և իրերի զննման ժամանակ քաղաքացիական շրջանառությունից չհանված՝ վերցված, քրեակատարողական հիմնարկի վարչակազմին ի պահ հանձնված առարկաների, իրերի, ինչպես նաև անձնական խուզարկության կամ խցի կամ կացարանի խուզարկության, ինչպես նաև իրերի զննման ժամանակ հայտնաբերված դրամի պահման ու տնօրինման համապատասխանությունը գործող քրեակատարողական օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում ձևավորված աշխատանքային պրակտիկայի արդյունքում, բազմիցս, Պահվող անձանց մոտից հայտնաբերված արգելված իր հանդիսացող բջջային հեռախոսները, բաժանորդային քարտերը, համացանցի տարածման (wifi) սարքերը և դրանց առնչվող մյուս առարկաները, Պահվող անձի դիմումի հիման վրա հանձնվել են դիմումում նշված անձանց: Մինչդեռ, քրեակատարողական օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշմամբ նման կարգավորումներ նախատեսված չեն:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՔԿՀ-ում Պահվող անձանց մոտից հայտնաբերված և ի պահ հանձնված արգելված իրերը՝ բջջային հեռախոսները, բաժանորդային քարտերը, համացանցի տարածման (wifi) սարքերը, Պահվող անձանց դիմումների հիման վրա վերջիններիս կողմից նշված անձանց հանձնելու արդյունքում, դրանց որոշ մասը կրկին ներթափանցել է ՔԿՀ և հայտնաբերվել քրեակատարողական ծառայողների կողմից՝ նույն կամ այլ Պահվող անձանց մոտ:

Այս կապակցությամբ Դատախազության կողմից ԱՆ քրեակատարողական ծառայության պետին ներկայացվել է միջնորդագիր՝ իրավասու ստորաբաժանումների աշխատակիցների վերոնշյալ խախտումները քննարկելու, գործուն և արդյունավետ միջոցներ ձեռնարկելու, խախտումները վերացնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Դատախազության կողմից ուսումնասիրվել են նաև ԱՆ քրեակատարողական հիմնարկների խցերում և կացարաններում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների բնակեցման, ինչպես նաև հավասարաչափ տեղաբաշխման վերաբերելի փաստաթղթերը, արձանագրված խախտումների կապակցությամբ հաղորդում է ուղարկվել ԱՆ քրեակատարողական ծառայության պետին՝ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցման և պահվող անձանց անհավասար տեղաբաշխման վերաբերյալ արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Դատախազության կողմից ԱՆ «Նուբարաշեն» և «Աբովյան» ՔԿՀ-ներում իրականացված ստուգումների ընթացքում Պահվող անձանց կողմից դժգոհություն է հայտնվել սննդի որակի հետ կապված: Համանման բողոքներ են ստացվել նաև ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող անձի դիմումով և մեկ այլ Պահվող անձի՝ հարցման ենթարկելու մասին արձանագրությամբ:

2024 թվականի ապրիլի 22-ին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին հասցեագրված գրությամբ Դատախազության կողմից առաջարկվել է տեսչական մարմնի իրավասության շրջանակներում ստուգման ենթարկել սննդի մատուցման ծառայություն իրականացնող ՍՊ ընկերության կողմից ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվող սննդի որակի, սննդարարության՝ վերաբերելի իրավական ակտերով սահմանված չափանիշներին և պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանությունը:

Կատարված ստուգմամբ մատակարարված սննդի նմուշները չեն համապատասխանել պայմանագրով նախատեսված բնութագրի պահանջներին և համապատասխան

ցուցանիշներին, ինչի արդյունքում տրվել է «Արտադրանքի իրացումն արգելելու, շուկայից հետ կանչելու, ոչնչացնելու կամ օգտահանելու մասին» կարգադրագիր, իսկ այնուհետև՝ «Վտանգավոր արտադրանքի ոչնչացման» ակտ:

Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից ստուգում է իրականացվել նաև ԱՆ ՔԿՀ-ներ սնունդ մատակարարող ՍՊ ընկերությունում, ինչի արդյունքում ընկերության տնօրենի նկատմամբ կիրառվել է վարչական պատասխանատվության միջոց:

Հաշվետու ժամանակահատվածում Վարչության կողմից ուսումնասիրություններ են կատարվել նաև ԱՆ քրեակատարողական հիմնարկներում Պահվող անձանց առողջության պահպանման իրավունքի իրացման վիճակի, վերջիններիս պատշաճ բժշկական օգնություն տրամադրելու վերաբերյալ:

ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձինք կամ դատապարտյալները, Դատախազությանը հասցեագրած իրենց դիմումներով, ինչպես նաև դատախազների կողմից հարցման ենթարկվելու ընթացքում կազմված արձանագրություններով բարձրացրել են հարցադրումներ Առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանման կողմից իրենց պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում չտրամադրելու վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում իրականացված ստուգման ընթացքում պարզվել է, որ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Արմավիր» ստորաբաժանման ղեկավարի կողմից ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվող՝ առերևույթ բժշկական օգնության կարիք ունեցող առանձին դատապարտյալների և կալանավորված անձանց նկատմամբ պատշաճ բժշկական օգնություն չի ցուցաբերվել, իսկ Պահվող մի շարք անձինք ՔԿՀ-ի բժշկական մասնաշենքում պահվելու անհրաժեշտություն առերևույթ չեն ունեցել:

Կատարված ստուգումների արդյունքում պարզվել է նաև, որ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում Պահվող անձինք, վերոհիշյալ հանգամանքներով պայմանավորված, իրենց բողոքները հասանելի դարձնելու նպատակով՝ պարբերաբար դիմել են ծայրահեղ քայլերի, այդ թվում՝ հացադուլ հայտարարելու կամ ինքնավնասումներ կատարելու եղանակով:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատախազության կողմից միջնորդագիր է ներկայացվել Առողջապահության նախարարություն:

2024 թվականի ընթացքում ԱՆ քրեակատարողական հիմնարկներում Պահվող անձանց նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումների ուսումնասիրությամբ

արձանագրվել են նույնանման դեպքերում տույժի միջոցների տարբերակված կիրառման, ինչպես նաև կայացված որոշումների ոչ բավարար չափով պատճառաբանվածության և հիմնավորվածության վերաբերյալ դեպքեր:

Կարևորելով տույժի միջոցների կիրառման ընթացքում օրինականության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունը, այդ համատեքստում՝ նույնանման դեպքերում տույժի միջոցների տարբերակված կիրառման բացառումը, Պահվող անձանց նկատմամբ տույժի միջոցների կիրառման վերաբերյալ կայացված որոշումների բավարար չափով պատճառաբանվածությունը և հիմնավորվածությունը՝ ԱՆ քրեակատարողական ծառայության պետին ներկայացվել են միջնորդագրեր՝ բարձրացված խնդրի լուծման ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկելու վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում ստուգվել են նաև քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կատարման կապակցությամբ կայացված իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ քրեակատարողական օրենսդրության նորմերի պահանջներին: Կատարված ստուգումներով այս բնագավառում արձանագրվել են համատարած բնույթ կրող մի շարք խախտումներ, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են նաև բացասական հակում ունեցող կամ կարգապահական տույժի ենթարկված դատապարտյալների հետ այս բնույթի աշխատանքներ չիրականացնելուն, Պահվող անձանց կողմից աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքների չկատարմանը կամ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձի վճարմանը և այլն:

Այս կապակցությամբ հաղորդում է ներկայացվել ԱՆ քրեակատարողական ծառայության պետին՝ արձանագրված խախտումների պատճառները բացահայտելու և դրանք վերացնելու ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում Դատախազության կողմից հայտնաբերվել են՝

- Առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ «Արմավիր» ստորաբաժանման ղեկավարի կողմից վստահված գույքի հափշտակության և դրա օժանդակության մասին առերևույթ դեպք:

- Դատապարտյալի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտն ի կատար ածելու գործընթացում իրավասու պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու առերևույթ դեպք, ինչի արդյունքում մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով անձն ազատվել է դատավճռով նշանակված պատժից՝ յոթ ամիս ժամկետով ազատազրկումից:
- Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված տնային կալանքը վարչական հսկողություն խափանման միջոցով փոխելու վերաբերյալ դատական ակտն ի կատար ածելու գործընթացում ներգրավված՝ ԱՆ Պրոբացիայի ծառայության իրավասու պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ առերևույթ դեպք:
- ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ «Նուբարաշեն» ստորաբաժանման ղեկավարի պարտականությունները կատարողի կողմից պաշտոնական շրջանառության մեջ գտնվող փաստաթղթերում կեղծ տեղեկություններ մտցնելու վերաբերյալ առերևույթ դեպքեր, ինչի արդյունքում ՔԿՀ-ում պահվող երկու անձի նկատմամբ պատժախուց տեղափոխելու ձևով նշանակված տույժի կիրառումը տևական ժամանակ չի կատարվել:
- ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում պահվող՝ հանցածին դիրքորոշում ունեցող կալանավորված անձի վերաբերյալ կազմված բժշկական քարտում կեղծ տեղեկություններ լրացնելով՝ վերջինիս համար քրեակատարողական հիմնարկում արտոնյալ պայմաններ ապահովելու առերևույթ դեպք:

Վերը նշված բոլոր դեպքերով դատախազների կողմից ներկայացվել են հանցանքի մասին հաղորդումներ, նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր 3 միլիարդ 493 միլիոն 810 հազար դրամ տուգանքից փաստացի կատարվել է 1 միլիարդ 264 միլիոն 407 հազար դրամի չափով վճարում, 241 միլիոն 725 հազար դրամի չափով տուգանք բռնագանձելու գործընթացը դադարեցվել է դատապարտյալի մահվան, տուգանքը հանրային աշխատանքով փոխարինելու կամ այլ պատճառներով, իսկ 1 միլիարդ 987 միլիոն 677 հազար դրամի չափով տուգանքի կատարումը գտնվում է ընթացքում:

Այսպիսով, 2024 թվականին տուգանք պատժատեսակի կատարման վարույթներով գանձվել է 686 միլիոն 208 հազար դրամ ավելի գումար քան 2023 թվականին (2023 թվականի ընթացքում գանձվել է 578 միլիոն 199 հազար դրամ):



Դատախազները հաշվետու ժամանակահատվածում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են 3245 դատական քննության (2023 թվականին՝ 2391): Դրանցից 740-ը վերաբերել են դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն (2023 թվականին՝ 803), 63-ը՝ ՔԿՀ-ներում կատարված հանցագործություններով քրեական գործերով մեղադրանքի պաշտպանությանը (2023 թվականին՝ 53), 34-ը՝ պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելուն (2023 թվականին՝ 28), 40-ը՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելուն (2023 թվականին՝ 32), 78-ը՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելուն (2023 թվականին՝ 29), 235-ը՝ տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելուն (2023 թվականին՝ 97), 1-ը՝ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի այլ միջոցների կիրառումը փոփոխելուն կամ դադարեցնելուն (2023 թվականին՝ 5), 59-ը՝ հարկադիր բուժումը փոփոխելուն կամ դադարեցնելուն (2023 թվականին՝ 55), իսկ 1995-ը՝ դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերին (2023 թվականին՝ 1289):

Դատախազների կողմից 2024 թվականի ընթացքում ներկայացվել է 160 վերաքննիչ բողոք (2023 թվականին՝ 97), որոնցից բավարարվել է 42-ը (2023 թվականին՝ 30): Վերաքննիչ բողոքներից 58-ը եղել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ, որոնցից բավարարվել է 10-ը: Պատիժը կրելուց ծանր հիվանդության պատճառով ազատելու վերաբերյալ գործերով բերվել է 8 բողոք, որոնք չեն բավարարվել:

Հարկադիր բուժումը փոփոխելու կամ դադարեցնելու վերաբերյալ գործերով բերվել է 5 բողոք, որից 1-ը բավարարվել է: Տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ գործերով բերվել է 4 վերաքննիչ բողոք, որից բավարարվել է 2-ը: Այլ բնույթի գործերով բերված 85 բողոքից բավարարվել է 29-ը:

2024 թվականին բերվել է 88 վճռաբեկ բողոք (2023 թվականին՝ 110), որոնցից բավարարվել է 19-ը (2023 թվականին՝ 9):

9

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումը՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների.

- **Քրեական վարույթներով փոխադարձ իրավական օգնության մասին հարցումներ.**

2024 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ է ուղարկվել քրեական վարույթներով իրավական օգնության մասին 232 միջնորդություն (2023 թվականին՝ 135), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 133 միջնորդություն (2023 թվականին՝ 176). ընդամենն ուղարկվել է 365 միջնորդություն (2023 թվականին՝ 311):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քննչական մարմիններին փոխանցվել են տարբեր օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկվող քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություններ կազմելու վերաբերյալ թարմացված ուղեցույցներ և կազմվող որոշ միջնորդությունների նախագծերը նախքան ուղարկելն աշխատանքային կարգով ուսումնասիրվել ու լրամշակվել են Գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության կողմից՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային պայմանագրերի և ուղեցույցների պահանջներին՝ զգալիորեն բարելավվել է փաստաթղթերի որակը, ինչի արդյունքում նաև կրճատվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից միջնորդությունների կատարման ժամկետները և նվազել են միջնորդությունները մերժելու դեպքերը:

Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունում քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 169 միջնորդություն (2023 թվականին՝ 145), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 34 միջնորդություն (2023 թվականին՝ 45). ընդհանուր առմամբ ստացվել է 203 միջնորդություն (2023 թվականին՝ 190):

- **Քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին միջնորդություններ.**

Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր դատախազության միջազգային-իրավական

համագործակցության վարչությունը կազմակերպել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 34 միջնորդությունների նախապատրաստման և ուղարկման աշխատանքները (2023 թվականին՝ 28): Միջնորդություններից 19-ն ուղարկվել են ԱՊՀ մասնակից-պետությունների, իսկ 15-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը:

Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված գրությունների հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթներն ուսումնասիրվել են Գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունում, պահանջվել են դրանց լրամշակված տարբերակները, իսկ անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում միջազգային պայմանագրերի համաձայն՝ հայցվել և տրամադրվել են լրացուցիչ տեղեկություններ:

Այս գործընթացի ճիշտ և ժամանակին կազմակերպման արդյունքում նվազել են հանձնման միջնորդությունների մերժումները:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված 34 հանձնման միջնորդություններից 10-ը բավարարվել են, 5-ը՝ մերժվել, 19-ը գտնվում են քննարկման փուլում, բավարարվել են նաև նախկինում ներկայացված միջնորդություններից 8-ը, մերժվել՝ 8-ը:

Աճել է քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին ստացվող միջնորդությունների թիվը:

Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 73 միջնորդություններից (2023 թվականին՝ 54) բավարարվել է 18-ը, մերժվել՝ 11-ը, թողնվել է առանց քննարկման 2-ը, վերադարձվել՝ 4-ը, ուղարկվել է Արդարադատության նախարարություն՝ 8-ը, իսկ 30 միջնորդությունները գտնվում են քննարկման փուլում:

Բավարարվել է նաև նախկինում փոխանցված 15 միջնորդություն, մերժվել՝ 2-ը, վերադարձվել՝ 2-ը, թողնվել է առանց քննարկման 7-ը:

Աճել է նաև Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող անձանց թիվը:

Գլխավոր դատախազությունում հաղորդում է ստացվել Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 291 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 241):

- **Քրեական հետապնդում իրականացնելու մասին միջնորդությունների մասով կատարված աշխատանքներ.**

Գլխավոր դատախազության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ է ուղարկվել 2 քրեական վարույթ (2023 թվականին՝ 1):

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 24 քրեական վարույթ (2023 թվականին՝ 26):

- **Համագործակցություն այլ պետությունների դատախազությունների, միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, միջազգային և տարածաշրջանային միջոցառումների ու երկկողմ հանդիպումների կազմակերպում և մասնակցություն.**

1. Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ «Գործընկերություն հանուն լավ կառավարման», Եվրոպայի խորհրդի՝ «Աջակցություն դատաիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում» և «Հայաստանում տնտեսական հանցագործությունների արդյունավետ կանխարգելման և դրանց դեմ պայքարի ազգային կարողությունների հզորացում» ծրագրային ձևաչափի շրջանակում՝ Եվրոպայի խորհրդի հետ համատեղ 2024 թվականի ապրիլի 26-ին և 27-ին կազմակերպվել է «Միջազգային համագործակցության արդյունավետության ամրապնդումը՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում» թեմայով երկօրյա բարձրաստիճան խորհրդաժողով:



Խորհրդաժողովին ներկա են եղել Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներ, Դատախազության ներկայացուցիչներ, խորհրդաժողովին մասնակցելու համար Հայաստան է ժամանել 12 պատվիրակություն՝ 23 ներկայացուցիչ՝ օտարերկրյա պետությունների գլխավոր դատախազություններից և միջազգային կազմակերպություններից (ընդհանուր՝ 100 մասնակից):

2. Հայաստանի և Եվրոպական միության միջև շուրջ երկու տարի տևած բանակցությունների արդյունքում 2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագիրը (ուժի մեջ է մտել 2024 թվականի դեկտեմբերի 1-ին):

2024 թվականի սեպտեմբերի 23-ին Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագրի կատարումն ապահովող աշխատանքային պայմանավորվածությունը (ուժի մեջ է մտել 2024 թվականի դեկտեմբերի 11-ին):

Արդյունքում, Հայաստանի Հանրապետությունն առաջիկայում «Եվրաջասթ» կգործուղի դատախազ՝ քրեական վարույթներով ԵՄ անդամ պետությունների իրավասու մարմինների հետ զարգացնելով առավել արդյունավետ համագործակցություն:

3. 2024 թվականի հոկտեմբերի 3-ից 5-ը Դատախազության կողմից Երևանում կազմակերպվել է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի 34-րդ նիստը, որին մասնակցելու նպատակով Հայաստան են ժամանել 7 պատվիրակություն՝ 45 ներկայացուցիչ՝ ԱՊՀ անդամ 6 պետություններից և միջազգային կազմակերպությունից:

4. Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակում՝ Դատախազության, Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ ջանքերով 2024 թվականի նոյեմբերի 15-ին Երևանում կայացել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների հայերեն ժողովածուի շնորհանդեսը:

Միջոցառման նպատակն էր ազդարարել Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի կարծիքների (այսուհետ՝ Կարծիք) հայերեն թարգմանության հասանելիության մասին, ներկայացնել դրանք, ինչպես նաև քննարկել Կարծիքների գործնական կիրառության հետ կապված հարցեր:

Միջոցառման թեմատիկ նիստի ընթացքում ներկայացվել է Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի թիվ 14 կարծիքը, որը վերաբերում է կոռուպցիայի և հարակից տնտեսական ու ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում դատախազների դերին, անդրադարձ է կատարվել կոռուպցիոն բնույթի հանցանքների բացահայտման արդի մարտահրավերներին և այլն:

Միջոցառմանը ներկա են եղել Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներ, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի նախագահը, Դատախազության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, Եվրաջասթի ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների Համակարգող խորհրդի քարտուղարության, Կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի, ԵԽ այլ միջկառավարական կոմիտեների ու ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

2024 թվականի ընթացքում ապահովվել է Հայաստանի Հանրապետության դատախազության ներգրավվածությունը երկկողմ և միջազգային տարբեր հարթակներում անցկացվող հանդիպումներին, քննարկումներին, սեմինարներին և նիստերին:

Մասնավորապես՝

1. 2024 թվականի մարտի 4-ից 7-ը Գլխավոր դատախազի գլխավորած պատվիրակությունը եռօրյա աշխատանքային այցով գտնվել է Նիդերլանդների Թագավորությունում:

Այցի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հանդիպել է Նիդերլանդների Թագավորության գլխավոր դատախազ Սյու Փրինենին (ՆԹ գլխավոր դատախազների խորհրդի անդամ): Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարել քրեական գործերով համագործակցության արդյունավետության բարձրացմանը, փոխգործակցության շրջանակում շարունակական վերապատրաստումների միջոցով դատախազների մասնագիտական

կարողությունների զարգացման անհրաժեշտությանը և ներկայացրել է Դատախազության առաջնահերթությունները՝ ուղղված փողերի լվացման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, կոռուպցիայի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և կիբերհանցագործությունների դեմ պայքարին:

Այցի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է նաև Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) նախագահ Լադիսլավ Համրանին: Հանդիպման ընթացքում Աննա Վարդապետյանն անդրադարձել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված կոնկրետ վարույթով իրավական օգնության

հարցման ընթացքին, կարևորել կոռուպցիոն և ֆինանսական հանցագործությունների, ինչպես նաև փողերի լվացման վարույթներով արդեն կատարված իրավական օգնության հարցումները: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Այցի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Դատախազների միջազգային ասոցիացիայի գլխավոր քարտուղար Ռոյլ Դոնայի և գործադիր տնօրեն Ջեյն Հեբների հետ: Հանդիպման ընթացքում Աննա Վարդապետյանը կարևորել է Ասոցիացիայի առաքելությունը՝ տեղեկատվության փոխանակման միջոցով հանցավորության դեմ արդյունավետ պայքարելու համատեքստում և ընդգծել է Ասոցիացիայի կողմից կազմակերպվող տարեկան ու ընթացիկ համաժողովների և յուրաքանչյուր տարի հրապարակվող պարբերականի կարևորությունը, որում ներառվում են նաև ՀՀ դատախազների հեղինակած գիտական հոդվածները:

Այցի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Միջազգային քրեական դատարանի դատախազ Քարիմ Խանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Միջազգային քրեական դատարանի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելուն ուղղված քայլերը, ներպետական ընթացակարգերի վերանայմանն ու դրանք Ստատուտի դրույթներին համապատասխանեցնելուն առնչվող հարցեր:

2. 2024 թվականի նոյեմբերի 5-ից 7-ը ՀՀ գլխավոր դատախազի գլխավորած պատվիրակությունը աշխատանքային այցով գտնվել է Նիդերլանդների Թագավորությունում:

Այցի ընթացքում 2024 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) նախագահ Լադիսլավ Համրանի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հայաստանի և Եվրաջասթի միջև համագործակցության Համաձայնագրի կիրարկման ուղղությամբ ընթացող աշխատանքները և անդրադարձել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի: Եվրաջասթ կատարած այցի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպումներ է ունեցել նաև Եվրաջասթում Իտալիայի և Հունաստանի ներկայացուցիչների հետ:

2024 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտի (UNICRI) արհեստական բանականության և ռոբոտաշինության կենտրոնի ղեկավար Իրակլի Բերիձեի հետ՝ քննարկելով համագործակցության հեռանկարները:

3. 2024 թվականի նոյեմբերի 7-ից 9-ը ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորած պատվիրակությունը Մալթայի Հանրապետությունում մասնակցել է Դատախազների միջազգային ասոցիացիայի եվրոպական 18-րդ տարածաշրջանային համաժողովին: Համաժողովի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել «Փողերի լվացման հանցակազմի որակման փոփոխությունը Հայաստանում Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի զարգացման համատեքստում» խորագրով ելույթով:

ՀՀ գլխավոր դատախազն անդրադարձել է նաև փողերի լվացման վերաբերյալ քրեական վարույթների քննության ոլորտում առկա մարտահրավերներին, ընդգծել է Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային իրավական համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ իրականացվող քայլերը և քրեական վարույթներով արդյունավետ միջազգային-իրավական համագործակցության կարևորությունը:

Ստանձնած միջազգային պարտավորությունների՝ Գլխավոր դատախազության մասով կատարման ընթացքը ներկայացնելու, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազը և գլխավոր դատախազի տեղակալները հանդիպումներ են ունեցել նաև միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների իրավասու կառույցների ներկայացուցիչների, դեսպանների, ինչպես նաև ՀՀ ժամանած այլ պաշտոնատար անձանց հետ:

Մասնավորապես՝

1. 2024 թվականի հունվարի 15-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ԱՄՆ պետական դեպարտամենտի Գլոբալ հակակոռուպցիոն հարցերով համակարգող Ռիչարդ Նեֆյուի գլխավորած պատվիրակությանը:

ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է հակակոռուպցիոն ոլորտում Դատախազության կողմից իրականացվող աշխատանքները: Քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարում ԱՄՆ-ի հետ համագործակցության զարգացման հեռանկարները:

2. 2024 թվականի փետրվարի 2-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում Շվեդիայի Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Պատրիկ Սվենսոնի գլխավորած պատվիրակությանը:

ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է Դատախազության առաջնահերթ ուղղությունները՝ առանձնացնելով ապօրինի հարստացման, փողերի լվացման, կոռուպցիայի և կիբերհանցագործությունների դեմ պայքարը, պետական շահերի պաշտպանությունը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի կատարելագործումը, հանքարդյունաբերության ոլորտում չարաշահումների դեմ պայքարը: Ներկայացվել են ազդարարման համակարգի նկատմամբ քաղաքացիների և բիզնեսի վստահությունը բարձրացնելուն ուղղված գործողությունները :

3. 2024 թվականի փետրվարի 15-ին, հուլիսի 9-ին և օգոստոսի 30-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Քրիստինա Քվինի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտներում փորձի փոխանակման ծրագրերի վերաբերյալ, որոնց շրջանակում Դատախազության ներկայացուցիչները հնարավորություն են ունենում օտարերկրյա ուսումնական հաստատություններում անցնել վերապատրաստումներ:

Հանդիպումների ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանում հարուցված քրեական գործի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազության և ԱՄՆ իրավասու մարմինների միջև արդյունավետ համագործակցության արդյունքին՝ ԱՄՆ իրավասու դատարանի որոշմանը, որով հաստատվել է հանցավոր ծագում ունեցող գույք դիտարկվող՝ ՀՀ ֆինանսների նախկին նախարարի ընտանիքին պատկանող՝ ԱՄՆ Լոս Անջելես քաղաքում գտնվող առանձնատան բռնագրավման և օտարման մասին համաձայնությունը:

4. 2024 թվականի ապրիլի 11-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ղեկավար Թիերի Ռիբոյի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի շրջանակ, ինչպես նաև նախանշվել են հետագա համագործակցության ոլորտները:

5. 2024 թվականի ապրիլի 15-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԱՄՆ պետական դեպարտամենտի, ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվել կոռուպցիոն հանցագործությունների քննության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտներում ԱՄՆ գործընկերների հետ իրավական փոխօգնության խորացմանը, քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

6. 2024 թվականի մայիսի 15-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանում ԵԽ գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել է ՀՀ դատախազության և Հայաստանում ԵԽ գրասենյակի համագործակցության արդյունավետությունն ու նախանշվել են փոխգործակցության զարգացման հետագա ուղղությունները:

Գլխավոր դատախազն անդրադարձել է 2024 թվականի ապրիլի 26-27-ին Երևանում կազմակերպված «Միջազգային համագործակցության արդյունավետության ամրապնդումը՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում» թեմայով բարձրաստիճան խորհրդաժողովին:

7. 2024 թվականի մայիսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է երկօրյա այցով Հայաստան ժամանած՝ Դատախազների միջազգային ասոցիացիայի գլխավոր քարտուղար Ռոյլ Դոնային և Ասոցիացիայի գլխավոր իրավաբան Շենազ Մուզաֆերին: Հանդիպմանը քննարկվել են Դատախազների միջազգային ասոցիացիայի հետ նախանշված համագործակցության ուղղություններով իրականացվող աշխատանքները, անդրադարձ է կատարվել 2023 և 2024 թվականներին Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության հետ համատեղ կազմակերպված բարձրաստիճան համաժողովների արդյունքներին:

Անդրադարձ է կատարվել նաև ՀՀ գլխավոր դատախազի՝ «Կիբերհանցագործության դեմ պայքարի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով հոդվածի հրապարակմանը Ասոցիացիայի մասնագիտական պարբերականում, քննարկվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, կոռուպցիայի, միջազգային հանցավորության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և կիբերհանցագործությունների դեմ պայքարի թեմաներով դատախազների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված վեբինարների կազմակերպման, ինչպես նաև Ասոցիացիայի տարեկան համաժողովներից մեկը Հայաստանում անցկացնելու հետ կապված հարցեր:



8. 2024 թվականի մայիսի 21-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ԱՄՆ թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության հարցերով փոխպետքարտուղարի տեղակալ Բրենդոն Յոդերի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում, ի թիվս երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի, կողմերն անդրադարձել են իրավական փոխօգնության ոլորտում համագործակցության զարգացման հնարավորություններին, Դատախազության առաջնահերթություններին՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի զարգացմանը, կիբերհանցավորության դեմ պայքարին և քննարկել վերոնշյալ ուղղություններով ԱՄՆ աջակցության հնարավորությունները:

9. 2024 թվականի հունիսի 26-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Իտալիայի զինվորական գլխավոր դատախազ Մաուրիցիո Բլոկի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ թեմաների, քննարկվել են երկու երկրների դատախազական համակարգերի կառուցվածքներին, լիազորությունների շրջանակին, ընթացող բարեփոխումներին և քրեական արդարադատության ոլորտում դատախազությունների միջև համագործակցության ընդլայնմանն ուղղված մի շարք հարցեր:

Արժևորելով Մաուրիցիո Բլոկի մասնագիտական գործունեության հարուստ փորձը և որպես Իտալիայի զինվորական արդարադատության պարբերականի խմբագրի փորձառությունը՝ ՀՀ գլխավոր դատախազն առաջարկել է Մաուրիցիո Բլոկին ընդգրկվել ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհրդի կազմում. 2024 թվականի հուլիսի 12-ին Մաուրիցիո Բլոկն ընդգրկվել է պարբերականի խմբագրական խորհրդի կազմում:

10. 2024 թվականի հուլիսի 3-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Նիդերլանդների Թագավորության գործերի ժամանակավոր հավատարմատար Յապ Ֆրեդերիքսի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համատեղ իրականացված արդյունքահեն ծրագրերը՝ որպես համագործակցության լավագույն օրինակ անդրադառնալով Նիդերլանդների դեսպանության աջակցությամբ իրականացված՝ Հայաստանի բոլոր դատախազների հաղորդակցության կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված շուրջ վեց ամիս տևած դասընթացի արդյունքներին, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր դատախազները:

11. 2024 թվականի հուլիսի 9-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Նիդերլանդների Թագավորության խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ թեմաների, քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, ընտանեկան բռնության, խոշտանգումների դեմ պայքարին և այլ ոլորտներին վերաբերող հարցեր, վերահաստատվել է մի շարք թիրախային ուղղություններով, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, կիբերհանցավորության դեմ պայքարի և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներում համագործակցությունը զարգացնելու պատրաստակամությունը:

12. 2024 թվականի հուլիսի 16-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ուզրա Զեայի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ թեմաների, ներկայացվել են ՀՀ դատախազության առաջնահերթությունները՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, փողերի լվացման, խոշտանգումների, կիբերհանցավորության դեմ պայքարին:

Կարևորվել են ընթացող բարեփոխումները, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ կատարվող աշխատանքները:

13. 2024 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստան ժամանած՝ Եվրոպական միության քրեական արդարադատության գործակալության (Եվրաջասթ) նախագահ Լադիսլավ Համրանի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը կարևորել է 2024 թվականի ապրիլի 5-ին Բրյուսելում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագիրը, որը 2024 թվականի սեպտեմբերի 10-ին վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Ընդգծվել է, որ դատախազության ներկայացվածությունը Եվրաջասթում հնարավորություն կտա օպերատիվ կապ ապահովել ԵՄ անդամ և երրորդ պետությունների գործընկերների հետ, հնարավորություն կընձեռի Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնված քրեական վարույթներով իրականացնել առավել արդյունավետ միջազգային-իրավական համագործակցություն :

14. 2024 թվականի հոկտեմբերի 2-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի գործադիր քարտուղար Վլադիմիր Զիմինի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում կողմերը անդրադարձել են ԱՊՀ մասնակից պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի 34-րդ նիստը Երևանում անցկացնելու որոշմանը, քննարկել նիստի անցկացման գործնական հարցեր:

15. 2024 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Տաջիկստանի Հանրապետության գլխավոր դատախազ Ռահմոն Յուսուֆ Ահմադզոդի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել է փորձի փոխանակման նպատակով երկու երկրների դատախազությունների միջև իրավական համագործակցության փաստաթղթի ստորագրման հնարավորությունը, անդրադարձ է կատարվել միջազգային-իրավական համագործակցության ոլորտում երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերին:

16. 2024 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազ Իգոր Կրասնովի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում, ի թիվս երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի, ստորագրվել է համագործակցության 2025-2026 թվականների ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է առավել մեծ ուշադրություն դարձնել գիտակրթական ոլորտում կապերի ամրապնդմանը:

Քննարկելով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի՝ ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է Հայաստանի Հանրապետությունից դուրս բերված և Ռուսաստանի Դաշնությունում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի արգելադրման և բռնագանձման, կոնկրետ կոռուպցիոն գործերով իրական և արդյունքահեն համագործակցության անհրաժեշտությունը:





17. 2024 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Ղրղզստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Նուրբեք Քայիմովի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են միջազգային-իրավական համագործակցության ոլորտում երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

18. 2024 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Ուզբեկստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Սվետլանա Արտիկովայի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են միջազգային-իրավական համագործակցության ոլորտում երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

19. 2024 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Բելգիայի Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկ դե Մույնքին:

Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է Դատախազության առաջնահերթությունները՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, կոռուպցիոն գործերի քննության շրջանակում պետական և համայնքային շահերի պաշտպանությանը, ընտանեկան բռնության կանխարգելմանը, քննարկվել են վերոնշյալ ուղղություններով փոխգործակցությունը զարգացնելու հնարավորությունները:

20. 2024 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Մարիկե Հարիետ Մոնրոյ-Վինթերին:

Հանդիպմանն ազդարարվել է Նիդերլանդների դեսպանության աջակցությամբ իրականացվող երկրորդ դասընթացի մեկնարկը, որի մասնակիցները Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր դատախազներն են: Թեման՝ դատական նիստերի դահլիճում հաղորդակցում և կոնֆլիկտային իրավիճակների կառավարում:

21. 2024 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Գալագերի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Դատախազության առաջնահերթություններին, ընդգծվել է թիրախային ուղղություններով դատախազների շարունակական կրթության ապահովման կարևորությունը, պայմանավորվածություն է ձեռք բերվել ակտիվացնել երկկողմ շփումները փողերի լվացման և կիբերհանցավորության դեմ պայքարի համատեքստում:

22. 2024 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գործերի հավատարմատար Չեն Մինին:

Հանդիպման ընթացքում ընդգծվել է ոլորտային խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստող աշխատանքային հանդիպումների կարևորությունը, անդրադարձ է կատարվել անդրազգային հանցավորության դեմ պայքարում համագործակցության հետագա կատարելագործմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Դատախազության ներկայացուցիչները, ի թիվս այլնի, մասնակցել են՝

1. Բուդապեշտում կայացած՝ ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի (ԹՊԻՀ) կազմակերպած՝ Միջազգային Իրավապահ Ակադեմիայի (ILEA) կողմից կազմակերպվող Հակակոռուպցիոն շարքի դասընթացներին:

2. Թբիլիսիում կայացած՝ ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի (ԹՊԻՀ), ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի, Բուխարեստում ԱՄՆ դեսպանատան OPDAT գրասենյակի հետ մեկտեղ կազմակերպած՝ «Պայքար կեղծ ալկոհոլային ապրանքների ապօրինի շուկաների դեմ» խորագրով աշխատաժողովին:

3. Թբիլիսիում կայացած՝ Եվրոպական միության իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալության (CEPOL) “TOPCOP” ծրագրի շրջանակում կազմակերպած՝ «Շարժական կազմակերպված հանցավոր խմբեր. Բանկոմատներում կանխիկ դրամական միջոցների տարանցման հետ կապված հարձակումներ, ավտոտրանսպորտային հանցագործություններ» թեմայով ազգային ներկայացուցիչների վերապատրաստմանը

4. Բուդապեշտում կայացած՝ Եվրոպական միության իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալության (CEPOL) կողմից “TOPCOP” ծրագրի շրջանակում անցկացված՝ “Մարդկանց թրաֆիքինգ/Վերապատրաստողների վերապատրաստում ” թեմայով դասընթացին:

5. Քիշնևում կայացած՝ Եվրոպական միության իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալության (CEPOL) կողմից “TOPCOP” ծրագրի շրջանակում կազմակերպված՝ «Ծանր և կազմակերպված հանցավորության ռիսկի գնահատման մեթոդաբանություն, ռիսկի կառավարում, օպերատիվ և ռազմավարական վերլուծություն» խորագրով դասընթացին

6. Սամարղանդում կայացած՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի (UNODC ROCA) կողմից կազմակերպված՝ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային բազմաշահառու միջոցառմանը:

7. Ստրասբուրգում կայացած՝ Քրեական գործերով համագործակցության եվրոպական կոնվենցիայի փորձագետների Եվրոպայի խորհրդի միջկառավարական կոմիտեի լիագումար նիստին:

8. Չինաստանի կառավարության կողմից կազմակերպված՝ «Ահաբեկչության դեմ պայքարի շուրջ ՇՀԿ անդամ երկրների համար» բազմակողմ դասընթացին:

9. Հյուսիսային Մակեդոնիայի Օհրիդ քաղաքում կայացած՝ Ակտիվների կառավարման բալկանյան միջգերատեսչական ցանցի 2024 թվականի ընդհանուր ժողովին և վերապատրաստմանը:

10. Կորեայի Բուսան քաղաքում կայացած՝ Եվրոպայի խորհրդի Մանիվալ հանձնախմբի կազմակերպած՝ ֆինանսական ակտիվների հատուկ հանձնախմբի կողմից ՖԱԹՖ հանձնարարականների թեմայով վերապատրաստման դասընթացին:

11. Բելգրադում կայացած՝ «Քրեական բռնագրավման գործընթացում լրացուցիչ գործիքների ներդրում» թեմայով կոնֆերանսին:

12. Հյուսիսային Մակեդոնիայի Շտռուգա քաղաքում կայացած՝ Ակտիվների կառավարման բալկանյան միջգերատեսչական ցանցի 2024 թվականի ընդհանուր ժողովին և վերապատրաստմանը:

13. Ռիգայում կայացած՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն իրավապահ ցանցի 14-րդ հանդիպմանը:

2024 թվականի ընթացքում հանցավորության վիճակագրության և հանցագործությունների քննության պրակտիկայի վերլուծության հիման վրա, հիմք ընդունելով նաև Դատախազության ընդլայնված կոլեգիայի 2024 թվականի մարտի 18-ի նիստում տրված հանձնարարությունները, մշակվել են քրեական արդարադատության ոլորտին վերաբերող և Դատախազության գործունեությանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր, որոնք միտված են եղել առանձին հանցատեսակների դեմ քրեաիրավական պայքարի գործիքակազմի կատարելագործմանը և տարբեր հանցագործությունների քննության ժամանակ երևան եկած օրենսդրական բացերի հաղթահարմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության կողմից նախապատրաստվել և ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան ուղեկցական գրություններով իրավասու պետական մարմիններ է ուղարկվել 4 օրենսդրական նախաձեռնություն:

Նշված օրենսդրական նախաձեռնություններից են՝

1.«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվել է սահմանել իրավակարգավորումներ, որոնց համաձայն՝ Հակակոռուպցիոն դատարանը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով, մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, կարող է թույլատրել մեկ վարույթում միացնել տարբեր վարույթներում քննվող մի քանի գործեր, եթե նման միջնորդություն ներկայացնող կողմը հիմնավորում է, որ դրանց միջև առկա է փոխադարձ կապ և դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը: Գործերը միացվում են հայցադիմումը ներկայացնելու պահին առավել մեծ հայցագին ունեցող վարույթում: Նախագծի ընդունումն անհրաժեշտ է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման փոխկապակցված վարույթները միավորելու եղանակով գործերի առավել արդյունավետ քննության հնարավորություն ստեղծելու տեսանկյունից:

2. Արդարադատության նախարարություն են ներկայացվել Քրեակատարողական օրենսգրքի կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրների և դրանց լուծման հնարավոր ուղղությունների վերաբերյալ Դատախազության առաջարկությունները: Առաջարկությունները վերաբերում են օրենսդրական փոփոխությունների միջոցով միջին և բարձր անվտանգային գոտում ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց հիշյալ անվտանգային գոտիների մեջ պայմաններ տեղափոխելու համար դրական վարքագիծ դրսևորելը որպես պարտադիր բաղադրիչ սահմանելուն:

3. 2024 թվականի դեկտեմբերի 12-ին ուժի մեջ է մտել «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքը, որի մշակման աշխատանքներում ներգրավվածություն է ունեցել ՀՀ գլխավոր դատախազությունը: Հիշյալ օրենքով կարգավորվել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց հետաքննության մարմին ներկայացնելու և ձերբակալման կարգը, իրավական օգնության մասին միջնորդություններին ներկայացվող պահանջները: Լրամշակվել են նաև ժամանակավոր, հանձնման նպատակով, ինչպես նաև փաստացի հանձնման համար անձանց կալանավորման ժամկետներն ու կարգը, փաստաբան, թարգմանիչ ներգրավելու կարգը և այլ կարևոր հարցեր:

Կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի 1922-Ն որոշմամբ սահմանվել են քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին և

պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցների վճարման միասնական կարգավորումներ, ստեղծվել է [Վերականգնված միջոցների միասնական հաշիվ](#):

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է ՀՀ դատախազության ներգրավվածությունը 2023 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ քննչական գործողությունների պարտադիր տեսաձայնագրման գործընթացի պատշաճ կիրարկումն ապահովելու աշխատանքներում: Շարունակվել են նաև աշխատանքները քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են տարբեր գերատեսչություններից ստացված՝ **82 օրենսդրական նախաձեռնությունների փաթեթների, կառավարության որոշումների 92, ՀՀ վարչապետի և հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների որոշումների և այլ իրավական ակտերի 23 նախագծեր**, որոնց վերաբերյալ Դատախազության դիրքորոշումները սահմանված կարգով ուղարկվել են համապատասխան պետական մարմիններին:

Հաշվետու ժամանակահատվածում Դատախազությունն ակտիվորեն ներգրավված է եղել «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին», «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2022-2024 թվականների ազգային ռազմավարության», «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2023-2025 թվականների Գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ ոստիկանության զարգացման 2020-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումներից բխող՝ Դատախազության մասնակցությունը նախատեսող գործողությունների կատարմանը: Իրավասու պետական մարմիններ են ներկայացվել նաև հիշյալ ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները:

Հաշվետու ժամանակահատվածում տարբեր պետական մարմիններին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին տրամադրվել է **72** վերլուծական բնույթի տեղեկություն:

Մասնավորապես՝ տեղեկատվություն է ներկայացվել՝

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի հինգերորդ պիլոտային զեկույցի նախագծի նախապատրաստման նպատակով ներկայացված հարցադրումների վերաբերյալ,
- ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) կողմից Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի (UNCAC) վերանայման մեխանիզմի արդյունավետության վերաբերյալ,
- ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC)-ի կողմից ներկայացված ֆինանսական և աուդիտորական վերահսկողության, պետական գնումների գործընթացի առնչությամբ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցադրումների վերաբերյալ,
- ԳՐԵԿՈ-ի հինգերորդ փուլի գնահատման շրջանակներում՝ «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կենտրոնական մարմիններում (բարձրագույն գործադիր մարմիններում) և իրավապահ մարմիններում» խորագրով հարցաշարի վերաբերյալ,
- «Ահաբեկչության և ծայրահեղականության այլ բռնի դրսևորումների դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների 2023 թվականի իրավիճակի մասին հարցաշարի վերաբերյալ,
- Գենդերով պայմանավորված սպանությունների հետաքննությանը, փաստահավաքմանը և կանխարգելմանը վերաբերող՝ արտադատական, ամփոփ կամ կամայական մահապատժի հարցերով Հատուկ զեկուցողի գրասենյակից ստացված հարցաշարի վերաբերյալ,
- Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների Թմրամիջոցների դեմ պայքարի ազգային իրավապահ մարմինների ղեկավարների (HONLAP) 45-րդ հանդիպման հարցաշարի վերաբերյալ,
- Եվրոպայի խորհրդի Ահաբեկչության դեմ պայքարի հարցերով համակարգող կոմիտեի (CDCT) 10-րդ նիստի ընթացքում ընդունված՝ ահաբեկչական հանցագործությունների հետ, կապված հակամարտության գոտիներում հավաքագրված տեղեկության՝ որպես

ապացույց, քրեական դատավարությունում օգտագործման մասին հարցաշարի վերաբերյալ,

- ԵՄ և ԵԽ կողմից համատեղ իրականացվող CyberEast ծրագրի ղեկավար կոմիտեից ստացված հարցաշարի վերաբերյալ,
- Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից Հայաստանի Հանրապետությանն առաջադրված՝ արդարադատության համակարգի գնահատմանը վերաբերող հարցադրումներին ներկայացված պատասխանների հիման վրա հանձնաժողովի կողմից ուղարկված լրացուցիչ հարցադրումների վերաբերյալ,
- ԱՄՆ պետդեպարտամենտի 2023 թվականի մարդու իրավունքների և կրոնական ազատությունների մասին ամենամյա զեկույցի պատրաստման համար,
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ատելության հողի վրա կատարված հանցագործությունների վերաբերյալ հարցաշարի կապակցությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային-իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակ ներկայացվել է դիրքորոշում Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված **19 գանգատներով**:

Դիրքորոշումները հիմնականում վերաբերել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով (կյանքի իրավունք), 3-րդ հոդվածով (խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելք), 5-րդ հոդվածով (ազատության և անձեռնմխելիության իրավունք) և 6-րդ հոդվածով (արդար դատաքննության իրավունք) ներկայացված գանգատներին:

Հաշվետու ժամանակահատվածում համագործակցություն է իրականացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ: Մասնավորապես՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված՝ անձանց քրեական հետապնդման ենթարկված լինելու, վերջիններիս ներկայացրած հայտարարագրերը քրեական գործերով ապացույց հանդիսանալու կամ Դատախազությունում կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հարցումներին ի պատասխան՝ տեղեկատվություն է տրամադրվել շուրջ 1496 անձի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 43 ուսումնասիրություն՝ 49 դատախազի նկատմամբ:

Ուսումնասիրություն իրականացնելու համար հիմք է հանդիսացել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում թույլ տրված առերևույթ թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների առերևույթ խախտումները:

Վերոհիշյալ ուսումնասիրություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների դիմում-բողոքները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով **7 դեպքով՝ 8 դատախազի** կողմից թույլ տրված վարքագծի կանոնների և ծառայողական պարտականությունների խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի կամ ոլորտը համակարգող՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, **28 դեպքով՝ 30 դատախազի** նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել: **2 դեպքով՝ 2 դատախազի** նկատմամբ ծառայողական քննությունը դադարեցվել է, քանի որ վերջիններս ազատվել են զբաղեցրած պաշտոնից՝ սեփական դիմումի համաձայն: **1 դեպքով՝ 1 դատախազի** նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել չհարուցել կարգապահական վարույթ: **1 դեպքով՝ 2 դատախազի** նկատմամբ իրականացվող ուսումնասիրությունը 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս ավարտված չի եղել:

5 դեպքով՝ 6 դատախազի նկատմամբ, ուսումնասիրության արդյունքում, հարուցվել են կարգապահական վարույթներ, իսկ **3 դեպքով՝ 3 դատախազի** նկատմամբ, առանց ուսումնասիրության, հարուցվել են կարգապահական վարույթներ:

Իրականացվել է **8 կարգապահական վարույթ՝ 9 դատախազի նկատմամբ (1 կարգապահական վարույթ իրականացվել է 2 դատախազի նկատմամբ):**

Իրականացված կարգապահական վարույթների արդյունքներով 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի տույժ, 4 դատախազ ազատվել են կարգապահական տույժից, 1 դատախազի կողմից թույլ տրված խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցությունում:

3 կարգապահական վարույթ 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս ավարտված չեն եղել:

10

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Հայաստանի Հանրապետության դատախազությունում 2024 թվականին քաղաքացիներից ստացվել է 14.000 դիմում-բողոք[17] (2023 թվականին՝ 13.705): Ստացված դիմումների թիվն ավելացել է 295-ով կամ 2.2%-ով:

Դիմումներից 2627-ը եղել է կրկնակի, 1578-ը բավարարվել է (2023 թվականին՝ 1767), 3412-ին տրվել է պարզաբանում (2023 թվականին՝ 3597), 1713-ը մերժվել է (2023 թվականին՝ 1635), 399-ը թողնվել է անհետևանք (2023 թվականին՝ 168), 17-ը վերադարձվել է դիմումատուին (2023 թվականին՝ 2), 32 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է (2023 թվականին՝ 24), 130 դիմումի քննարկում մնացել է անավարտ (2023 թվականին՝ 59), 6656 դիմում ուղարկվել է այլ մարմին՝ ընթացքը լուծելու համար (2023 թվականին՝ 6307), 63 դիմումի քննարկման արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ (2023 թվականին՝ 146):



17. Ներառված չէ Զինվորական դատախազությանն ուղղված դիմումների թիվը:

2024 թվականին ստացված դիմում-բողոքներից 3258-ը վերաբերել է սեփականության դեմ ուղղված հանցագործություններին, 2683-ը՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններին, 2580-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործություններին, 1529-ը՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններին, 696-ը՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին, 292-ը՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություններին և այլն:



Սեփականության դեմ ուղղված հանցագործություն	Մարդու դեմ ուղղված հանցագործություն	Ընդհանուր բնույթի հանցագործություն	Կոռուպցիոն բնույթի հանցագործություն	Տնտեսական գործունեության դեմ հանցագործություն	Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություն
3258	2683	2580	1529	696	292

2024 թվականին դատախազությունում կազմակերպվել է 1919 ընդունելություն (2023 թվականին՝ 1656): **Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիների ընդունելությունների թիվն ավելացել է 263-ով կամ 15.9%-ով:**

Դատախազության հանրային կապերի բաժինը 2024 թվականին շարունակել է ապահովել Դատախազության միջոցառումների լուսաբանման, տեսանկարահանման ու լուսանկարահանման, պաշտոնական կայքի՝ www.prosecutor.am-ի սպասարկման աշխատանքները՝ մասնավորապես, մամուլի հաղորդագրությունների, դրանց թարգմանությունների, տեղեկատվական բազայի թարմացումը, ինչպես նաև՝ իրավական ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ է ներկայացրել զանգվածային լրատվության միջոցներին, իրականացրել է 166 էլեկտրոնային մամուլի (կայքերի) և 14 հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների մշտադիտարկում:

Հանրային կապերի բաժինը 2024 թվականին Դատախազության պաշտոնական էլեկտրոնային փոստով՝ info@prosecutor.am-ով, ստացել է **3107** դիմում-գրություն, **138** հրավեր, մշտադիտարկման գործառույթի շրջանակում ընթացք է տվել մամուլի **75** հրապարակման:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ զանգվածային լրատվության միջոցներից ստացված **340** հարցմանը տվել է պատասխաններ:

Դատախազության պաշտոնական կայքէջով հանրությանը հասանելի է դարձել **255** հաղորդագրություն, ապահովել է Դատախազության **89** պաշտոնական հանդիպումների տեսալուսանկարահանման աշխատանքները:

Դատախազների մասնակցությամբ պատրաստվել է **141** տեսանյութ:

Ереван - 2024


Ереван - 202

EUROJUST

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

2024

2024

ՀԱՂՈՐԴՈՒՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ